



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

10973

89159  
hu-97



ՀՐԱԿԻՒՐԱԿ  
ԱՐԱՐԱՏԵԱՆ

ԵՐԿԱՍԻՐՈՂ  
ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ԵՐԿՐՈՂ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՐԱՄԱՆԱ ՀԱՍՏՐԱԿԱՑ ԿՐԹ. ԺՈՂՈՎՈՑ

1. 542 -

9



Կ. ՊՈԼԻ.ԲԱ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

1876

891.542-1  
mu-97

Ա.Վ.Վ.

35



10024  
31836

ՀՐԱՀԻՑԱԿ

ԱՐԱՐԱՏԵԱՆ

15800-58

32055-4 h

891.99  
m-99

ՀԱՅԱՍՏԱՆԻ

# ՀՐԱՄԻՒԹԱԿ

Ա. Ր Ա. Ր Ա. Տ Ե Ա. Կ

ԵՐԿԱՍԻՐՈՂ ԵՒ ՅՈՐԻՆՈՂ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՀԵՏԵՒՈՂ

ԲԵԼԻ ՀԱՅԱԿԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԻ ՏԱՂԱԶՄԱԳԻԹԵԱՆ

ՆԱԽՆԵԱՑ

ԿՐԿԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԸՆՁԱՑԵՑԱԿ Ի ԼՈՅ

ՇՆՈՐՀԻԿ

ԱԶՆԱԽԱՄԵՆՄԱՐ ՅԱԿՈԲ ԷՎՀԱՏԻԿ

ՆՈՐԱՑՈՒՆԿԵԱՆ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏԵՏԵՍԵԱՆ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՊԱՀԱՀ ԳԱԲՈՒ ԷՍԱՏ ՔՖԵՆՏԻ ԽԱՆ; ԹԻՒ 13

1876




Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
Տ . Տ . ԳԵՂՈՐԴԱՅ Դ . ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՈՐ Ի Ա . ԷԶՄԻԱԾԻՆ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱԼԵՄԻ  
Տ . ԵՍԱՅԵԱՅ ՄՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԵՄ  
Տ . ՆԵՐՍԻԿԻ ՄՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

2003 ԵՀԿ



## ԱՆՄՈՌԱՅ ԱՆՈՒԱՆԴ

## ԵՒՐԵԿԱՆԻԴՐ ԲԱԴՏԱԿ

**ԶԱՅՈՒ ՎԵՐՏԱՆՈ-ՈՒԹԵԱՆ ՄԱՀԱՐՁԱՆ  
ԿԱՆԳՆԵ ԹԵԶ ՀԱՅԵՐԻԿ**

ՀՕԳԻԴ ՑԵՐԿՎԻՆ ԼՈՒԽՑԵ


ՀՐԱՒԲԱԿԻՆ ԵՐԵ

**ԵՒ ԱՃԻԽՆԱՑԵԱԼ ՈՍԿԵՐՔԴ ՑԵՐԿՐԻ  
ՈՒՌՃԱՍՑԻՆ Ի ՇԵՐՄԻԴ**

## ՊԱՏԱՆԻՔ ՀԱՅՈՑ

## ՑՈՐՑԱՓ ԸՆԹԵՌՆՈՒԽՔ

**ԶԱՅՈՒ ԻՄ ՄԵՏԱԽՈՍ ԱՐՁԱՆԱԳԻՐ  
ՑԻՇԵՑԼՔ ԶԲԱԴՑԻԿ**



ԱԿԴԵՐՁ

## U. S. VETERANS

## ՅԱԿՈԲ ԷՖԻԿՆԵՏԻ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Գիտեմ զքեզ որդեսէր գորովասիրտ հայր  
ես, մի՛ արտասուեր եթէ զանցելոյն վիշտ և յի-  
շատակ քեզ ի յուշ բերեմ:

Քանի՞ ամք անցին ի վերայ , ես չդիտեմ . և դու  
հայր գոլով յիշե՞ս անշուշտ զրդեակն քո բաղ-  
տիկ . այն որ բողբոջեցաւ ի դարաստան Նորա-  
տունկեան դերդաստանիդ որպէս ծաղիկն ի հով-  
տին . միտք և ողին զարդանալսվ այն ինչ յա-  
ռաջադիմէր ի լւաւագոյն ապագայն , աւա՛ղ , շյտ  
փշեաց անդէն մահուն դատունաշունչ խորչակ .  
խամրեցաւ քոյդ բաղդիկ . մինչդեռ կերանք նորա  
նոր կանաչատերեւ զարդարէր՝ թօթափեցաւ ի  
դերեզմանին գուրք : Եւ դու ի շիրիմ այնպիսում  
արժանաւոր որդեկիդ դի՞նչ յիշատակարան կանգ-  
նեցեր . ի մարմարիոն քարանց զանխօս արձա՞ն  
մի և եթ : Այդ չէ բաւական . զբաղտիկն ի դե-  
րեզմանս մեռելոց սոսկ անշարժ դերեզմանաքա-  
րի՞ւ մի յիշատակել : Այլ պիտոյ է նմա ոգեւոր  
և թեւաւոր զայս իմ երդոց արձան դրոշմել , որ

զյիշատակ ցանկալի անուան նորա՝ թռուցեալ  
տարցէ ի հայրենիս , որոյ անձկաւ և կարօտով  
մեռաւ քրյդ բաղտիկ :

Դու նորա հայրն էիր և նա քո սիրական դա-  
ւակն էր , այլ քննեցե՞ր և շօշակեցե՞ր զոդի և  
սիրտ նորա թէ զի՞նչ կայր ի նմա թագուն և  
զի՞նչ կրէր յապաժոյժ եռանդէն , Զարմանա՞ս  
արդեօք եթէ ասեմ թէ քան զքեզ քաջ ծանեայ  
զնորա ոգւոյն պատկեր , որ միշտ երեւութանայր  
ինձ , յորում գոդ թէ ոսկեդրեալ էին այս եր-  
կու բարձրանշան բանք . ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ և  
ՀԱՅՐԵՆԻՔ : Բաղտիկն կորուսեալ հայրենեաց մե-  
րոց սիրահար հոգին էր . անզուսպ երեւակայու-  
թեան թռիչ մտաց տանէր զինքն ի Շաւարշանայ  
դաշտն , և անդանօր ընդ յառաջադէմն Գարեգ-  
նին զինուորիլ և չահատակիլ կամէր :

Ես տեսի զնա , ո՞հ , ի նոյն իսկ յիւր տագ-  
նապին . նա մոռանայր զցաւ ոտին վարակեալ ,  
խօսէր և հարցանէր զողջունէ Հայոց աշխարհին ,  
թէ ե՞րբ շինեսցի միւսանդամ անդրէն աւերակ  
տունն Հայկայ , և խոնարհեալ , ստրկացեալն Մասիս  
բարձրասցի՞ արդեօք յաղատութիւն փառաց :

Հանդի՞ր ի հող և յանոյշ քուն , սիրելի բաղ-  
տիկ , երազդ կարի յոյժ վաղ էր և կանուխ . դու  
այժմիկ յուսով ննջեա' ի տապանիդ ծոց . գերեզ-  
մանիդ պահապան հրեշտակ թող ձայն տայցէ  
քեզ , և դու զարթի՞ր ի փրկութեան աւուրն մինչ  
ողջոյն որդիք Հայոց կրեն զոդին այն վաեմագոյն ,  
որում դու զինուոր գրեցար և մեռար :

## ԱՌ ՄԱՆԿՏԻՆ ՀԱՅՈՅ

Զին վաստակ երգոյս Հրաւիրակ Արարատեան  
կրկնակի տպագրութեամբ ի լցո ածեալ ըզձամ նուի-  
րել ձեզ , որդիք Հայոց , որոյ առաջին տպագրութեան  
օրինակքն ի վաղուց անտի սպառեալ էին : Հին սերունդ  
մանկտին կարդաց զայն և առ վայր մի անձկանօք որտի  
և ոգեթուիչ երեւակայութեամբ իրը ի քուն երազաշրջիկ  
գնաց ի Հայրենիս . ետես զդրախտն Ադամայ . եմուտ ի  
նա . հոգին հրճուեցաւ այլ ևս չելանել անտի . ո՞հ , զար-  
թեաւ և ահա երազ էր . գարձեալ ետես զինքն ի տա-  
րաբաղդ նժդեհութեան , հառաչեաց և յանձկութիւնն  
մաշեցաւ , և ծերացաւ իրեւ զիս . շիջաւ անդէն ման-  
կական ոգւոյն խանդն և եռանդ :

Իսկ դուք , նոր սերունդք Հայոց , որ անձկանօք որու-  
նէք զՀրաւիրակն և դժուարիք գտանել զայն , ահաւասիկ  
Արծուին ծերացեալ , առ սէր ձեր հոգւով մանկանայ ,  
կրկն վերաթեէ , տանի ածէ զձեզ անդ , ուր Հայրենիքն  
է ձեր և մայրենի գրկարանին խանճարուք :

Թէպէտ իրեւ երեկոյեան մշակ խոնջեալ և վաստա-  
կեալ կամ , առ վատին պլուութիւն սիրեմ , չկամիմ բա-  
նալ զբերան և ոչ զգրիչ ի յերդ . . . այլ քո և Հայրե-  
նեաց սէր մոռանալ տայ ինձ զամենայն . վասն այն ե-  
տու զանձն իմ ի կրկին աշխատութիւն . և ի սոյն յերկ-  
րորդում ապագրութեանս զառաջին բնագիր օրինակն  
վերստին ուշադրապէս վերծանելով՝ ի բազում ուրեք յա-  
ւելումն և փոփոխութիւնն արարի թէ յաղագս վայելուչ  
ներդաշնակութեանն և թէ յարմարագոյն նոր իմաստո  
տալով բանիցն , զոր պահանջէր նիւթն և եռանդն երկա-  
սիրովիս . ջան եղեալ՝ միշտ սիրելի և ախորժելի առնել  
զայն երգասէր մանկտւոյդ լսելեաց :

Նոր աշխատութեամբ յաւելաք նաև ի վերայ Չորրորդ  
նուագին զջինդերորդ նուագ մի ես , հրաւիրելով զմանկ-  
տին ի վասպուրականէն՝ յաշխարհ Մշոյ և Տարօնոյ ,  
յաշխարհն քաջաց Մամիկոնեանց՝ ի քաջէն մերմէ Տըր-  
դատայ պարգեեալ Հայրենիս . ուր ի սէր սուրբ Կրօնի  
և վասն Եկեղեցւոյ պաշտպանութեան և Հայրենի ազա-  
տութեան գեր ի վերոյ հանդ յացան արութեամբ Մամ-  
դունի քաջահաւատ իշխանք , ծեր առիւծն Մուշեղ ,  
Գայլ Վահան և կորովին Ամրատ :

Այլ չգիտեմ զջինդերորդ նուագս այս կարացի՞ ի  
նոյն խանդ , ի նոյն ոգի և ի նոյն սիրտ բանաստեղծել ,  
որպիսեօք յառաջ քան զքսան և հինգ ամ , մինչ կեանքն  
իմ գարուն էր և խանդ ոգւոյս ի բնութենէ յերգ վա-  
սէր : Ասեն թէ վարդեստանին սոխակն ի գարնան և եթ-  
երդէ զիւր դայլայիկն , և յամարան փակէ զլեզուն :

Աւա՛զ , անցաւ գարուն Հրաւիրակ երդովիս . փոքր  
միւս ես , և ահա ամնարան կեանքն ևս անցանէ և գայ  
աշուն տերևաթափին ժամանակ , յորում այլ ևս չմնայ  
ինձ երգ յաշխարհի աստ , այլ մնայ ինձ անմոհութեան  
հաւատով արժանի վնել և երդել անդ , ուր հոգիք հան-  
գուցեալ մեր սուրբ Հարց երդեն և օրհնեն զԱստուած :

Բայց թէ ի սէր ձեր , և թէ ի սէր Հայրենեաց , մանկ-  
տի Հայոց , տակաւին երդել սիրեմ . տակաւին յիս ար-  
ծարծի մոխրամած սրտիս կայծ , որ մերթ ընդ մերթ-  
բացավառէ զոդիս՝ որպիսեօք երկրիս կեդրոնական հուրն  
գլեսուլ :

Վա՛շ , Հայոց մեծամեծ լերանց կին հրաբորոք շար-  
ժումն արդ դադարեալ և չիջեալ է . ոչ վեհն Մասիս  
միսայ , ոչ ծերն Արագած հրավառի . ո՛հ , միթէ ընդ այս  
Հայրենի լերանց՝ չիջա՞ւ նաև հուրն Հայոց , թէ առ մոխ-  
րով ծածկի և պահի . ո՛ կարիցէ փչել և վառել անդրէն  
զառ ի վաղուց մոխրացեալ կրակն :

Առ այդ բանաստեղծից շունչ պէտք են . բանաստեղ-  
ծից շունչ , որ դհուր հայրենասիրութեան թերես բոր-  
բռքեսցէ հրաշիւք ի սառուցեալ սիրտ Հայոց :

Առէք , մանկունք , զայդ շունչ . շնչեցէք , մանկունք ,  
զայդ շունչ . այդ շունչն է միայն որ կարող է անդրէն  
շնչաւորել և նոր կենդանութիւն շնչել Հայոց մեռեալ  
աշխարհին , Հայոց ցամաքեալ և չորացեալ ոսկերաց ,  
որ ցան և ցիր սփուեալ կան ի Հայրենիս և յօտարավայր  
աշխարհս :

Աստուած հրաշագործ , Աստուած մեռելոց և կեն-  
դանեաց , հարցանես արդեօք որպիս երբեմն առ Եզե-  
կիէլ մտերմօրէն հարցափորձ լինէիր . իցէ՞ թէ անդրէն  
կենդանասցին ոսկերը Հայոց :

Առ այդ ես ոչինչ գիտեմ տալ քեզ պատասխանի ,  
միայն զնոյն բան մարդարէին կրկնեմ . « Տէ՛ր , Տէ՛ր , դու-  
դիւես » : Այլ հաւատամ , Տէ՛ր , քո ամենակրաշ զօրու-  
թեան . զի դու ես և դու իսկ էիր որ յերկնուստ և ի  
ծագաց երկրի շնչելով՝ յաշուցեր զբարիլունեան դաշ-  
տին խոնեալ և ցամաքեալ զոսկերս , որով զյուսահատ  
իսրայէլի զդերեվարեալ ժողովուրդ յուսով զօրացուցեր .  
հաւատամ , Տէ՛ր , և ոչ երբէք երկուանամ , թէ դու դիւ-  
տես ի կենդանութիւն հանել զհազարամեայ մեռելոց  
զսակերս :

Հաւատած դու , ո՛վ Հայկայ տուն , թէ որպիս թե-  
րահաւատն այն իսրայէլ , տրտնջանաց բանս խօսիս առ  
Բարձրեալն թէ « Հատաւ յոյս մեր և մեռաք » : Ո՛չ ,  
թէև ասեն զքէն արդ օտարք և օտարասէր որդիք թէ մե-  
ռեալ ես և ոսկերքդ ընդ ամենայն աշխարհ սփուեալ կան ,  
և աշխարհ ողջոյն զքեզ ի մեռեալ համարի , բաւ է թէ  
կենդանաստուն Աստուած ի վերայ գերեզմանիդ կացեալ  
զքեզ ի նոր կեանս կոչեսցէ , և դու յայնժամ իրրե ըլ-  
Հազարոսն այն լուծցիս ի կապանացդ . զի շատ եղեւ քեզ  
կալ ի գերեզմանս անդպայտութեան և տառապանաց :

Հաւատած դուք , մանկունք Հայոց , թէ Հայք ի մե-  
ռելոց յարիցեն , կամ Փիւնիկն ի մոխրոց վերածնցի և  
Արծիւն նորափեառը զարդաբնցի : Այո՛ , այդ նորահրաշ  
կեանք անյուսոց դժուարին թուի , այլ յուսացելոց ա-  
մենայն ինչ հաւատը է :

Ուրեմն հաւատացուք և հաւատով գործեսցուք . զի հաւատք սոսկ ինքնին ոչինչ են . գործն է որ պատկէ զհաւատն : Եւ զի՞նչ է Հայոց գործ . ահաւասիկ այսոքիկ են . դպրոց , լըս , կրթութիւն , մոտաւորական մշակութիւն , ընտանեկան դաստիարակութիւն , բնիկ Հայրենի երկրին և հողոյն մշակութիւն , արուեստ , վաճառականութիւն , և այլն :

Այսոքիկ են ահա նորոյ աշխարհի Հայրենասիրութեան գործք և հաստատուն քարինք , որովք միայն պարտ է դնել զհիմն նորաշն Հայրենեաց , զի մնացէ անշարժ :

Քանզի անցին գնացին այն դարք , յորում ազգք և ազինք աշխարհիս զինուց բռնութեամբ և ժողովրդոց արեամբ հիմնէին զՀայրենիս . առանց օրինաց և իրաւանց տիրապետել ջանային : Քանդեցան և քանդեցին ի վերայ աշխարհիս այն ամենայն ազգք և Հայրենիք , որոց շինութեան քարինք՝ մարդկանց դիմակունքն էին , և շաղախ՝ սորկացեալ ժողովրդոց արիւն , զրկանք և անիրաւութիւն :

Օ՛ն ուրեմն , մանկունք Հայոց , եթէ շինել վավիագիք զաւերակ Հայրենիս մեր , կրթութեան լուսով զմիտու և հայրենասիրութեամբ զմիրտս վառելով եցուք արդ ընդձեզի Հայրենիս թուուցեալ ողուզ անձկութեան . և այժմի միայն բաժին է մեզ ողբալ ի վերայ աւերակացն , մինչև հանցէ Աստուած նոր զոմն Զօրաբարէլ Հայոց , որ գերեթարձ արարեալ զբուր տարածմարհիկ գորդիս Հայրենեաց դարձուցէ անդրէն ի տուն Հայկայ հայրենատուր ժառանդութիւն որդւոց հայրենասէր հահապետին մերոյ . հանգիծիք ոուք յայնժամ յերկիրն , որոյ զինն՝ մեր քաջազանց արիւնն է :

Այլ դիտեմ , գաղթական որդիք Հայոց , դուք արդ ըզ հանդիսադտեալ էք յօտար աշխարհի , և հարստութեամբ բազդաւորեալ՝ այլ ևս չիշէք զՀայրենիս . այլ միթէ դուք չամաշչք յետադէմ լինել քան զՀրէական ազգն , որ առ գետս բարելոնի նստեալ ողբային և լիշէին զԵրուասդէմ , և ոչ իսկ ՊԱստութիւն տաճարին օրէ :

Նութիւն անդ նուագել կամէին՝ ակնկալելով այցելութեան Տեան Տեան , զի անդրէն գերեդարձ լինելով՝ զԱստուած ի տաճարի Հայրենեացն օրհնեսցեն :

Գիտեմ նաև դուք արդ յօտարութեան գտեալ զհացձեր , վայելէք աղատապէս և լիապէս . և այլես չեն փոյթձեզ , և ոչ յագուրդ տան ձեզ ոչ Հայրենիք , ոչ Հայրենեաց յիշատակք և ոչ երեակայեալ բանաստեղծութիւնք :

Այլ միթէ առանց տեսանելց զապագայն դեռ հաւատացք դուք թէ կարող էք յօտարութեան ձերում կշտապինդ . և մշտնջենապէս ուտել զհացն օտարութեան , ուր ոչ գոն ձեզ բաժին ափ մի հող և ոչ ևս Շիրակայ դաշտին և Հացեաց գաւառին երկիր ցորենոյ և առատութեան :

Ուստի հաց մեր , դանձ մեր , հարստութիւն մեր , ազատութիւն մեր և կեանք մեր՝ Հայրենիքն է . որ թէպէտ այսօր ճնշեալ , հարստահարեալ և լքեալ է , գայ ժամ և արդէն իսկ մօտալուտ է , յորում անցցին անհետաւուրք տառապանաց և դառնութեան , և յաջորդեսցէ օր բարենշան և ժամանակ այցելութեան : Ընդէ՞ո թերահաւատ լինիք . միթէ յետ դառնաշունչ ձմերան ոչ փոխանակէ զարուն քաղցրաշունչ :

Այլես , մանկունք Հայոց , կնքեմ զիմ բան յորդուրանաց . ես լուսիմ , և մայր Հայաստան՝ Ախոնի մօր դոզր և բերան առեալ կոչեսցէ առ ձեզ :

« Լուարուք , պանդուխտք Ախոնի , զի ած ի վերայ իմ Տէր սուդ մեծ . տեսի զգերութիւն ուստերաց և դստերաց իմոց , զոր ած ի վերայ նոցա Յաւիտենականն . սնուցի զնոսա ուրախութեամբ և յուղարկեցի զնոսա լալով . և սդով : Մի՛ ոք ոտնահար լիզի այրւոյ , որ մնացի միայնացեալ ի բազմաց . թափուր եղէ վասն բազում մեղաց որդւոց իմոց . զի խոտորեցան յօրինացն Աստուծոյ , և զիրաւունս նորա ոչ ծանեան և ոչ գնացին ի ճանապարհս պատուիրանացն Աստուծոյ , և ոչ ի շաւիզս խրատու արդարութեան ելին : Եկեսցեն պանդուխտք Ախոնի , և յիշեսցեն զգերութիւն ուստերաց

Զ

և դստերաց իմոց , զոր ած ի վերայ նոցա Յաւիտենա-  
կանն . ած ի վերայ նոցա ազգ հեռաւոր , ազգ լիրը և  
այլալեզու , որ ոչ ակնածէին ի ծերոյն և ոչ ողորմէին  
տղայոյն . տարան զսիրելիս այրոյս , և ի դստերաց թ-ա-  
փուր արարին զմնացեալս . և ես զի՞նչ էի ձեռնհաս օգ-  
նել ձեզ . որ ած զչարիսն ի վերայ , փրկեսցէ զձեղ ի  
ձեռաց թշնամեաց ձերոց :

« Գնացէք , որդեակը , գնացէք , զի ես մնացի աւերակ .  
մերկացայ զսամունւճան ու բախութեան , և զգեցայ ըզ-  
քուրձ խնդրուածոց իմոց , աղաղակեցի առ Յաւիտենա-  
կանն յաւուրս իմ : »

« Քաջալերացարուք , որդեակը , գոչեցէք առ Աստ-  
ուած և փրկեսցէ զձեղ ի բռնութենէ ձեռաց թշնամեաց .  
զի ես յուսացայ ի Յաւիտենականն վասն փրկութեան  
ձերոյ , և եկն ինձ ուրախութիւն ի Արբոյն ի վերայ ո-  
ղբանութեան , որ եկեսցէ ձեղ ընդ հուսլ ի յաւիտենա-  
կանէ ֆրկչէ ձերմէ . և յուղարկեցի զձեղ սգով և լա-  
լով , և տացէ ինձ Աստուած զձեղ ցնծութեամբ և ու-  
րախութեամբ . . . . . » :

Ընդ վշտահան մօր ողբոյն և դուք , Հայրենեաց պահ-  
դուխտ որդիք , զաղերս Երեմիային ածէք առ Բարձրեալն :

« Յիշեա' , Տէր , որ ինչ անցք անցին ընդ մեղ . նայեա'ց  
և տես զնախատինս մեր : Ժառանգութիւն մեր դար-  
ձաւ յօտարութիւն , և բնակութիւն մեր ի նժդեհու-  
թիւն : Որբ մնացաք մեք և ոչ գոյր մեր հայր . մարք  
մեր իբրև այրիք ի ժամանակաց մերոց . . . . . » :

« Եւ դու , Տէր , յաւիտեան կաս . և աթոռ քո ազգէ  
մինչև յազգ : Ընդէ՞ր մինչև խսպառ մոռացար զմեղ . հա-  
րեր , թողեր և լքցե՞ս զմեղ մինչև յերկար ժամանակս :

« Դարձո՛ զմեղ , Տէր , և դարձցուք . նորողեա' զմեղ  
Տէր , իբրև զաւուրսն զառաջինս . զի մերժելով մերժ-  
ցեր զմեղ . բարկացաւ սրտմտութիւն բարկութեան քո  
ի վերայ մեր մինչև խսպառ » :

## Ն ՈՒ Ա Գ

## Ա Ռ Ա Զ Ի Ն



Ն Ա Խ Ա Դ Ր Ո Ւ Ի Թ Ի Ի Ն

Ա Ռ Ա Զ Ի Ն Ն ՈՒ Ա Գ Ի Ն

Յառաջին մասին այսմիկ՝ հրաւիրէ զմանկտին  
նախ ի դրախտն , և անդուստ հանեալ շրջեցու-  
ցանէ զվայրօք պանդխտութեան նախաստեղծիցն  
և որդւոց նոցին կայենի և Արէլի: Ածէ ապա յԱյ-  
րարատ , և առ եղերը Երասխայ գետոյն ճեմե-  
ցուցեալ սակաւ ինչ՝ դարձուցանէ ի դաշտու և յան-  
մակ արտորայս և ի դաշտախիլ այդիս և բուրաս-  
տանս ծաղկոցաց . հանէ ապա ի լերինս Այրարա-  
տու , և տանի յետոյ ի Մասեաց ոտս . յորում և  
նկարագրութիւն շարժմամբ կործանելոյ Ակոռւոյ  
գեղջն , և դրուատ ոսկեղէն գարուն նոյի :

Ա. Ո. քեզ ովայրիացեալ , առ մայրըդ մեր հէք չայաստան ,  
Հրաւիրեմ ըզքոյդ մանկափն որ ի գըրկէդ կան հեռացեալ .  
Գիտեմ որ չո'տկարօտով ես , գու մայր անբախտորդէկորոյս ,  
Փարէլի դիմաց նոցին մնացեալ կարօտ քո հազար ամ ,  
Եւ քան ըզքեղ կաթոդին քեզ կարօտին և քո մանկունք ,  
Ոյք ահա թէ ոչ ոտիկք գէթ անձկայրեաց սըրտին սիրով ,  
Գալ ճեմել ի հայրենւոցդ վայր տարփատենչ և վայելուչ ,  
Եբը ի վարձու զիս գրաւեցին լինել նոցա ինձ առաջնորդ :  
Ա. Յ. լի՞արդ ի հեռուստ ես կարացից զիտել ըզքեղ ,  
Որ յիմյս աւասիկ ծածկիս աչացս անտեսութեամի .  
Կամ զի՞ հնար է ճեմել ինձ ի ցանկափ վայրըդ համայն ,  
Մինչ և ես իրուու զնոսին ի քո ծոցոյդ զրկեալ կամ այժմ :

Հընչեցէք ապա հողմունք որպէս նոյեան անդ ի դարուն ,  
Զիս ի թէւս տուեալ տարայք ի յԱյրարատ իմ հայրենին ,  
Եւ ընդ իս թէւօք սըրտից թռուցեալ եկայք , ո' Հայկազունք .  
Եկայք , տան թորդումայ . ո'վ տարագոյն զարմք և զաւակք ,  
Որ ընդ ոլորտս աշխարհի կայք տարածեալ դըմբախտարար :  
Ա. հա զձեղ հրաւիրեալ տանիմ այսու ի հայրենին ,  
Ումսրոտիւ կարօտագոյն տարփայք յաւէտ դուք ի բացուստ 1 :

Կամիմ ըզձեղ , նախ , մանկունք , ածել ի վայրըն հրաշարեր  
ի դրախտն Աղենական , զոր տընկեցին Արարշն ճեռք ,  
Մարդոյն առաջնաստեղծ չնորհեալ վիճակ ամենազուարձ :

Արդ մըսէ՛ք համարձակ դրախտիս ընդ դուռն անպահապան  
Ճեմեցէք նախարքային ի յարքունիս արարչակերտ .  
Ուր ի գահ դերամբարձ բազմէր Աղամ շքեզակերպ ,  
Ուր ճեմէր ճոխ փառաւոր ընդ դըշխոյին տմենագեղ :  
Զի՞նչ հրճնուանս կրէին ի միրտ մինչ նոր չքնաղ էր վայր սորին  
Երկոքին սիրահարուստ Աստուածազոյդ պըսակաւորք ,  
Ընդ ծառովք տիրատունկ և աղբերօք հեղահոսան ,  
Վարելով զիեանս անմեղ զուարձանային փոփոխ սիրով :  
Դարձնթաց առ նոքօք հոյլք անասնոց միշտ անփախուստ ,  
Եւ գազանք ամեհիք համբուրասէր էին բնութեամբ .  
Եւ հուպ եկեալ քըծնէին ընտաներար նոցին զոտիւք :  
Ոչ եղերուն սըրընթաց խընդրէր զբարձունս ազատ լերանց ,  
Ոչ երկոտըն նապաստակ գընայր թաքչէր ի սորս վիմաց ,  
Ոչ ի թուիչս խուճապէին և օդ ապար երամք հաւուց :  
Ե՞րբ էր այս , յայնժամ , մանկունք , մինչ ըզվեհին

պատուիրանօք

Զեւ էին անցեալ նոքին մերձեալ ի ծառըն մահածու :  
Իսկ յորժամ անցին օծիւն , անցին անդէն և անասունքն ,  
Որ իրբւ զգառն էին հեղ , եղեն անսաստ և անողոք :  
Եւ ընդ նոցին մերկանալն ի լուսանիւթ պատմուճանէն  
Մերկացաւ ընդ նոսին շոյտ և դրախտ նոցուն

այս հրաշատունկ ,

Զի ոյց վասն էր զարդարեալ նոքին յիւրմէն վըտարեցան :  
Սակայն ոչ կորոյս իսպառ դիւր առաջին վայելչութիւնսն ,  
Այսր են այժմ քառավտակ մըշտահոսան գետք յորդարում ,  
Նկրատ , Տիգրիս , Փիսոն , Գեհոն , որ գնան ի մէջ

Հայաստանեայց :

Աստ բղսին Բիւրակնեան այն բարեհամ և սառն աղբիւրք ,  
Ընդմարմանդ մարդագետինս խալան դընան մանուածաւալ .  
Աստ և ծաղկունք բիւրազան բանին դեղով գունակ դունակ  
Զհոտ բուրեալանմահութեան տան ըզմայլի ճեմողին այսր :  
Զմայլեցարուք և դուք ևս որ աստ ճեմիք սըրտին ոտիւք .  
Եւ քաղեալփունջ կապեցէք ի զուարթծաղկանց անուշահոտ .  
Երբ դառնայք ի ճեր աշխարհ ընծայ տարջիք

Դրախտիս պարդւ :

Նա ցըրափն և քաղցրահոս յաղբերակացդ առեալ զջուր  
Ըմպեցէք փափագանօք , ճեր զովասցի սըրտից պասուք .  
Ծըծեցէք սիք անուշակ դոր ճեղ շընչեն Հայոց լերինք .  
Յերակունըս խալայցեն թեթեւ օդոցըն քաղցրութիւնք ,  
Որովդէֆ ի սիրտըս ճեր դիւրըզդայցէք զհայրենւոյն սէր 2 :

Յաղենեան դարստանէն ելէք , մանկունք , և արտաքոյ  
Առ դրախտիւըս ճեմեսցուք ի վայր նըդդեհ :

Նախաստեղծիցն ,

Իւր յանմահ կենաց վարեալ վըտարեցան սրով բոցելէն ,  
Յնդ տեղւոյն երանաւէտ՝ փիճակ կալան թշուառութեան :  
Արափսի՛ ողորմ կերպիւ այսըր նորեկ պըսակաւորքն  
Զեռըն միոյն ի ծնօտին միւսոյն ի ծոց ողորմագին  
Առ դրախտին փակեալ դըրան նըստեալ հանդէպ

յոզ և ի կոծ

Լային հառաչելով զտեղլոյն կորուստ երջանկաւէտ :  
Ի յաչաց , որ ոչ երբէք լացեալ էին յանտրտում վայրն ,  
Հոսանք աղի արտասուաց իջանէին ի հող երկիրն .

Ա՛հ , անդրանիկ արտասուք , առհաւատչեայ արտասուելցոց  
Սկիզբն առին յաչաց նոցուն ցօղել յերկիր անիծաբեր :  
Եւ երկիր որ ի յամպոց ըմպէր անձրև զուարթացուցիչ

Եւ չգիտէր յինքն ընդունել զդառըն վիժանս աչաց աղքեր  
Ուսանէր այնուհետեւ և զայն ըմպել իրբւ ըզըուր :  
Զոր ըգինի և տրտմածին զաւակք նոցունց թըշուառական  
Թափելոց էին աստէն պէսպէս վըտաք տաժանացեալ :

Այս երկիր է , ո՛վ մանկունք , զոր մըսակեալ պանդխտելցն  
Ըզպարէն հայթայթէին վաստակարեկ աշխատանօք :

Ոչ գոյր աստ արօր և խոփ երկրագործին դիւրութեան պէտ ,  
Վասն այն լալով ձեռօք , ո՛հ , բրէին զերկիր տատակաբեր  
Խառնելով ըզքրտունս ընդ արտասուս , որ առ յանցմանն :

Այսըր երկունքն անիծից ըմբռնեցին ըզնախամայրն ,  
Եւ ծնաւ նա զանդրանիկն ի մահ կըրսեր հարազատին ,  
Նախանձարեկն ըզկայէն նախկին լացողն ի խանձարուրս :  
Աստ են նորին արիւնոտ այն անդաստանք յորս վաստակէր ,  
Եւ լերինք , ուր ըզիսաշինս իւր արածէր հովիւն Աբէլ :

Մին յերկրին իւրոյ պլատոց հանէր նըւէր Տեառն Աստուծոյ,  
Այլ անհաճոյ գըտանէր վի ոչ ուղիղ բաժանէր մասն .  
Միւսն արդար պատարագիչն անարատ զոհ նըւիրելով  
Համոյանայր ընդունողին և ատելի լինէր եղթօրն .  
Եւ այնու ի մախանաց նենդ ոխացող հարազատին  
Ըստանեալ ի դաշտի աստ անսպարտ արիւն հեղոյր յերկիր ,  
Արիւն՝ որ զգետնոյն հող քըտմնեցոյց անդ զառաջնն ,  
Քանի՛ յայնժամ լոծ և կըսկիծ նոր յաւելոյր ծնողացն ի սիրտ  
Ընդ լինել դիահան սիրեցելոյ որդւոյն անմեղ ,  
Որ անկեալ կայր անշըռունջ արիւնը ուուշտ մըշակին յանդ ,  
Եւ խաշինըըն հովուասէր, ա՛հ, անտերունջ մնացեալ այնպէս  
Զայլէին բառաշելով ըզտորիւք հովուին իւրեանց ,  
Ողբակից լեալ Ադամայ և Եւային եղերամայր :  
Այ անիրաւ երկրագործ , զպասուք երկրիդ ծարաւելոյ  
Յանմեղուկ եղորդդ արիւն դու շիջուցեր ուուդելով ,  
Քեզ միթէ ոչ էր շատ այս յորդագոյն դրախտիս վըտակը .  
Շատ էր երկրիդ , այլ ոչ քո զնախանձ սըրտիդ շիջուցանել :  
Ի միտ առէք աստ , մանկունք , թէ զի՞ բուռն է  
նախանձուն կիրք ,

Կայենին ի սիրտ մուեալ չետ խնայել ի համարիւնն .  
Երկերուք , երկերուք դուք ի նմանէ իրեւ յօձէ ,  
Եւ զգուշացէք փակել միշտ ընդ դէմ նորին զդուռուն սըրտից ,  
Եւ պահապան դի՞ք դուք նըմին զակըն սիրոյն աննիրհելի ,  
Զըտալ մուտ ընդ այն ծածուկ դըժնի օմին սողոսկելոյ  
Ընդ եղորդն և դհոգին ի ներքս անդէն ըսպանանել ,

Պատրաստեալ ելէ՛ք յուղի , արդ ելանելք ի յԱյրարատ  
Ի վիճակ սեպհական Արշակունեաց վեհ արքայից ,  
Դէտակն ի վեր ամբարձէք , հա՛ երեխ Մասեաց գագաթ ,  
Եւ դըմբէթ կաթուղիկէ եկեղեցւոյն երկնահանդէտ ,  
Միոյն ի գլուխ հանդչի տապանն ապրեցուցիչ  
արդար զարմին ,  
իսկ միւսոյն տէրունեան խաչն և ի վերայ խաչեալն Աստուած :  
Մին եհան ի գլուխ լերին անդէն էած յաշարն թշուառ .  
Միւսն ի սուրբ լեառն երկնից յարքայութիւն երանաւէտ .

Էզմիով շընչեն օդոց փըչմունք սաստիկ սառեցուցիչք ,  
Էզմիւսովըն հրացուցիչ հողմունք հովայն քաղցրահոսան :  
Խնձ աստանօր չէ ի դէպ զտապան ըզմեկ կաթուղիկէն .  
Այսպիսեաւ համեմատեալ գերագունին յաւելուլ փառու Յ :  
ՅԱյրարատհասիք ահա , մի՛ մնայք մանկունք հրաւիրողիս .  
Դուք ձեզին ձեմեցարուք ի վայր սորին չընաշխարհիկ ,  
Որ պարծի քան զայլ գաւառս գոլ գեղեցիկ ի Հայաստան .  
Դիւր դաշտօքլայնատարած , լերամբք պատեալ գեղեցկաշար  
Ուոպէս այդի վայելուչ ցանկափակեալ չուրջանակի :  
Ի լերանց ազբիւրարուխ յորդ վլտակունք յամէն կողմանց  
Եղանեն միւր դաշտորայս արբուցանեն ըզդալարիս :  
Թողում ըզդետըն Երասխ , որ դնայ ընդ մէջ ծովածաւալ  
Մեծամեծ բաշխեալ զառուսն ջրասուն առնէ մըշակեալ վայրս  
Զայգիս և զրուրաստանս անդս և ածուս րըրընձարեր  
Որ սիրէ զամումն ի ջուրս իրուու զեղեղըն ճահճասէր :  
Նաև շատ բամբակենիս որ գովելին է յերկրին բերս ,  
Ոչ միայն Հայոց մանկաւոյն բաւեալ ի զգետըն փափկանիւրիթ  
Այլ և այլում աշխարհաց տանէր վաճառ ուշտերամօք ։  
Զայսպիսի քաջարերուն և արդաւանդ զերկիր թողուլ  
Հառաչէր ցաւադին և լայր Արշակն Հայոց արքայն  
Մինչ թողոյր այլում և գնայր ըզհայրենի ժառանդութիւն :

Առ եղերօք Երասմսայ ձեմեալ մանկունք յուշիկ յուշիկ  
Տեսէք պէսպէս ձըկունս համեղութեամբք զանազանեալ ,  
Որ կայտիս ածեալ խաղան . ոչ ըմբռնէ զնոսին ուռկան ,  
Զի ցանցորդք ուռկանաւորք , ո՛հ , սուդ առին և յԱյրարատ  
Որպիսեօք ի Հրէտաստան ըստ նախաճայն գուշակողին :  
Տեսէք և ջրասուզակ մամռախընդիր ըզմեծ թըրչունս  
Ծզկարապն անուշաճայն , սագ և ըզբադըն պարարուն ,  
Եւ այլոց պէսպէս հաւուց հոյլը շնորհեալ մարդկան ի կեր ,  
Որ ի լուզ խաղան ի ջուրս . ո՛հ , որսականք պակասեցան :  
Ով թըրչունք , դուք որ ի խաղ գետոյս ի մէջ

Խուռան եղեդանց  
Յծէիք ըզմուս բազում հանել ըզձափս և բազմանալ .  
Գեղուկ մայրըն մանկասէր գայր ժողովէր տանէր ըզձուս ,

Եւձըւազեղիւրեփիկշյուպատրաստէր մանրիկ մանկտւոյն  
Այժմիկ ածէք ածէք և համարձակ հանէք ըզձադու,  
Աւանիկ ոչ գեղանք ոչ շինականք են շուրջ ըզձեօք  
Եւ ոչ մայր մանկան ի տած արդ ելանէ խընդրել ըզձուս :  
Ո՛հ, նոքին առհասարակ սրով թընամույն ըսպառեցան,  
Փոխանակ զի ոչ գնային ըստ հրամանին Տեառն Աստուծոյ :  
Որով արդ իրրու ըզձեղ, որ բազմանայք ձադըս հանեալ,  
Եւ նոքա մանկունս ծընեալ բազմանային

Տեառն օրհնութեամբ :

Յափանց գետոյս, ո'վ մանկունք, դարձէք այժմիկ  
ի դաշտորայս  
Իմէջ խոտոց ուռոճազարդ ձեմ առէք դուք զուարձանալով,  
Տեսէք զի՞ գեղ դալարօք և այլ բուսովք ամենազան  
Զարդարեալ են գեղեցիկ երեսք դաշտաց Այրարատայ :

Աստանօր բուսանին արմատք բուսոց եղեգնասեր .  
Յոյց ազնիւ կարմիր որդան ծնանին որդունք մանրատեսակ,

Միայնում գաւառիս այս ձիր սեփիհական արարչատուր՝  
Պարդեեալ մանկտւոյն Հայոց զարդ ըզդ եստոց ծիրանելոյն :

Պարդեեալ մանկտւոյն Հայոց զարդ ըզդ եստոց ծիրանելոյն :  
Տեսանէք և ըլլանջարս մատաղադոյն եւ մեղանամ,  
Զոր եկեալ երամ գեղջուկ կուսանքըն դաշտաէր

Ժողովեալ կեր կազմէին շուտամարսիկ ւ'առողջարար .  
Ալրելի գոլ հիւանդին և ժուժկալող ոգւոյն ի պահու :

Անդէորդ երամակօք ցընծայր ի մարդու այս խոտաբուղիս .  
Խոտունախիս ըզդալարիս ճեղքեալ ճեմէր պաճարաց խուսիր .

Արածէր լիարերան պլտիկունս կախեալ առաստ կաթամր,  
Յերեկուն ծանրաքայիկ բառաչելով դառնայր ի տուն .

Եւ զեղոյր փըրիըրադէղ ըզտանտիկնոջ ագահ կըթոց .  
Սեր մածուն թո՛ղ ուտէր յայնժամ որչափ կամէր մանկտին :

Այսոքիկ, աւա՛ղ, մանկունք, զարդիս և ոչ մի տեսանին,  
Ոչ աղջկունք բանջարաքաղ ոչ անդէորդք և երամակք .

Այդ բոլոր դաշտք ի սոցունց կան աւասիկ թափուրացեալ

Կարօտին ժողովոյի այդ քաղցրահամ դալար բանջարք ,

Եւ պաճարաց բերանոյ պարարտարօտ մարդագ ետինք :

Դարձարուք ի դաշտաց և յարտորայս Այրարատու  
Յորս յաւէտ բերկրէր ի սիրտ յարդիւնս արդար  
հողավաստակն :

Յայդ անդեայս բեղմնարեր մինչ արկանէր մըշակն ըզսերմն  
Յուսալից էր ընդ միոյն զհարիւրաւորըն ժողովել .

Ավասո՞ս, այդպէս այժմիկ խոպանացեալ կան բընաւին,  
Հասկաթուու ընդցորենոյն փուշք մոլախտաք են արդբուսեալ :

Յայս երկիր պարարտահող ոչ եղնամոլք ձըդէն վարօր,  
Ոչ ի հերկ սերմանահան զրուուն լընու յուսով ի ցան,  
Ոչ կընձողն ըզդ երանդին առեալ ուրախ գայ յանդաստան,

Եւ ոչ սայլքըն որայիւք բարձեալ գընան ճըւընչելով,  
Կամ օրանք ի կալատեզու դէզ հարկանին լեռնահանգէտ ,  
Կամ ատոք ցորենոյն թեղ չեղմակուտի բըրատեսակ

Ժողովեալ ի շտեմարան ցընծայ մըշակն ի ձըմերայն :  
Եւ զի հունձք և հողադորձք յերկրէս յուսթի պակասեցան,  
Որ չունէր թիզ մի տեղի բընաւ երբեմն անհչակեալ ,

Այսօր համայն իւր գետին կայ կորդացեալ և անարօր .  
Զի կորոյս Հայոց աշխարհ զմէծ Արտաշէսըն մըշակոլ :

Յայս թողեալ լացցց և արտ ըզպարտիզաց պըտզապարդ և  
Եւ զայգեացըն գինեբուխ, զբուրաստանացըն ծաղկաբեր ,  
Որ հուպ շինիցըն մնացելոց և ընդ հոլով ծածկելոց այժմ

Քաղաքաց և աւանաց և չին գիւղից, գերդաստանաց  
Խիտ ընդ խիտ առ միմեանս տընկեալ էին դրախտանըման ,  
Եւ սօսիք հասակաբարձ ըզբոլրիւք նոցին ի պար :

Անկարօս էին բընաւք ջուրց ոռոգման զուարթացուցիչ  
Զի շատ ընդ մէջ գալարուն վլտականիք գետոյն Երասիս

Ընթացեալ յամարայնի ջուր բաշխէին նոցին աւաստ ,  
Որով բազմարեղուն պլտուղ այլին մոխ դարաստանըն

Եւ այդիքն անոյց գինեօքըն լընուին ըզկարասունս ,  
Զոր յաւէժ ի խրախմանի արրեալ հորձուէր մանկտին Հայոց :

Ուր սոքին, աւերեցան, արդ ոչ պարտէզք ոչ ծաղկանոցք :  
Չորացեալ աղազեցան, ո՛հ, ըստ երգոյն Եղիշէի :

Դաշտախիկ եղեն իսալաւ և որթք այգեացըն գիներեր ,  
Եւ տեղիքն աղարտեալ այնչափ մինչ ոչ երեւին հետք :

Առ հովոիւք ծաղկարոյս և ընդ մարմանդըս հովաչունչ

Ճեմ առեալ ելէ՛ք մանկունք արդ ի լերինս Այրարատաց ,  
Յորս հովուացըն երջանիկ քաղցր է ճեմել հօտն ի յարօտ  
ի վերայ նորաբացիկ պէսպէս ծաղկանցդ անուշարոյր ,  
Որ ի վերուստ գիշերի ցող ընդունին ի գլուխս իւրեանց .  
Եւ ընդ այդ մինչ արեւուն ցայտի զդոքօք շառադոյն շող  
ի թերթիցըն շաղանիստ փայլք հարկանեն ուկենածանչ :  
Վա՛շ , յայնժամ քանի՛ ախործ արօտ հօտին դալարասէր ,  
Զոր ճարակէր շաղանստոն և որոճայր բերանածուփ .  
Եւ հովուին խաշնասէր որչա՞փ հեշտանք կրէին ի սիրտ ,  
Մինչ ըղճոտին տեսանէր խայտուլ խաղալ ՚ի դալարին .  
Ինքն անդէն առնոյր յայնժամ ըղճովուական փողն ՚ի ճեռին  
Եւ նըստեալ առ աղբերօք ընդ թաւաթուփս ինչ հովանեաւ  
Մեղմանձայն հընչէր անոյշ և տայր հրաման հօտին իւրոք  
Արածել ուր և կամին ի մէջ հովոտց դալարաբոյս :  
Եւ պահ կըթոյն երբ լինէր առեալ բերէր ի պէրատեղն ՞ :  
Կուժ ի յուս գնային յայնժամ կոյրք և կանայք դեղաստանեայց  
Եւ կըթէր մէն մի փեր հօտ լըցեալ զարանս մաքեաց կաթամիւ  
Տարեալ ի տուն խլնդալից և ի սկանիր մակարդելով  
Տային առն ածել վաճառ ի ճոխ քաղաքըն Հայկազանց .  
Եւ այնու զինչ պէտ լինէր անդուստ գընել բերել ի գեղ :

Տեսէք և այժմ , ո՛վ մանկունք , զի՞ կան դատարի  
լերինք և բլուրք ,

Զորս խաշանցըն ծածկէին հօտք բիւրաւոր իրբու զմարախ ,  
Եւ նոցին անոյշ բըշիւն ըզսորածորս լընոյր լերանց .  
Ո՛հ , աւասիկ լըռեցին ընդ հօտին ձայն և փողք հովուացն :  
Այսդ ալարիք ծաղկախտան քընքուշ գառանց փափիկիկ արօտ  
Այսպէ՞ս ոչ ճարակեալ՝ վայր թօթափին թասամելով .  
Յայս վոտակօք զովարար , ոչ գայ ի ջուր հօտըն հաղար .  
Ուր ի տասրյ արեւուն շունչ առնէին խաշինք յորոն  
Այս լերանց մարմանդ ավայրք և ամարան մակաղատեղք  
ի հօտից դատարիկացեալ լեալ են տեղիք էրէվայրից :  
Ոչ ևս հովիւն՝ կենաւէտ յայդ վլատակունս յըստակաջուր  
Լըւանայ զհօտն ասրաբեր , գեղմըն փայլէ ձիւնակերպիկ  
Կամ խաշինտէրն ի կըտուրս գայ ի խուզել ըզդեղմարած  
Եւ կանանց ոստայնագործ նիւթ ընծայել ասրեղինաց ,

Ոյց մատանց ճարտարութիւնք ցարդ տեսանին ի Հայաստան  
Նարօտ նարօտ հիւսք ի գորգու և ի պէսպէս գործըն մատանց :

Այլ զի՞ քեզ , ա՛յ ողբերգու , զդոցունց ողբալ  
թողեալ ըղմեծն .  
Ըղմերինս Հայոց թափուր յորսականաց տեսանես դու ,  
Այն չէ քեզ ցաւ և կըսկիծ , ըզմէ՞ ոչ լաս զայն առաւել .  
Ուր են արդ այն պատանիք նախարարացն և աղատացն  
Բաղէիւ ելեալք ՚ի յորս որսալ այնու զմանրիկ թըռչունս :  
Ո՛վ սիրողք ի ճմերանի առաւալարացն արեդնաջեր  
Կարկաչաձայն կարմրակըտուց մանրաքայլիկ ա՛յ կաքաւունք .  
Եւ դուք ևս մացառազող և թըրիամուտ պարարտ աքարք .  
Եւէք ի դուրս աներիլիւղ և ճեմեցէք կարկաչելով ,  
Այլ ոչ ևս պղնդին գնեա ճեր այն որսատենչ նոր պատանիք :  
Ելէք և դուք ՚ի բարձանց , ո՛վ լեռնասուն էրէվայրիք .  
Յանմարդի լերինս Հայոց արձակ արձակ չըջեցարուք .  
Արդ ոչ այն կորովաձիգ սուսերաւոր երիտասարդք  
Զիախրովստ յարձակմամբ հարեալ գլորեն ըղճեղ ՚ի վայր :  
Արի՞ օ՞ն , որպէս յայնժամ ՚ի մէջ քարուտ լերանց Մոկաց  
Շըջէիր , և անդ առ այս ճառագրէիր արտասուալից :  
Եկ և շըջեաց այսր ընդիս , ես ողբակից լինիմ քեզ արդ ,  
Եւ նըստեալ առցուք ի յոդր զողջ ըզլերինս Այրարատայ ,  
Զի սպառեցան որսականքն արբուներամ և ամմասէր .  
Եւ խըցեալ կուրացան և արշաւանքըն որսորդաց :

Ժամ է արդ էն անցանել զփոքրիկ լերամբք երիտասարդ ,  
Ելանել ի մեծապարծ հըռչակելին աւագ Մասիս ,  
Ոյր ի զըռւս վեհաւէտ նըստի Նոյեան մեծ լաստափայան ,  
Յորմէ կրկին ծնաւ մարդ և կրկնակի մարդկան աճումն  
Կամեցաւ նախախնամ Տէր , լինել ի մէջ Հայաստանեայց :  
Զի՞նչ այսու , յայտնել մարդկան զոեզի դրախտին կորուսելց  
Եթէ չէ յաշխարհի աստ յանկիւն ուրեք վայր անծանօթ ,  
Այլ ՚ի բարձր և լայնածիր վայելչալայր Հայոց աշխարհ ,  
Զոր իրեւ գեղեցիկ մասն ի մէջ հանուր տիեզերաց  
Բնտրեաց և ետ ժառանգ զցդ նաղելեացըն նորաստեղիք :

Դադարեցէք աստ , մանկունք , հասաք ահա

յոտըն Մասեաց ,

Յորում նոյ գերդաստանօքն ի տապանէն մինչ ել ի գուրս  
էջ և ողջոյն ետ երկրիս , գրկեաց զհողն ուրախութեամբ :  
Եւ սեղան շինեալ աստէն , հան պատարագ հաճոյական ,  
երկնաւոր նաւապետին տեսչութեան Հօր ամենախնամ :

Որ ըզնա դոյզըն լաստիւ ի ցասմանէ ջուրցն ապրեցոյց :  
Յողակիզէ Արդարոյն հոտ անուշից բուրեալ ի վեր ,  
Հոտոտէր Տէրն ի բարձանց և խոնարհէր ի գլուխ լերին .  
Նոր ուխտին նոր աւետիս տայր և խօսէր առ սիրելին :  
Եւ արփին ընդ երեկուն մինչ յարեմուտս մօտ էր ի մայրն .  
Եւ նըշոյլս ի յարեելս շողէր ի յամպս անձրեւածին ,  
Երևէր ծիրանափայլ եօթնագունեան աղեղն ի յօդ ,

ի Մասիս և յԱրագած և յԱրարատ կապէր կամար .  
Նըշանուխտին հաշտութեան ընդ Արդարոյն դընէր Ասուուած :  
Աստանօր նոր անդրսնիկ հողոյն տըւեալ զանձն ի վաստակ .  
Այդէդործն արդարաշահ յերկիր արկեալ որթոյն զուռիկ ,  
Յայսմանէ զանուն աւեալ և կոչեցաւ գեղն Արկուորի :  
Ուռըն վաղ ուռանալով Նոյայ այդին բերէր խաղող .  
Նոր գինւով արբեալ նընջէր ծերըն համեստ Մասեաց ի չուք ,  
Հոլանէր հողմն ըզհանդերձ , ոչ իմանայր մըշակըն խոնջ .  
Աստաբանան մանուկ լըպիրշ քրքիջածէր դմերկութեամբ հօրն ,  
Մերկանայր յօրհնութենէն զգ ենոյր զանձամբ իւրով անէծ :  
Իսկ եղբարըն երկուին Սեմ և Յարէթ առաքինիք ,

Ըզմերկութիւն մարմայն պարկեշտ , որ միշտ պահէր

ըզկուսութիւն ,

Մածկեցին շութափելով արւեալ պատիւ պատկառելոյն :  
Զարթեաւ Նոյ ըզդաց ըզդէպն անէծ անդէն դՔամն ապիրատ .  
Իսկ ըզՍեմ և ըզՅաբէթ օրհնեաց բերանըն հայրական ,  
իշխան ժառանդ լինել երկրի բնակեալ սիրով ընդ առ

միմեանս ,

Ա. անպատկառ ազատ Քամ , ծառայ լիցի հարազատիցն .  
Եւ այսպէս նա յաւիտեան անէծք էառ ընդ իւր բաժին :

Ուսարուք աստի , մանկունք , ձեղ օրինակ լիցի այս դէպք .

Յուշէ ձեզ շեառն ըզպատուէր միշտ պատուեցէք ըզհարըն ձեր .

Զգոյշ , մի՛ գուցէ զերդ Քանան լիջիք անմասն յօրհնութենէն ,  
Ա. լ ըստ որդւոցն օրհնելոց դուք զօրհնութիւն ժառանգիցէք .  
Զի օրհնէնք ծերոցըն հարց հաստատ պահէ զտունըս որդւոց ,  
Եւ խախտէ զայն ի հիմանց թէ անիծէ մայրն ի ցաւոց ,  
Հապա զօրհնէս հարց ու մարց գուք միապէս առէք ձեղմասն :

Ա. յինէն հարցէք , մանկունք , թէ ո՞ւր է արդ

կինն Արկուուին

Նոյացէն այն գերդաստան , որ զինդ հազար տարի չին կայր .  
Յորս էին վանք և տաճար Հայրապետին սքանչելագործ ,  
Եւ առընթեր բարեհամ աղբիւր բըզմեալ չնորհիւ Աջոյն :  
Որ անձկանայր իսկ աչօք ի տեսանել զնոյեան տապան ,  
ի Մըծրին մեծ քաղաքէն դիմեաց և ել այսր ի Մասիս .

Մինչ խոնջէր երանելին ընդ զառ ի վեր զըժուարին ելս  
Վայրիկ մի յԱրկուուի մօտ նըստաւ գիւրել զվաստակ ոտիցն ,  
Եւ զդլումն ի չուք վիմին դընէր հանգչէր զերդ ուղկոր ,

Ուր չընչէր զեփիւռ Մասեաց , թըմիկր անոյշ բերէր աչցայն .

Նընչէր հովիւռն Յակովիք՝ կազդուրէին խոնջեալ անդամին :

Տեսանէր Տէրն ի վերուստ զիւր վաստակեալ ծառային իզմ ,

Հրեշտակին ձեռամբ չնորհէր զտախտակի մասն ի տապանէն .

Զարթնոյր հայրըն հիասքանչ աւնոյր ըզփայտըն փրկութեան .

Գոհանայր և խընդալից դառնայր անդէն ի Միջադետու .

Անհաւատիցըն ցուցեալ , յանդիմանէր զնոցին կարծիս 6 :

Ա. զաշըս ձեր դարձուցեալ , հայեցարուք , հա՛ երևի ,

ԶԱՐԿՈՒԵԻՆ ցուցանեմ ձեզ , միթէ ժուժա՞յք ի տեսանել .

Ահա մերձ , որ նշմարի ահազին վիճ և վլատակեալ ,

Ա. յն իսկ է , ո՞հ , ես ցաւիմ պատմել ըզդէպն նորին անցից :

Եւ զի զրաժակ երկինց ցաման լըցեալ հըրով և ծըծըմրով ,

Զորնախ երբեմն արբ Սոգոմտանձեալ բոցովին երկնատեղաց ,

Զնոյն և Արկուուին արբ յաւուրս մեր լի դառնութեամբ .

Ոչ յերկնուստ , այլ յերկրէ , անդընդաշարժ պատուհասիւք :

Քանզի մինչ ինքն ի յորդիս իւր բնակաւոր խընդալից յաւէտ ,

Երերաց Մասիս ներքուստ գուաց գոչեց որոտաձայն .

Թընդացին բոլոր լերինք , գըշորդեցան վէմք ի տեղեացն .

Եւ զի՞նչ անդէն լայնավիհ բաց ըզպերան , գոդ թէ փիշապ .  
Ուստի վերի յանդպնդոց ժայթքէր անբաւ նիւթ հրաբորբ ոք .  
Ռւխօրէն և մըրրախառն վերուստ ի վայր շառաչելով ,  
Զանարդիլ վէմս ահագին թաւալգըլոր վայրաբերէր .  
Քանդէր և աւերէր , յերկրէն բառնայր դհէք Արկուսին .  
Եւ հրային ջրով ներսուղեալ ծածկեալ կորոյս

համայն շինուածս :

Մեռանէր քահանայն , չգիտեմ յաղօթու էր ի տաճարն .  
Կամ ժողովուրդն ի գտալիթ եկեղեցւոյն օրհնէր զԱստուած .  
Մեռանէր մըշտկն ի հունձ , մաճկալն ի հերէր , հօտաղն ի լուծ .  
Մեռանէր սայլորդ երդին և ջախջախէր սայն ի սըռնակ .  
Մեռանէր կալվար մըշտկն և կալոտիք ի կամնասայլ .  
Դէղ , կալ , չեղջ և զայլամէն , վարէր տանէր հեղեղյանդունդ .  
Մեռանէր այգեկութ , ողկոյզն ուռով ճըմէր ի թուփ .  
Մեռանէր հընձանահարն արիւն խառնէր ընդ խաղաղին .  
Մեռանէր հովիւն ի հօտ և պաճարաց խումբն ընդ նախրորդ .  
Մեռանէր կայտառ մանուկ , որ ըզդառինս տանէր յարօտ ,  
Մեռանէր թափէր կըթոց երբ ժիր աղջիկ կըթէր զմաքին .  
Մեռանէր կոյսն որ երթայր սափորն ի յուշ յաղրիւրն ի ջուր .  
Մեռանէր , որ ըզդաղկունս քաղէր կապէր փունջ ի պսակ .  
Մեռանէր տան տիկին , որ մակարդէր զկաթն ի մածուն ,  
Մեռանէր հացթուիս սպառաւ , որ առ թոնրով եփէր ըզնաց .  
Մեռանէր , որ զհարսանեաց թըմբուկն ածէր պար յօրինէր ,  
Եւ շար ի շար սպառաւորք թաւալէին բերան ի հող .  
Մեռանէր փեսայն ի սպակ և հարսն ի քող . ուե էր այն օրն :

Այսպէս անբախտ Արկուսին ինքն և որդիք իւր բովանդակ ,  
Էջ ի յատակ Մասիսին յերկրէ կորեաւ իւր յիշատակ .  
Որ ի բարձր այդ հովասուն մարմանդավայր բնակէր երբեմն ,  
Այսպիսեաւ դառն աղիտիք , եղեւ յանկարծ աներեւոյթ .  
Չեղէն իւր զաւակաց մարմինք շիրմաց արժանաւոր ,  
Ոչ անուանք ի մահարձանս անմահացան յիշատակօք ,  
Այլ մէն մի ուր և գըտաւ , մեռաւ նա անդ հեղձամըլձուկ ,  
Թաղեցան և ծածկեցան , Մասիսն եղեւ , ո՞հ , գերեզման 7 :  
Յո՛ւշ , մանկունք , զայս ի խրատ մեղ յուշ առնէ  
Տէրունեան բան ,

Այս պատժոյ ևեթ արժան ոչ համարել միայն զԱրկուսին ,  
Առ կրելոյ նոցին այս դառն անցս անպայման և դժնդակ .  
Թէ մեղան թէ չը մեղան , վեհ դատաւորն Աստուած է :  
Տէրն այսու խրատէ ըզմեղ փութալ սըրտիւ յասկաշաւանս .  
Եթէ ոչ , ասէ դուք ևս անջուշտ ըզնոյն կորնչիցիք :

Թողէք , մանկունք , զԱրկուսին , երթամք շրջիմք  
շուրջ զՄասեաց ,  
Որ նոյի տան ժառանգութիւն և սեպհական վիճակն է ողջ .  
Յորոց ոչ զատեաւ երրէք ինքն և թոռունքըն հաւասէր .  
Ոչ սիրեաց ընդ գաղթականս խաղալ ի դաշտըն Սէնէար .  
Ոչ հաւան և ոչ հաղորդ գըտաւ շինման ամբարտակին :  
Աիրեաց յոյժ ըզմասիս և ի մանէ եկաց անբաժ ,  
Ըդկողիւք սորին մարմանդ հար ըզփրան և ընակեցաւ  
Եւ եղեւ ի նմա յաւէժ բուն ընակաւոր և ժողովուրդ :  
Աիրեաց ողկուղաւէտ զորին նորատունկ այգւոյն իւրոյ ,  
Ի սեղան քաղցր ըզգինին անոյշ անոյշ արբեալ զըւարթ ,  
Հինաւուրց մարմին զառամատաղանայր նոր մանկութեամբ :  
Աիրեաց զամոլս եղանց և մաճակալ եղեւ յօժար ,  
Հերկէր , վարէր , ցանէր , հընձէր , և համբարէր  
զատոք ցորեան .  
Կըշտապինդ կերաւ ըզհաց և չմոռացաւ զբանն Աստուծոյ ,  
Մինչև ի կէտ կենաց իւրոց զԱստուած օրհնեաց և գոհացաւ :  
Ոչ թաքեաւ յաչացն երրէք ալեւորեալ գլուխ Մասիսին ,  
Մինչև ալիք իւր ծերութեան հանդոյն նըմին սպիտակափառ  
Զիւնացաւ , և ծաղկեցաւ ինքըն գործովք արդարութեան :  
Աիրեցին որպէս զնա և իւր թոռունքըն հաւասէր ,  
Որ ի նմանէ և մայրենի ազատ գըրկէն ոչ հեռացան .  
Յոր սընան ամենեքին և աճեցան կաթնապարտ :

Այլ արդ ինձ , աղնիւ մանկունք , յոյժ սիրելի է նըւագել  
Աստունօր խաղաղիկ և զոսկեղէն դարըն նոյեան ,  
Զոր վարէր յայնժամ աստէն նոյ ընդ թոռսին իւր թորդումայ ,  
Վաշ , քանի՞ քաղցր էր նոցին կենցաղ երկրիս Այրարտու ,  
Պորժամ ոչ էր բըռնաւոր և հարկահան անագորոյն ,

Ոչ կըուփումն անաւագին և աղաղակ զըրկեցելոյն ,  
Ոչ իշխան ոչ իշխեցեալ կամ թագաւոր և ժողովուրդ .  
Ոչ զօր ոչ պատերազմ և խաղմարար աշխարհաւեր .  
Ոչ ի սուր ձուէր երկաթ այլ ի մանդաղ և գերանդի  
Լոկ ի պէտ երկրագործին և ոչ մարդոյն մարդախոշոշ :  
Զէր սահման լարաբաժին ոչ այդեստանք ցանկապատեալ  
Ոչ պաճարաց կամ խաշանց վերայ դրոշմէր նըշան խարին ,  
Զի բարբառ դըժոխալուր չև էր լուեալ աստ՝ իմ և քո :  
Ոչ ըզքըրտանց վաստակ ուրումն յափշտակէր ոմն անիրաւ ,  
Կամ զրկէր ոք վիւր ընկեր և կամ խօսէր դըժնեայ բարուք ,  
Կամ ի գործ իւր առանձին վարէր բընի տարապարհակ :  
Այլ համայնք համակարիք աշխատասէր էին ի գործ .  
Եւ մէն մի յիւր ճակատուն թափեալ քըրտանցն ուտէր լըդնաց :  
Ոչ ի գահոյս բազմէր ոմն ի յաղարանս փաղփիւնափայլ  
Ոմն ի դաշտ արևակէզ մինչ ցերեկուն խարչէր քըրտամբք :  
Զայդիս և զարտորայս ի գէպ էր առըն մըշակել ,  
Եւ նոցին տոհմականօր լընուլ ըզտուն իւր լիուլի ,  
Ընտանիք , հիւրն և օտար ուտէր խըմէր առատ առատ :  
Այլ կընո՞ն ըզմերկութեանց լեալ հոգատար իւր զաւակաց  
Ճարտարէր ի հիւս մատին զգեստ ասրեղէն պարզ վայելուչ ,  
Եւ առանին իւր վիճակեալ և զայլ պաշտօն տանէր ի ժիր :  
Այլ սիրով լըծակցէալ զյոգ մաերմացըն ժըրագլուխ  
Հաւասար ընթանալով ըստ սարասու եպնամոլից ,  
Հոգային զմարմնոյն կարիս և անտրտունջ էին զմիմեանց :  
Բաց կային դրունք հանապալ մուտ համարձակ անցաւորաց ,  
Աիրով զըւարթառատ հրաւիրէին զամենեսին  
Ի սեղան պարզ անպաճոյմ , այլ ըստ սիրոյն բազմախորտիկ :  
Ուր փոխ տայր կարօտելոյն , անդրէն չառնոյր նա ըզկըխոն ,  
Զի ըզմիոյն պակասութիւն լընոյր սիրով միւսըն փարթամ ,  
Ի միջի էր ամենայն իբր ըստացուած հասարակաց .  
Ում պիտոյ լինէր առնոյր , ոչ դըժուարէր որ վաստակեացն :  
Անինչ անփառասէր սակաւապէտ միշտ ի վայելս ,  
Ոչ լուեալ զՏէրունեան բան անհոգացող էին զկենաց ,  
Ոչ ի հոգ խուճապէին թէ ի՞ւ զըտցեան զվաղուեան պարէն  
Զի երկիրս այս աննախանձ աղդի աղդի տոհմական բերա .

Յիւր ծոցոյն առատաբուխ չնորհէր պարէն դիւրապատրաստ :  
Ոչ գոյր աստ յայնժամ ոսկի կամ ընդ երկրաւ  
դանձ թալեցեալ .  
Դեռ մարդոյն սիրոն էր աղատ աղահութեան բըւնութենէն  
ինքնագիւտ էր գանձ նոցին և անսպառ մինչ յափտեան  
Այրարատու աշխարհիս արդիւնաշատ հոլլյն պարգե ,  
Ակաղձուն կարմրահատ լեռնակուտակ ցորենոյն չեղջ ,  
Այգեաց և պարտիզաց համեղ գինիք և անոյշ միրգք :  
Գանձ էին նոցա դարձեալ ամոյք եղանց վաստակաւոր .  
Հերկէին զերկիր պարարտ և ցորենոյն թալեալ ըզդանձ  
Ընդ ոսկեցն անբուսարեր հընձէին հասկ ոսկերողքոջ ,  
Որոց ոչ ևս մեծամեծ համբարանց բաւէր տեղի :  
Միթէ գանձ չէին նոցա և այն տանուն ջոկք անասնոց ,  
Բազմահոյլ կովուց նախիրք և բիւրաւոր հօտք ոչխարաց  
Զորսի բարւորդ դարմանել խընամանին դաշտաց , լերանց 8.  
Զեւ լըւեալ հետևէին ըստ խրապու Սոլոմոնին ,  
Խւզասուն կաթնապարար դիրանայր տունըն թորդոմայ .  
Թողում աստանօր զէրէվայրիսըն լեռնասուն ,  
Զոր որսացեալ ի լերանց փափկանային նոցին ամճովք :


Այսպէս ահա , ո՛վ մանկունք , դիւր , սլարդ , թեթեւ  
կեանս վարէին ,  
Քանդի վայելք զեղսութեանց չև տակաւին տիրէին աստ :  
Ի սեղան ոչ գիտէին հանել խորտիկըս համեմեալ  
կամ մարմնոյն պատըսպար սկերճապաճոյն զարդըս խնդրել  
Ոչ շըռայլեալ ցանկութեամի չէն հոյակապ յօրինէին ,  
Վայելել ուրախանալ ի փափկութիւն անցաւորիս ,  
Ուր յոյս մարդոյն երկիրս էր , չև յայտնեալ յոյսն հանդերձեալ  
թէ և լի էին յուսով կենաց իւրեանց երկայն աւուրբք :  
Կէպ թէպէտ շինէին տունս և շինանիստ գիւղ և աւան ,  
Կէպ ընտրեալ կեանս հովասուն վըրանաբնակ աստանդէին  
ի հովիտըս հովանուտ և հովասուն լերանց ի կողմ  
Առ գըլսով յորդավըտակ ցուրտ աղբերաց հարեալ զմորան  
Ուր առ ի պէտ անդեայց խաշանց առատ էին ջուր և ճարակ :  
Աւա՛ղ որ , այս երջանիկ քաղցըր կենցաղ նոյեան դարուն

Տեղի ետ տակաւ տակաւ յորժամ աճեալ բավացան յոյժ,  
Եւ երբ մեռաւ Նահապետն՝ ճրագ արդարոյն շիջաւ անդէն;  
Ով պահէր այնուհետեւ կրօն և հաւատ Աստուածաւանդ.  
Ով յիշէր զուխտըն Նոյի և հաշտութեան զաղեղն ի յամպս.  
Օր աւուր նորագիւտ չարեօք ի մեղս յաճախեցան,  
Կուապարիչտ եղեն ողջոյն մոռանալով զԱստուած Նոյի :

Ըղձալի է ձեզ, մանկտի՛, և յայլ լերինըս բարձր և պանծ,  
ՅԱրագած և ի Նըպատ հանել այսպէս և շուրջ ածել,  
Նաև ինձ հրաւիրողիս քանի՛ բերկրանք լինէր սրաի  
Թէ զայդ փափաք ձեր ազնիւ ես ածէի այսպէս ի լրումն,  
Սակայն, ո՞հ, սիրոյ թեսոյս ոչ սատարէ և թե մըտացս,  
Որ քաջ թևեալ երկոքումբք վերանայի սարէ ի սար,  
Եւ ընդ իս տարեալ ըղձեզ ի դլուկս նոցին ամպածածուկ  
Առ հովանեօք ցօղագին ամպոց նըստեալ նըւագէի :  
Վասն որոյ շատ լիցի այս Այրարատու զլերանց դաշտաց,  
Օ՞ն առեալ և ի նորին ի պերճ քաղաքս աւերակեալ  
Եթէ ոչ յամենեսին, գէթ ի սակաւըս ճեմեացուք  
Յորս փայլէին թագ և ի գահ երբեմն արքայք Հայոց մեծաց,  
Վաշ, յայնժամ ազատ էր Հայն, ազատ Մասիս  
և մեր կեանք :

15800-58

31836  
3007



Ն Ա Խ Ա Գ

Ե Բ Կ Բ Ո Բ Դ

Ն Ա Խ Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ե Բ Կ Բ Ո Բ Դ Ն Ա Գ Ի Ն

Յերկրորդ մասին այս՝ հրաւիրէ՛ ի քաղաքն վաշ-  
ղարշապատ, ուր և բանք ինչ Հրաւիրակին առ  
մանկտին թէ վասն է՞ր անշքացաւ այն մայրաքաղաքն  
Ալրարաստայ, և հանեալ անտի ածէ յլնի քաղաքն ։  
Անդ ողբերգակն տայ քաղաքին պատմել ոճով զիւր  
առաջին վայելչութիւն և զվերջին անշքութիւն եր-  
կար ողբովք ։ յուսադրական քաջալերութիւնք  
մանկտւոյն առ քաղաքն, պատախանիք քաղաքին  
առ նոցին բանս, և վերջ ։

**ՄԻՆՉԵՒ ցարդ ի տեսարանս դաշտաց լեռանց**  
**և ազգերաց շուրջ ելիք, Հայոց մանկունք, և կայտուեցիք**  
**ծաղկանց վերայ, Մերթ ուրախ և մերթ աըրտում, մերթ ի հրձուանս,**  
**մերթ հաւաշանս ։**  
**Այլ արդ ևս ածեմ ըշմեզ ի տեսարանս ամենատխուր**  
**Ուր յաւէտ տրտամենչիք և ճըմեսցին սիրաք ձեր քընքուշ-**  
**եւ զաշըս ձեր գրաւեսցեն դառն արաասուք աղիողորմ :**  
**Դուք մանկունք շըրջեալ այսչափ զվայրօք շեղէք շընահայեաց,**  
**Ոչ հարցէք յինէն, երբէք թէ ուր են արդ**  
**մեր պերճ քաղաքք**  
**Արտաշատ, Վաղարշապատ, Անի քաղաք բազմաժողով,**  
**Եւ ուր, որ ըշնորհօք ազատագեաց այն մեծ գաւառք**  
**Գարեղեանք և Արեղեանք, Արշարունիք և Հաւունիք,**  
**Գառնի և Բաղրւանդ, Շաղկուան, Ուստան, Շիրակ, Վանանդ,**  
**Եւ ի մէջ նոցին անթիւ գեղանք աւանք և դաստակերտք**  
**Հուպ առ միմեանըս շինեալք ի ծոց երկրիս մեծատարած,**  
**Ոյք լլցեալ էին բոլոր աղատանօք, սոսկականօք,**  
**Պայազատօք և ըսպայիւք և քաջամարա զօրականօք :**  
**Գուշակն անդուստ տայր պատուէր Արարատեան**  
**արքայութեանց**  
**Եւ գընդին Աքանազեան ի խումբ կաղմել դրօշու դրօշու**  
**Ելանել ի Բարիլօն և նետակալս կանդնել զնովաւ .**

Ըղվըրէծ սըրտմբտելցյն խընդրել նետիւք առ ի նմանէ :  
Ուրէ , հրա՛ւիրակ , ուր են այս փառք Արարատեան :  
Այդոքիկ այո՛ , մանկունք , երևէին երրեմն ի ամա ,  
Այլ յայնժամ մինչ Պարթեաց ի գլուխ փայլէր  
սլանծալի թագն .

Որ իրու զակն արեւու զըսյ իւր սրմուէր զԱյրարատաւ ,  
Առ այս լուսով երեւէր այդ ճոխութիւն վլչեալ փառաց :  
Իսկ յորժամ ի մայրըն մուտ ճառադայթեալ թագին արևն  
Ընդ նըմին և այդոքիկ նըսեմացան տակաւ տակաւ :

Աւասիկ տանիմ ըզձեղ ի պանծալին Վաղարշապատ  
Արքայից Արշակունեան ի գահըն պերճ կայսերակարա :  
Այլ , աւա՛զ , ոչ տեսանէք ըստ առաջնոյն թագն և աթոռ  
Հոյակապ և փառաւոր եղեալ հանդէս լերին Մասեաց .  
Մայրաքաղաքն աւան դարձաւ , յոր չերևին ինչ նշմարանք  
թէ լեալ իցէ այս երրեմն չայոց մեծաց մայրաքաղաք  
Ուր ի գահոյս գերատիրարձ փայլէր Տըրդատ կայսերակերպն ,  
Զիւրեւ շուրջ աւագանիս , ըզնախարարս և զուտանիկս  
Զորեքհարիւր պետս աշխարհաց և իրուսակալս պար ունելով ,  
Ինքն ի միջի ըզվեհային դլուխն ամբարձեալ հանդոյն Մասեաց ,  
Առ ոտիւք հազարաւոր լերինք և բլուրք խոնարհագոյն ,  
Կամ զերդ լուսին լրացեալ ի կամարին աստեղագարդ ,  
Որ զիւրեւ բակ բոլորէ զրոյլս աստեղաց ճաճանչաւոր :  
Յայնժամ էր տեսանել աստ մեծ ատեան հիալատում ,  
Նախարարքն արքայաշուք երր զարդարեալ կարդ ըստկարդի ,  
Կապէին ըզպատուաւորսն և զոսկեղին խոյրն ի վերայ .  
Եւ առեալ ընդ մէջ կամար ոսկիակուռ ականակապ  
Չորթիկամրգ արկեալ սամոյր և գումարտակս ի պարանոցս ,  
Այնաէս փառօք և շըքով մըտանէին Վաղարշապատ  
Առ ի սպասու կալ հրամանին պերճացելցյն իշխանասաստ :  
Հարցանէք , որ ի զննին կայք աստանօր , ուշեղմանկունք ,  
Թէ առ ի՞նչ երրեմն էր սա յոյժ պանծալի բոլոր մասսմրգ ,  
Աւասիկ մերկացեալ կայ նա ի համայն վայելչութեանցն :  
Ալով տամ ձեզ պատասխան , որ զայդ յինէն  
հարցանէք այժմ :

Անաշտու և ձշմարիս և ոչ բանիւ սուտակասապատ :

Յորժամ վէս Վաղարշապատ զոնիր ահեղ մըտարերեաց ,  
Տիրանենդ և դաւաճան զըտաւ յարբայն իւր Տըրդատէս ,  
Զջահըն շիջոյց գերալոյս մահուն ըզդեղ մատղառուակեալ ,  
Խաւար պատեւաց զԱյրարատ և ժողովութդ նստաւ ի սուգ :

Ոչ դիտաց ուշակորոյն թէ իւր փառաց հովանի շուք  
Ծնդ լուսով նորին փայլէր իրու զաշխարհ առ արևով ,  
Եւ թեւոյն Պարթեական , որ սպարփակեալ

պաշտամանէր զինքն ,  
Լարմալ գաղեղ նենգ ութեան՝ նետ դիպեցոյց և խոցոտեաց ,  
Բզնովանին դըխոյն իւրում արհամարհեաց ողորմելին  
Եւ խարչեցաւ ի տապոյ , թօթափեցան փառաց ծաղիկք .  
Այլ Ընդ այս ես շատ լացից երր զզիրիմ սըրբոյն զըրկեմ :

Ոչ առ սա և եթ գըտաւ վաստավանորհ Վաղարշապատ ,  
Նաև ի սուրբն Աստուծոյ դոյն օրինակ յանդընեցաւ :  
Արդարոյն անիրաւեաց յոյր օրհնութիւն բարձրանայր ինքն .  
Արժանի օրհնից նորուն չեղեւ զործովք իւր անարժան ,  
Այլ անիծից որով այսպէս խոնարհեցաւ ի բարձրութեանցն :  
Եւ դի Տէրն առ այսոճիր արադ զարթեաւ յերկնուստի վրէժ ,  
ԶԱյրարատ իւր քաղաքօք մատնեաց ի ձեռը թըշնամեաց  
Որ բիւրովք հրոսակօք ելին հասին ի Հայաստան ,

Զայն ետուն , այլոչ զարթեաւ քաջ մարտադիրն և ախոյեանն ,  
Ոչ մըուընչեաց ահեղ ձայնիւ առիւծազօք Արշակունին ,  
Ահն ի թօրդան ընդ շիրմաւ նա զքուն մահու նընջէր յայնժամ :  
Ոչ ի զըսէս նըսպատ լերին թեւատարած կայր և ներսէսն

Հայոց գընդին զօրափիգ կալ աղօթիւքըն սըրտագոչ :

Յոյժ տըրտում և խոժոռեալ ոգիք նոցուն ելին յերկինս ,  
Ոչ և անդուստ կամեցան քաղցըր հայել նոյն Հայոց աշխարհ ,  
Կամ միջնորդ ու աղերսարկու եղեն անդէն առ վրէժինդիրն  
Լինել վերակացու ըստ քաղաքին Երուսաղէմ ,

Եւ այդւոյն Այրարատայ չքանդել զցանկին նորաշն  
ի կոխումն անցաւորաց և անտառասուն նսողերամիցն :

Իրբեւ յերկնուստ և յերկրէ թողաւ լըքաւ անօդնական ,  
Գունդագունդ գումարտակեալ զօրք թըշնամեաց  
զօրէն ամպոց

Եղին յայնժամ և խաղացին ահազնադոչ որոտալով  
Զպայծառ օդ պարզ և խաղաղ լըցին ամսով մըրըրկալից .  
Հուր շանթիս թօթափիելով ի ծառատունկըս թորդոմեան ,  
Լեմեցին վերուստ ի վայր ըզգեղուղեց ոստըս նոցին .  
Եւ գիարկուտ ազդի ազգի վրիժառութեան տեղեալսաստիկ  
Տապալէալ աւերեցին զամուր ավսարհըս մեր համայն :

Ոչ միայն արտաքին սուր թըշնամեաց և արհաւիրք  
Եկին յայնժամ և այսպէս համին կալան ըզչայաստան .  
Դող առնոյր Մասիսն վեհ և Արագածն երթայր և գայր .  
Սուր ի յարտաքուստ , մարտ ի ներքուստ պաշարէին ,  
Մուեդնեալ կատաղաբար տոհմ ընդ տոհմի հարան ի մարտ ,  
Հայն ըզչայն ի սերնդոց բառնայր ջընջէր զմետըս քաջաց :  
Այսպէս ի ներքուստ ընտանի սուր և վրէժ քինու ,  
Անդրադոյն քան զարտաքին դտաւ սատակիչ

տանս Արամեան :

Ուր էր . . . ո՛հ , չէր ի միջի վեհ իմաստունըն Տըրդատէս ,  
Որ բանին ամենիմաստ և ի հրաման ահացուցիչ ,  
Դաշնադիր սիրոյն առնէր ըզգըֆտութիւն նախարարաց :  
Զիմացան ոդիք պանդոյր ըզյարդ յօդին այն զօրակապ .  
Որ ըզնոսին զամըս վաթսուն կապէր պընդէր անխըզաբարւ  
Անէ՛ծք ձեռացն ապիրատ , որ կըտրեցին զամրակուռ կապն ,  
Անէ՛ծք ոտիցն այն ժպիրհ , որ վրշըցին առ ոտն ըզթադն ,  
Անէ՛ծք Ալւնի իշխանացն , որ դաւեցին զքաջըն Տըրդատւ  
Զի՞նչ եղեւ այնուհեաւ , մուտ ի նոսա ոդի խըռով ,  
Թագն անկաւ , որով անդէն քակտեալ 'ւ ինքեանք  
բաժանեցան .

Սուր առին մըտակորոյսք , Հայք ընդ Հայոց մըտին պայքար ,  
Ա՛հ , կըուռեցան համարինք և թափեցին զմիմեանց արիւն :  
Զայս ըզփոխարէն առընկալան վաղլաղակի ,  
Ընդ մահարբոյց բաժակացն , որ արդարոցըն մատուցին .  
Ոչ իմացան եղիկիք , թէ կեանք նոցա , կեանք էր Հայոց ,  
Այնպէս թուեցին թէ կարեն , զախսարհ վարելաւանց հոդւոյ :  
Ո՛հ , զարդարսն բարձին յերկրէ և անհոգի դարձան ի դիակ .  
Իսկ յորժամ ըզփորձ առին ծանեան թէ յոյժ յիմարեալ են :

Անագա՞ն ընտրեցին զպատիւ ոդւոյն անարսուոից .  
Այլ , աւա՛զ , ևս ոչ դարձան , Տըրդատ Կերսէս ի Հայաստան .  
Ա՛հ , ոդիք չընաշխարհիկ , զձեղ արտալո՞ծ արար Հայն .  
Թողում զԱրիստակէս , Յուսիկ և զՃերըն Դանիիէլ ,  
Զորս յայտնի սրոյն ոխութեան զո՞հ արարին յանդիմանեալքն :

Ահա ցուցի ձեղ , մանկունք , և քաջ հասու եղէք ուշով ,  
Թէ ընդէ՞ր մայրաքաղաքս փոքրկացեալ դարձաւ առան :  
Այլ մի՛ այնպէս համարիք թէ արդ խպառ Վաղարշապատ ,  
Բափիեալ կայ յիւր վեհ փառաց և է բնակին անփառունակ .  
Սուր , գահ , պալատ , Հայոց դրօշակ , ո՛հ , ծածկեցան  
հազար ամաց ,  
Խաչ և գըմբէիթ , կրօնի տաճար , մնացին մեզ փառք  
անկողոպուտ ,  
Վեհագոյն խորհրդական կաթուղիէն Էջմունծու ,  
Ոյր անխախտ եղին հիմունս ձեռք Տըրդատայ և Գրիգորին ,  
Յաւիտեան անդըրդուեի կալ ի գըրանցըն դըմոխոց .  
Այլ ըզկնի եկեցուք ձեմել և անդը ի հոգեորսն :

Արդ ըզլար քնարիս իմեյ եւըս պընդեալ ի ձայն ողբոց  
Վերառեալ ըզճեզ աստի տարեալ դընեմ յԱնի քաղաք ,  
Ուր նըստիմ ես ի վերայ աւերակացըն հողաբլուր .  
Անդէն զինե ողբանուէր ձեռն ի ծնօտի եղեալ և դուք .  
Զայնարեկ իբր աղաւնի ըսկիզբն առնում հանել մըրմունջ ,  
Հեծեմ և լամ դառնապէս և դուք ընդ իս շարժեալ ի լաց  
Թափեացո՛ք արտասուս ի նըշխարեալ քաղաքն յԱնի :  
Այլ ինձ դըմուար է՞ , ո՛վ Անի , զըսդ առաջին

ըզպերձ փառացդ  
Եւ զվերջին դըմբախտութեանցդ երգել յինէն ճահողապէս .  
Քե՛զ քաղաքդ տնչուք , թողում պատմել ըզքէն կարգաւ ,  
Դու՛ որ նախ արբեր զքաղցըր բաժակըն բերկրակից ,  
ի վերջումն այդպէս ապա զդառըն մըրուր այդ կործանման ,  
Գիտես ինքնըդ լաւագոյն զհամ կըրկնակի քոյդ բաժակաց .  
Ասա մեզարդ զամենայն , մեք լուռ կացեալ լուիցուք քեղաստ ,  
Եւ լացցուք ըզքեղ յաւէտ , զքեզ որ այդչափ անշըքացար :

Ո՞ր հոդի հայրենեաց ըզքեզ վառեաց, այ ողբերգու,  
Որ ի վազուց թողեալ ըզմայր գնացին յինէն որդիք Հայոց,  
Դու շնորհն ածեր այսրէն յայցելութիւն տառապեալ մօրս,  
Եւ լու պիս ի մեծ լալիւն վլացեալս յաւէտ ի բիւր աչաց,  
Ահա քեզ և մանկաւոյդ զիմ առաջին չնաշխարհիկ չուք  
Եւ զվերջին անշրջութեանցո ողբով պատմեմ մեծահառաչ:

Ես քաղաք հրաշակերտ ի Շիրակայ ճոխ դաւառիս  
Առ Ախուրեան գետոյդ եղերբ և հուպ հովտին Ծաղկոցաձոր  
Յարդաւանդ և բարերուղիս դաշտի շինեալ վայելչապէս:  
Լայնանիստ յարմարադիր զարմանալի յօրինուածովք,  
Դրամբք աշխարհամուտ և մեծամեծ ասլարանօք,  
Պարըսպօք ընտիր ընտիր, աշտարակօք բարձրադիտակ,  
Ես ի մէջ աներկեղուտ ոչ սարսէի յիմ թընամեաց.  
Եւ քանի՞ բիւրաւոր և բնաշխարհիկ ժողովրդօք  
Լըցեալ հարըստացեալ քան դշամօրէն Հայոց քաղաքս:  
Արքունիք արքայաձեմ շինեալ էին յիս փառաւաոր  
Ի նոսին Բագրատունեան գահըն կազմեալ ըրքեղապանձ  
Յոր բազմէին ծիրանեօք՝ Աշոտ, Ալբատ և Շահընշահ,  
Նախարարաք, առագանիք և իմ իշխանք ազատատահմ  
Եւ ու մուտ առնէին միշտ յիմ արքունիս փառազարդեալ:  
Պատակաւորն իմ ընդ այդուն մինչ ելանէր դրանէս ի դուրս  
Պաղպաջուն զէնստիւք պըճնեալ և թագ ի գլուխ  
մարդարախմուռն,

Զօրէն նոր փեսայի որ ելանէ յառագաստէն.  
Առաջի ընթանային կարդ ըստ կարդի ազատադունդք  
Եւ նըմոյդք ոսկեսարեան թեթև թաթուլ ճոխ ճեմելով,  
Խոռոշն ժողով քաղաքիս խըռնէր յայնժամ ի հրապարակս  
Ժեսանել ըզհանդէս Բագրատունի թագաւորացն,  
Որ հանդոյն արեգական յառաւօտուն ճաճանչելոյ,  
Որ ծիրանի լուսոյն ի գեղ գրաւէ հանուր ըզտիեզերս:  
Զի՞նչ ասացից և զարի զօրականացը բիւրախումի  
Զըսպայիցըն կամակար զքաջամարտիկ նահատակաց,  
Ոյք ի զէն վառեալ ի կուռ գունդ գունդ մէն մի  
ընդ իւր դրոշու

Ի դրանէս ելանէին երբ հընչէր փող ի կոխ ի մարտ,  
Զեւ մըտեալ, չեւ յասպարէզ, ահն ընթանայր ընդ առաջոյ,  
Զանարի գունդ թըշնամեաց ահարեկեալ ըլքուցանէր,  
Եւ զահանդեալ զէնընկէց ըլտապէին առ ի փախուստ  
Ցերեսաց անդիմահար իմոյս քաջացըն շահատակ,  
Որ ի հոգի միասիրտ յօժար ի մարտ ընթանային.  
Միրելի գոլով նոցա զմահ գեղեցիկ առ հայրենւոյս  
Մեռանել, զի գէթ յաւէրժ ես մընայի անմահ փառօք:

Իսկ ըզրովը ժողովրդոց որո՞վ ողբով պատմեցից արդ  
Որ կենօք երկրաւորին փարթամ էին և ընչաւէտ,  
Կալուածովք և անդովք, այդեստանեօք, բուրաստանօք,  
Ցորենոյ և գինուոյ լըցեալ պըտղովք լիապատար,  
Եւ հօտիք խաշանց անթիւ և պաճարաց երամակօք:  
Կեանս անկարոտ վարէին քան զամենայն Հայաստանեայս  
Որդիք իմ լիացեալք գերաբաստիկ և երջանիկ,  
Գըրգեալք և գիրացեալք ճոխ վայելիք մարմնապարար:  
Եւ մանկունք իմ նորատիք և կուսադեղ գիրդ օրիորդք  
Զգեստուք պըճնեալ ըզհասակս նոճիանիան գեղաշխտակ  
Առ ի զօս ելանէին առ Ախուրեան գետոյդ ափամքը,  
Ուր շատ այդիք և պարտէզք տընկեալ էին դրախտանըման,  
Մանկուն ուտէր տանձ և խընձոր և պատուական  
քաղցըր խաղող:

Զի՞ և ընդէ՞ր մոռանամ ասել զանթիւ գեղօրէից,  
Որ զինև շուրջ մօտ ի մօտ ի ջրաւէտ վայրս շինեալ էին  
Շինականք շահարեր զարդ վայելուչ դաշտանց լիրանց,  
Ոյց վաստակ արդիւնաշատ ընոյր զամբարըն Շիրակայ,  
Բաւ և առատ առ ի պէտս ճոխ քաղաքիս իմ բազմարեր:  
Այսչափ և այսպիսի զեղուն բարեօք առաւելեալ  
Ուտէին և ըմպէին յառաւութեանցըն յափրացեալ:  
Ցիս հընչէր անդադար ճայն գուսանաց և երդեցկին,  
Ճայն հարսին և փեսային և կաքաւող պարաւորաց,  
Եւ սեղանոյն խրախմանաց ի զուարթ խընճոյս պարապելոց:

Թողեալ անցից զայսորէիք, որ ըստ մարմնոյն էին բարիք

Յաննախանձ պարդեատուէն չնորհեալ նոշին առաստապէս .  
Արդ հեծելով յոդւոց հանից և զգիառացն իմ հոդեր ,  
Հազար և մի զեկեղեցեաց , որ յիս երբեմըն վայելրէչ  
Կառուցին կամարաշէն Խշանք , Տիկնայք աստուածասէր ,  
Ուր լցեալ էին բազում քահանացիւք , վարդապետօք ,  
Զարդարեալք վայելչօրէն իբրու զջաճարն այն որ ի հնումն ,  
Զահիւք , աշտանակօք և կանթեղօք արծաթակուռ ,  
Եւ այլովք զարմանազան հանդերձանօք սըրբանըւէր :  
Սպասաւորք և պաշտօնեայք եկեղեցեացըս համօրէն  
Մինչըզգեստուք սըրբափսոյլ վարդարէին կարդ ըստ կարդի ,  
Եւ մանկունք քաղցրանըւադ զերգս օրհնութեան

Եղանակեալ

ԶՏէրունեան տօնից հանդէս պայծառապէս զարդարէին ,  
Ուր ի զըննին կայր հիանայր հանդիսականըն տօնասէր :  
Զի այսպէս երբեմըն Տէր որպէս ըզհարսն ի յառադաստ  
Զարդարեաց քօղաղարդ սըսակաղդեաց վայելչութեամբ ,  
Ուրով եղէ ես ցանկալի գեղով երկնից սուրբ փեսային ,  
Ուր սիրով հաճեցաւ բնակիլ ընդ իս ի յաւիտեան :

Այլ ինձ վայ , զի վաղ յինչն զատեաւ փեսայն  
իմ սըրբասէր

Յորժամ ոչ ըզպատմուճան ես կարացի պահել մաքուր :  
Լուեցին ճայնք ցընծութեան յառադաստէ հարսնարանիս ,  
Զի նոր փեսային հեռանալն՝ երդողմանկունքս ելին զնացին .  
Ես մենացեալ մնացի , ո՞հ , լըքեալ թողեալ զերդ այրիկին ,  
Դառնացեալ անձամբ այսպէս լոմ և ողբամ ըզմենացեալս .  
Ուրակէս երբեմն Յորուսազէմ մինչ գերեվար եղեն որդիքն ,  
Այլ թէ հիմ զատեաւ փեսայն և է՞ր դիպաւ ինձ այս աղէտ ,  
Խոստովան լինիմ ըզմեղս և խօսիմ ձեզ , մանկունք Հայոց :

Քանդի ես ըստ Եսայեայ այդի եղէ սիրեցելոյն  
Եւ յանկիւնըս Շիրակայ տընկեալտեղւոյ պարարտութեան .  
Յանդով տիբափակեալ և զարդարեալ ձողարարձիւք ,  
Աշտարակ , գուր և հենճան շինեալ փորեալ յիս գեղեցիկ ,  
Եւ բոլոր պիտոյիւք առ ի Տէտոնի խնամակալեալ :

Խոկ յորժամ որթքըն սորեկ ընդ խաղողյն բերին ըզիուշ ,  
Դըժուարացաւ Տէրն ընդ այս , որ խաղողյն մընայր յուսով .  
Խրամատեաց ըզցանի այգւոյս , ես անխոնամ եղէ իսպառ ,  
Եւ յիս մըտեալ թըշնամեաց , ո՞հ , արարին զիս ճըսաքաղ :  
Զե՞զ ո՞վ իմ մանկունք , ասեմ բանիւ ըստուգութեան ,  
Թէ այգւոյս որթ ժողովուրդ խաղող բերէր մըշակողին .  
Դարմանէր ապաքէն դեռ ի նմանէ ցանկապատեալ .  
Հայր մըշակ սըրբէր զիմուռս ևս առաւել տային պըտուղ .  
Եւ ոչ այսպէս անխընայ կոխան եղեալ անցաւորաց  
Դաշտանայր տեղի այգւոյս , յիս արածէր էրէվայրի :

Արի' ե՛կ աստ , Երեմիաս , և ողբակից լեր գու ընդ իս ,  
Լաց և զիս , որպէս յայնժամ զաւերակեալն Երուսաղէմ ,  
Զի և ես արբի զբաժակըն դառնութեան և կործանման ,  
Եղուկ ինձ նըման նըմին զատեալ նըստայ միայնացեալ ,  
Ես քաղաք բազմորդի այրիացեալ լի տըրտսութեամբ :  
Զե՞զ ասեմ , ձեզ ասեմ , ո՞վ անցաւորք ճանապարհաց ,  
Ցիս դարձեալ նայեցարուք տեռչք զանբաւ ցաւս աղէտից ,  
Ուր հասին խուճապաւ և յիմ վերայ բերին զմեծ վիշտ ,  
Վասն այն և ես աւասիկ յազր և ի լաց մատուցեալ եմ ,  
Ոչ ըզտիւ և գիշեր դադար և դուլ տամ արտասուացս .  
Ո՞հ , երբեմն էի մինչև յերկինըս բարձրացեալ  
Արդ խոնարհեալ մինչ յերկիր եղէ գետնոյն հարթ հաւասար ,  
Եւ ընդ հողով իմ ամենայն փառք թաղեցան որպէս մեռեալ :  
Այս եղեւ , զի Տէրն խեթիւ յիս հայեցաւ տիգօք աչաց ,  
Եւ դարձոյց յինէն զերեսս այլ ոչ հայել քաղցր իւր ակամի :  
Տեսին զայս թըշնամիք թեթեացան իբրև զարծուիս ,  
Ի լերանց բարձանց ճախրեալ չոյտ եկին զիս պաշարեցին :  
Ցայնժամ մեռեալ էր վանողն և մարտադիր

քաջըն վահրամ , 9

Եւ Գագիկ հըզօր առիւծն ի դառագիզն էր Յունաստան , 10  
Սըւընչէր վասն իմցաւօք , ա՞հ , տիբագրուժքն արարին զայն :  
Եւ պարիսազք ահաւոր չեղեն պաշտապան պաշարեցիս ,  
Ոչ և դրունք մայրագերան երկաթապատ թևեռտափինդ  
Կարացին ըզգէմ ունել գոռ և խղովստ բըսնաւորաց :

Զի զաջն ամրածածուկ , որ պահապանէր զիս ի նոցունց  
Տէրն ի վերուստ ամփոփեաց , ես մընացի անպատճապար .  
Զի՞ յայնժամ դրունք և պարխապք մարդոյ հընարք  
խորտակելիք

Կարէին պաշտպանել զիս ի ձեռաց պաշարողաց :  
Եւ ի նանիր տըքնեցան իմ պահապանքն և ընդունայն  
Յորժամ ինձ պահապանիչ չեկաց յերկնից արթուն պահապան :  
Հեռի եղեն և յինէն իմ արդարոց սուրբ օրհնութիւնք ,  
Փոխանակ զի ես քըրքիջ միշտ ածէի զնոցին խրատովք  
Որով զիս յուղիդ շաւիդ յորդորէին գընալ սիրով :

Եւ մինչ այսպէս յամենուստ լըքեալ թողայ անզօրավիդ ,  
Զի՞նչ այնուհետեւ արձակ արձակ յիս թշնամիք  
Մըտին գաղանաբար՝ դինէզինեալ իբրև ըգփիկու ,  
Եւ առաթուր ճըմիցին ըզմենց այդիս ողկուզակի ,  
Յորմէ գետ յորդեալ արեան լըցեալ գընայր ի հրապարակս ,  
Մինչ ըզմանկունըս դիեցիկ որ մարցն ի գիրկուս խողլսողեալ ,  
Թաւալգլոր առեալ տանէր թափէր ի վտակն Ախուրեանին :  
Ո՛վ անագորոյն գաղանացեալ ոգւոյն անդութ ,  
Այսափ արիւն մարդոյ առ որ սոսկայ սիրտ մարդկային  
Ոչ կարաց նորա սրտին շիջուցանել ըզբոց վրիժուն .  
Մինչեւ եւսու դըմնդակ զայլ իմն ըզգրէժ մըտաբերեաց ,  
Զոր թէ պատմեմ , սարալուեալ քըստմին ոսկերք  
ձեր , ո՛վ մանկունք ,  
Այլ պատմեմ , զի գիտիցէք և զիս լայցէք դուք առաւել :

Յի՞ս այն մարդախանձն և ծարաւին մարդոյ արեան ,  
Աւազան , այլ ոչ թէ ջրոյ անդէն գործել ետ ծառայիցն ,  
Զենուլ անդ գիրդ և գեղեցիկ վերիտասարդու  
իմ ջերմարիւն  
Եւ լընուլ զայն ապաժոյժ կարմիր ջըրով ցըմարդաչափ  
Առ ինչ այս . . . մըտեալ անդր իբրւ ի մէջ լոգարանի  
Լըւանիւ , զի գէթ սըրտին սաստիկ զայրոյթ զովանայցէ : <sup>11</sup>  
Զայս լըւեալ , ո՛ մանկունք , լացէք , լացէք կականալիք ,  
Թէ քանի՞ այսպիսում արիւնախանձ լափէզ ընձուց

Անոյշ թուեցաւ որդւոցս արիւն և լափեցին իբրև ըզջուր  
Եւ քանի՞ցս իմ յանդաստան ազգ Նետողաց գերանդազէն  
Մըտեալ այսպէս հընձեցին զհասկահասուն Հայոց մանկտին ,  
Բարդ ի բարդ ի վերայ իմ տապաստ արկին իբրու զորայս :  
Գեղեցիկ էին և իմ ցուրտ գիւկունք արիւնազանդ  
Ի փողոց անկեալ ի սրոյ մի ըզմիով մածեալ արեամբ ,  
Որոց չէր ոք դիաթաղ , թշունոց երկնից կուր եղեն , ա՛հ :  
Այս գըմնեայ գաւազանօք ըզգրէժ լուծի սըրտմըտելցն  
Զորս առ ի ձեռուն արտաքուստ նոքօք տանջեաց զապերասանս ,  
Սակայն ոչ և այսու զիջաւ նորին սըրտմըտութիւն ,  
Եւ զի ոչ ժողովուրդք իմ խրատեալ այսչափ ըզդաստացան ,  
Եւ դարձան սըրտիւ առ Տէր հեղով զանձինս իբրև ըզջուր  
Առաջի Տեառն Ասուուծոյ , զոր ի ցասումին շարժեցին ,  
Անսաստ , միշտ անխրատ և անհաճոյ կեանս վարելով :  
Վասն որոյ նոր պատուհաս ինձ պատրաստեաց  
արդարավրէժն  
Ի ներքուստ հողմով շարժման տատանելովզիս խոր կիմամբքու  
Դրդութեալ վըրդովեցոյց ամուր շինուածըս վեր ի վայր : <sup>12</sup>  
Անկեալ կործանեցան յայնժամպարիսութ' և աշտարակեայք ,  
Յամօթ եղեն յուսացեալըն , որ ոչ զանձինս պարտապեցին  
Գործովք առաքինի , զոր կործանել չկարեն հողմունք ;  
Տապալեալ աւերեցան և ապարանք արքայաբնակ ,  
Մերկացան ի ծիրանեաց պայծառ գահոյք Բագրատունեան .  
Իջին յատակեցան այն պաղպաջուն բարձըր շինուածք ,  
Քանդի ոչ ունէին ուշ ըզինուածոյն անձեռագործ  
Յերկրի աստ շինել յերկինս բարի գործովք արդարութեան  
Բընակիչք իմ երկրապիչք անխորհեցողք միշտ ըզգերնոյն  
Խըցեալ կուրացան լայնափողոցք և կրապարակ  
Յորս նըստէին ծերքն ալեւոյթ գոլ զանցելոց  
միշտ հնապատում

Ընդ առաջ նոցին ի զրօս խաղուց մանկտիք զուարձանային  
Այլ ոչ ողբամ ես այնչափ զկորուստ փառացը

Այլ ողբամ զհոգեորաց հազար և մի զեկեղեցեաց  
Ողբամ զերկնանըման խորանաշէն վեհ տաճարացն ,

Ո՞հ, զամին շարժն ահագին վլուղեալ ի վայր խոնարհեցոց:  
Այրուն մանկունք, մօտ եկայք, ձեզ ցուցանեմ  
ևս արդ մատամբ,  
Ահա որ անդ երեկ յաւերակա իմ գեռ ի կանգուն,  
Այն է մայր կաթուղիկէ եկեղեցի զարմանակերտ,  
ԶԴա հիմնեաց արքայն Աըմբատ մինչ թագ ի գլուխ  
ֆայլէր ի գահ,  
Եւ լրումն հան կատարեաց կատրամիդէ մեծ թագուհին:  
Ե՛ւ այտի, ողբերգակ, ելէք մանկունք և մօտ գնացէք,  
Եւ քաջիկ դիտեցէք զիփացուցիչ կերտուած նորին  
Յոր տեսանի գեռ ճըզգրիտ հրաշարուեստին ձեռաց համնար  
Տըրդատայ մեծանուն ճարտարապետ Հայոց շինից, <sup>13</sup>  
Այն իմ քաջ բնեսելիէլ այնչափ չըքնալ հրաշակերտեաց  
Մինչ միակ ֆայլէր ի մէջ հազարաւոր եկեղեցեաց .  
Եւ զարդիւք վայելզութեան գեր անցանէր զամենեցումբ,  
Ըզդեստովք անկուածոյ ծաղկէնը կար,  
Անօթիւք արծաթեղէն և կանթեղօք մեծապայծառ :  
Թողում ըզդիւրեղին ջահն և ըղմեծ խաչն արծաթի ,  
Գործ անդիւտ և չնաշխարհիկ գըտեալ միայն յԱնի քաղաք:  
Այսորիկ նըման երկնից լայն կամարին արփաճաճանչ  
Ջահանայր այդ վեհ տաճար, հիանալին տեսանողաց :  
Յո՛ւշ, մանկունք, հայեցարուք և զաշը մեր դարձուցէք այժմ,  
Տեսէք զի՞ այլակերպեալ տեսիլ դորին աղարտեցաւ :  
Այդ խորանք կամարակապ վլուղեալ ի վայր խոնարհեցան,  
Այդ կըմեայ միւնքդի կանգուն կացին այդպէս անվերնայրէ:  
Այդ սեղան սըրբութեան և զենարան անմահ գառինն  
Քանդեալ և թանձրախուռն հողով ծածկեալ անյայտացնաւ:  
Այդ գաւիթ մակաղատեղը ուր փարախէր բանաւոր հօտն ,  
Փոշովք լրցեալ կուրացաւ, գալաղ եղև արդ գաղանաց:  
Եւ զի հովիւն երկնաւոր անփոյթ եղև զհօտէն իւրոյ ,  
Բարձի թողի արար զայն որ թափառի մնայ անտերունչ  
Այսէս տեսաւ դատաստան երբ ոչ լեց հօտն իւր հովտին  
Այդպէս և միւս հազար եկեղեցիք յաւեր դարձան .  
Լըռեաց Աւետարան և Յիսուսի կենաց բարբառ ,  
Լըռեցին փողք զօրաւոր՝ մարդարէիցըն բարձրագոչ .

Լըռեցին երգոց մըրմունքը, որ ի նոսին լըսէր անոյլ ,  
Լըռեցին Առաքելոց բանք որ յամէն երկիր հընչէր .  
Եւ Յիսուս ի տաճարէս, Անւոյ տաճարք կործանեցան :  
Սուգ առին, Այսնի մանկունք և ձանապարհք եկեղեցեաց  
Ոչ ևս գոյր բնաւ երթեւեկ հանդէս տօնից տարեկանաց,  
Եւ ոչ իսկ ի նոսին տօնակատար հանդիսադիրք .  
Մանկունք իմ օրհներգու զենեալ եղեն առ սեղանովք ,  
Յորդեաց արիւնի հէղմանէ, լցան կմունք սուրբ տաճարաց:  
Քահանայք և պաշտօնեացը գերի գնացին կտակարանօք ,  
Եւ տարեալ յօտար աշխար, յօտար ուռիսըն կախեցին :  
Եւ ոչ որպէս իւրայէլ դարձան առ իս լի անձկանօք ,  
Այլ անդէն փակեալ մնացին մոռանալով զիս եղկելիս ,  
Արդ և ըզնուադ օրհնութեան հընչեն այժմիկ յերկիր օտար,  
Զոր հընչել չկամէր երբէք մինչ ըստիպէր անդ իւրայէլ :

Մինչև յե՛րը մոռանաս, Տէր, միթէ իսպա՞ռ և յաւիտեան,  
Մինչև յե՛րը ըստապանեցից այսպէս քոյր այցելութեան .  
Աւասիկ ոչ եօթնանասուն ամք չափեցան իմ գերութեան,  
Այլ ամաց եօթնեակ դարուց անցին զինե յողով չըրջանք .  
Այսպէս տակաւին ես մընացի անայցելու :

Ո՛վ արեւ և ո՛վ լըւսին, արագ արագ չափեցէք զօր,  
Թող սահին աւուրք ցաւոց գայ հասանի օրն իմ աղատ :  
Տէր, ինձ ե՞րը դու առաքես Զօրաբարէլ վերնորոգիչ ,  
Եւ ե՞րը ժողովուրդք իմ դառնան առ իս դան ցնծալից ,  
Որ յինէն զատեալ յայնժամ լալով գնացին ի տօր աշխարհն  
Ցերեսաց սըրտիւտելոյն ահիւ սաստիկ խուճապելով ,  
Գէթ այնու անցանիցէ օր բարկութեանըն վերահաս  
Որ զյետին բաժակ պատժոյն արբոյց շարժմամբ

ահագնադղորդ :

Ըստիպիմ աստ ի ցաւոյս ձեզ, ո՛վ մանկունք ողբանեցէր ,  
Ողբական բանիւ պատմել զգաղթականաց դերաշխարհումն ,  
Զոր առնէին աստանօր մինչ հայրենի զերկիր թողեալ  
Ուրբմիկ լալուտ աչօք ելեալ յինէն բաժանեցան :

Ա՛հ, յայնժամ էր տեսանել զնոցին լալին աշխարհահեծ ,  
Ըզտեսիլ ըզկերպարան թըլուառագոյն ուղեւորացն ,  
Որ երթային և լային որպէս երրեմն հրէտիան աղգն .

Շերքն ի ձեռըս դաւաղան տուեալ ելին դողդոջաքայլ,  
Որ բազմէին ի յաթուս գօտէպաշտեալ ի ծառայից :  
Իշխանքըն փառաւոր, որ յերիվարս պալարակապ  
Նըստէին շըքեղապէս և շրջէին ի հրապարակս,  
Այնպէս գնային հետիոտս քղանցք ըզդեստուցըն փոշոտեալ:  
Տընաշէն կանայք ըզտունս և ըզմառանս թողեալ ի լի,  
Ելին ըզդիտունս ի գիրկս տուեալ միով ձեռամբ  
Եւ միւսով ըզքեռանէ մանկանց կալեալ յուշիկաքայլ,  
Բոկանի գնացին լալով ընդ ճանապարհս տաժանալից,  
Ո՛հ, քընքուշ զոտըս մանկանց պատառտէր փըշուտ գետին:  
Ելին յառագաստից հարսունքն անքօղ փեսայալուրի  
Զի փեսայը նոցին զենան ի սուր գերչացն անագորոյն :  
Ելին և նորապասակ փեսայք զորկեալ ի նոր հարսանցն,  
Զի հարսունք պըսակստէր գերի գնացին ի Խուժաստան :  
Ելին այն պատկառու կոյս օրիորդք չըքնաղագեղ,  
Հերարձակ և հոլանի գնացին ի մէջ կարաւանին :  
Ելին հովիքն ի դաշտացըն Շիրակայ մնացեալ հօտիւք,  
Նորածին գառինքն ըզկնի մարց երթային բառաշելով:  
Ընդ հովիւսն և հովագործքն յակօս հերկին թողեալ զարօր  
Եւ զեզինս առեալ ելին, ոյց ոչ գոյր արտ յերկիր օտար :  
Այսգունակ դառըն կոծով ելին յինէն իմ ժողովուրդք,  
Թողին զամենապտուղ պարտէզս 'ւ այդիսըն դիներուխ,  
Թողին ըզդաշտորայս և զանդաստանս ցորենարեր,  
Եւ բազմատար մեծ ամբարս լի ցորենովք ատոքաճեմ :  
Ընդ սոսին զինչս և ըզդանձըս մեծութեան թողեալ ի յիս  
Անինչ և հացազուրկ ի վայր օտար պանդըխտեցան,  
Ուր կարօտ բերեալ հացի տառաստէին թըշուառապէս :  
Ոչ գոյր նոցա քնաւէին անդ ափ մի հողիկ սերմանելց,  
Ոյց արտօց չէր սահման ի Շիրակայ դաշտ լայնատարր .  
Ոչ այգի զիներեր, ոչ մըրդաստան բազմապտուղ,  
Ոչ բիւրաւոր խաչանց հօտ կամ պաճարաց խուռն երամակք,  
Որով անդ և այնովիք փափկանային ի ճոխ վայելս :  
Վասն այն յուշ բերեալ նոցա զի բարութիւն երկրի իմաց  
Դառնապէս հառաչէին զօր ամենայն արտասուելով:  
Բարէ զինչ ճայն ողորմուկ ածեալ մանկոն կարօտելց

Առ ծնօղըն աղքատիկ, լայր և ասէր հեկեկալով.  
Ո՞ւր են ոչխարքըն մեր, ո՞ւր իմ սիրուն քընքուշ գառինք,  
Զորս տանէի յարօտ ի մարգ և կայտոէին ուրախ ուրախ .  
Ո՞ւր մաքիքըն կաթնատուր, կաթնածարաւ եմ ես, մայրիկ .  
Ո՞ւր կովուց իւղ զուարթարար, որ զիս առնէր  
փափուկ կայտառ .  
Ո՞ւր այն Շիրակայ գարնանագեղ մարդագետինք,  
Ո՞ւր ի վերայ գալարեաց ես խայտայի ընդ գառնոււկիս .  
Ո՞ւր հովիտք և այն խաղացը յորդահոս ջուրցըն խոխոջիւն,  
Առ որովք յամարան կեանս վարէաք մեք հովասուն .  
Ո՞ւր է զորն այն ծաղկոցաց, ուր ընդ ընկերու իմ գընայի,  
Ժողովեալ յազնիւ ծաղկանց և փունջ կապեալ բերէի ձեզ .  
Ո՞ւր զըւարթ պարտիզիկն իմ, որ Ախուրեան գետոյն յեզերու  
Զոր հայրիկդ իմ տընկեաց ձեռօք, ես ջուր ետու  
մատաղ տընկոցն :

Եւ ո՞ւր այգեաց բարունակք, յորոց ողկոյգքըն կախէին,  
Եւ կըթեալ ես ուտէի, ա՛հ, մեծապտուղ սև սև ողկոյգք .  
Ո՛վ հայր իմ և դու մայրիկ, ես մեռանիմ ի կարօտոյ,  
Առէք զիս տարէք դարձեալ ի հայրենին իմ պերճ Անին :  
Այսպէս կարօտէին և ընդ մանկան ծնողքն անձարակ,  
Որպիսեօք Ադամ, Եւայ յորժամ ելին յեղեմ դրախտէն  
Անմոռաց ի մըտի միշտ ըզփափկութեան վայրն ունելով:  
Քանզի դրախտ էի և ես ամենապիւտ և շահեկան ,  
Զորդիսն իմ զոր յիս Տէրն ետ պարարէի առատ բարեօք :  
Այլ յորժամ ստունդանեցին նոքա բանիցն Աստածայնոյ,  
Ոչ կացեալ յուստի նորա և ոչ գնացեալ ըստ իրաւանցն,  
Տէրն եհան ի փափկութեանցս վրասրեաց յօտար աշխարհ  
Եւ զորդիս յինէն իսպառ և ի նոցունց զիս բաժանեաց,  
Չետ անդամ նոցա տեղի գոնեայ բնակիլ դրախտիս ի մօտ,  
Որով ոչ ես ի նոսա և նոքա յիս մնային կարօտ :

Այլ ես արդ ձայն արկանեմառ ձեզ որդիք իմ տարագիր  
Ո՞ւր էք արդ ի Լեհաստան թէ ի Մաճառս ցիր ցան եղեալ,  
Եւ Դանուբի գետով նըստեալ, յիշէք զԱնին և զԱխուրեան  
Որ մին ըզկաթ և միւսն ըզզուր ձեզ արրուցին առատ առատ .  
Յո՞ւշ լիզի ձեզ յուշ երկիր ծնընդ եան և հայրենեաց ,

Եւ մոռանա՞ք ի սրբաէ զողորմելի Անի քաղաքու :  
Փութացէ՞ք փութացէ՞ք յայց նըշխարաց այդ մնացելոց ,  
Որ ահա տակաւ տակաւ վայր իջանեն բարձրակամարդու ,  
Եւ ընդ երկրաւ զերդ մեռեալ ծածկին բնաւին անհետանան ,  
Ո՛հ , եկեալ յայնժամ առ իս ոչ գըտանէք նըշխարիկ մի :  
Ո՛վ երկին , անձրևահար և ձիւնածեծ զիս մի' առներ ,  
Եւ հողմունք սասանիչ , յիս մի' բաղսէք ի հիւսիսոյ .  
Սի՛ նոր նոր այլ զիս քանդէք և դուք , ո՛վ ձեռք աւերածող .  
Թո՞ւ մնասցեն անկորուստ իմ այս նըշխարը առ ի նըշան  
Առաջին իմոյս փառաց , որ յինէն խոյս ետ և փախեաւ :  
Եւ ոգին աշխարհադէտ , որ շուրջ յածի յամէն աշխարհ ,  
Յիս եկեալ զշայոց պարծանա ինեւ նա քաջ նըշմարեսցէ ,  
Ո՛հ , արդի շիջեալ փառօքս , ի միտ առցէ գանցելոց շուքն :  
Նա յաւէտ , որ այժմ եկեալ էք դուք մանկունք իմ հարազատ ,  
Նայեցայք աւադ աչօք յիմ այս տեսիլ աշխարելի ,  
Իցէ՛ թէ գութ շարժիցի մանկաւոյդ ի սիրտ գիւրագորով  
Մնացելոյս այս խնայել , զիս նորոգել ի փառօք նոր ,  
Եւ ի գիրկ այրույս կըրկին գըգուիլ սիրովն իմ մայրական .  
Վա՛շ , յայնժամ տառապեալ մայրս լինի ոգւով ուրախամիտ ,  
Ուստերովք և դըստերովք բերկրեալ որպէս մայր եօթնածին ,  
Նոր փառօք ըստ առաջնոյն բարդաւածեալ ամենայնիւ ,  
Զառաջինն մոռանալով , վերջնով լիցի մըխիթարեալ :

Այդպէ՞ս եղիցի քեզ , դուռ մայր Անի անզաւակեալ ,  
Տուր այժմիկ գուլ և գաղար ողբոցդ այդմիկ գառնահառաչ .  
Ժամ է արդէն և որդւոցս առ քեզ զզձայն յուսադրական  
Արձակել ուրախալիր ծանրաթախծիդ լինել սիրովիչ ,  
Նո՞ր քեզ աւետիս հընչել ձայնիւ գուշակաւոր :  
Եւ ասիկ եկեալ եհաս գար ոսկեղէն բարենըշան ,  
Որ ըզքեզ ըստ առաջին նոր նորոգէ գարձեալ ի փառս :  
Հաշտութեան նըշան ուխտին արդ երկի զքել ի կամար ,  
Քաղցրութեան յամպոյն անձրւ գայ և ցօղի քոյդ ի վերայ :  
Եւ ընդ քեզ ո՞վ ասուապեալ սըրտմըտելոյն հաշտեցաւ սիրտ ,  
Եւ երդնու նա յաւիտեան այլ ոչ ըզքեզ մերձել այդպէս :  
Որ ըզքեզ այրիութեամբ տառապեցոյց այդշափ երկար ,

— 35 —  
Նոյն և արդէն ողորմել հանդերձեալ է սիրովն անչափ ,  
Ոչ մերժեալ յաւիտեան , թէպէտ եհար այլ բըժըշկէ ,  
Ցետ այդքան երկար ձմերանդ նա քեզ բերէ նորեկ գարուն :  
Որ այժմիկ հողարլուր թանձըր ձիւնով թաղեալ հեծես ,  
Դու զօրէն գարնանւոյն զգեղ վայելուչ զարդարիցիս :  
Հընչեսցէ հարաւն ի քեզ և հալեսցին ձիւնքըդ դիզեալ ,  
Եւ ի հողոյդ քաջարոյս ծլին ծաղկունք նորափըթիթ ,  
Բուրեսցին անոյշ հոտով և զինայիցիս դու ի նոսին :  
Առաւոտ նոր արեւով ծագեսցի քեզ լուսանորոգ ,  
Մերժեսցէ զգիշերդ ի քէն և զուարձասցիս դու առ լուսով ,  
Ի խաւար երկրէդ եւեալ նոր երկնից արփուվ երեւեսցիս ,  
Եւ յայդշափ խոնարհելոյդ , ի վեր կըրկին բարձրանայցես :  
Շինեսցին քո աւերակը և կանդնեսցին վայելչապանծ ,  
Ընդարձակ ըստ առաջնոյն յօրինեսցին և հրապարակքդ .  
Հարկեւոր և պատուական ծերք ի յաթոռու բազմեսցին անդ ,  
Խուռներամքնասցեն մարդիկ և խաղասցեն ինմա մանկունք ,  
Զարմասցին , որ զայս տեսցեն ըզնորոգումըն լըքելոց :  
Մահարձանքըդ կիսաթող կանդնին կացցեն հըսկայաբարձ ,  
Որ ի նմա հողածածուկ քաջաց անուանքըն կարդասցին :  
Համբարուք , յուշկապարիկ մերժեալ ի քէն հեռանայցեն ,  
Ողնիք , աղուէսք մի' այլ ևս եկեալ ի քեզ դընիցեն բոյն :  
Եւ զգայլոց վոհմակն ի քէն հալածեսցէ հովիւըն քաջ ,  
Եւ ըզհօտ իւր սիրեցեալ անդրէն ի քեզ արածեսցէ :  
Այդ փըլեալ եկեղեցիքդ կանդնին դարձեալ վայելչարար ,  
Եւ խորանքըդ խոնարհեալ վեր բարձրասցին կամարազարդ ,  
Ընդ հողով ծածկեալ սեղանքդ անդրէն սըրբեալ  
յարդարեսցին :

Եւ ի հրոյն թաքրուցելոյ , զոր և ի քեզ ցարդ պահէ Տէրն , 15  
Լուցցին նոր վառ ի վառ ձրագունք և չահքըդ խաւարեալ ,  
Արփաւոր և փառաւոր երկին յերկրի վրցիս փայլեալ .  
Դու յորժամ այժմունակ զարդարիցիս հարսին ի գեղ ,  
Դարձ առնու վեսայն անդրէն , որ են ի քէն մեկուսացւ ,  
Յառագաստ քոյին առ հարսնըդ քոզազարդ նորապլնեալ  
Որ խանդակաթ ես ի սէր՝ քո անձկալույդ հեռացելոց :  
Եւ ապա զհարսնարանին երդ ցընծալից երդով մանկունքդ

Հընչեսցեն, և դու հարսն ընդ փեսայիդ քո հըրձուեսցիս:  
Այսպէ՞ս գնան անցանին քո դառն աւուրք այրիութեան,  
Այսպէս խընդաս, ուրախանաս մուանալով զանցելցն ցաւ,  
դու՝ որ այժմիկ ողբակոծ յայրւոյդ վերայ սըգ աս և լաս:

Այլ և քո յանդս անմըշակ ելցեն յայնժամ հողավաստակք,  
Հասկաթուռ ցորենով խարտիշասցին ողջ արտորայքդ,  
Եւ այգիք քո դաշտախիլ սորեկ որթով նոր տնկեսցին:  
Լիարեր տոկմականօք լընանիցիս դու պատարուն,  
Աիրելիքն ի խնճոյից սեղան ակումբ առցեն զըւարձ,  
Լըսիցին ի քեզ կըրկին ձայն գուսանաց և երգեցիին:  
Քո լերինք և դաշտորայք լըցեալ հօտիւք և պաճարօք,  
Ուր բառաչ գառանց որթուց, անդ ինոսա հընչեսցի խառն,  
Եւ զըստինս ուռուցիկ բարձեալ բերցեն ի տուն կաթամբ,  
Մանկունքրդ քո նորածին վայելեսցեն ուրախ ուրախ:  
Երանի՛ տայցեն քեզ, որ ասացին, վա՛յ քեզ, Ա՛նի,  
Կորուսեալ ամաչեսցեն, որ կործանմանդ վա՛շ կարդացին.  
Օ՛, դու յայնժամ երջանիկ ես, զի այդ բաժակ

լի դառնութեան

Փոխարկեալ ի քաղցրութիւն անոյշ լիցի քո բերանոյդ,  
Եւ արբցես ախորժօրէն և հեշտասցիս յաւէտ ի նոյն:  
Զօրէն զաւակածին կընջն որ ձիչ բառնայ յերկունս,  
Այլ յորժամ ծնանի ողջամբ չոյտ մոռանայ զերկանցն ըղցաւ:  
Եւ՝ որ այդքան վըշտօք ի քեզ կըրեցեր զերկունըս բիւր ցաւոց,  
Գայ ժամ և հասեալ է, զի մոռասցիս զայն ամենայն.  
Հերիք ապա լաս այդպէս, այլ լընժամշիր յուսապատար:

Որպէ՞ս զի քաղցր են այդ բանք դառնացելոյ  
անձինս դիւրիչ,

Ո՞վ ըզձեզ աւետատու տըրտմեցելոյս երեր, մանկունք,  
Ո՞վ ըզձեզ այսըր հասոյց ի հեռաւոր վայրաց տեղեաց,  
իմ հրաւիրակն է այն՝ դիտեմ, որ զիս ետես և լաց ու ժդին,  
իմ ողբերգուն է այն՝ դիտեմ, որ զհայրենին լաց ի նըժդեհ:  
Ես չնորհունիմ ձեզ, մանկունք, որ ի յուսով զիս մսիթարէք,  
Երանի թէ այդոցիկ լրումըն բանից գայր հասանէր,

Զայցելու ձեռն ի վերուստ յիս կառկառեալ տեսանէի,  
Որ ի գեղն այն առաջին զիս նորոգէր վայելօրէն.  
Վա՛շ, յայնժամ ըզձայն ողբոյս փոխարկէի յուրախութեանն,  
Եւ խըցէի զայրիւր աչացս, ոչ ևս բըղիսել ջուր աղի դառն:  
Եւ զորդեակարդ մայրասէր գըզ ուեալի գիրկըս փափիկասուն  
Տածէի որպէս յայնժամ ի կաթնաբուխ ստեանց Շիրակայի,  
Աիրով անձուկ և ըզձիւք խանդաղատեալ վայրիայէի:

Այլ խիթամ, զի մի՛ գուցէ ըստ առաջնոյն  
նոր ժողովուրդքս

Ապաշնորհ, օրինաղանց լիցին դարձեալ առ Այցելուն  
Նըման խրայէլի սիրեալ ազդին այն ուխտադրուժ,  
Որ զայնշափ բարութիւնս ի ձեռանէ Տեառն ընկալան  
ի յերկիր բարի բնակեալ ի կաթն և մեղքը պարարեալ  
Մոռացան տակաւին զավարգեւատուն և բարերարն:  
Տէրըն ցանոյր և անդէն, ի գլուխ ածէր զուխտին պայման,  
ի բարի ազատ երկրէն հանեալ վարէր ի բարիլոն,  
Զերուսազէմ, ըզտաճար մատնէր ի ձեռս աւերողացն  
Ոյք ասէին քակեցէք և հասուցէք մինչև ի հիմն:  
Մի՛ և զայս ընդ իս արասցէ Տէրն իրաւադատ,  
Կըրկնակի տացէ ըմպել սըրտմըտութեան իւրոյ գրաժակ,  
Մինչ ի նոր խոտոր շաւիլ հետեւեսցին իմ ժողովուրդք.  
Եղուկ ինձ, և վա՛յ յայնժամ, զի դառնադոյն ևս է վերջինն:  
Օ՛ն, մանկունք, գնացէք աստի, հերիք իմ լաց

և ձեր կական,

Թողէ՞ք, միայն լամ ու հեծեմ, մինչեւ լընու իմ ապաշաւ,  
Արասցէ թող և որպէս Տէրըն կամի արդարադատ,  
Որ զբաղաքս մատնէյաւեր երբ ժողովուրդքն չանսան զօրէնս:  
Իսկ դու արդ ևս, ողբերգո՛ւ, փոխեա՛ ըզձայն

քնարիդ ողբոց,

Հատ եղեւ մանկուոյդ իմոյ յայս տեսարան կալ սրտառուչ  
կայլակել աղի վըտակս ի սեւաքօղ մօրըս գըլուխ,  
ի գըլիսոյ էջ մինչ ի գոգս և ծովացաւ ծոցն իմ յարտօսր:  
Ո՛ն, ո՞վ Տէր, զիս արտասուաց աման եղիր

Հայոց մանկուոյն:

Ոչ կարեմ այլ հանդուրժել, խաւարեցան լալօնք աչացս,

Միթէ զե՞տ եմ Ախուրեան, որ զգերարտօսը հանեմ առասու  
Եւ հեղում թափեմ աստէն իթաւալեալ յայդ մահարձանսդ։  
Հայեաց Տէր, հայեաց ընդ իս, ո՞հ, շատ եղև

իմ տառապանք։

Ա՛ռ յինէն, ողբերգու, զի դիւրեցայց գէթ ի ցաւոցա,  
Որչափ լայ մանկտին ըզլաց, ես մորմովիմ աղէկըտուր։  
Ա՛ռ և տար այժմ ըզդոսին ի տեսարան այն հոգեղուարձ,  
Որ ըսփոփէ ըզսուդ սըրտին և հատանէ զալիւն աչաց։



## Ն Ո Ւ Ա Գ

Ն Ա Խ Ա Դ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ե Ր Ր Ո Ր Դ Ն Ո Ւ Ա Դ Ի Ն

Ի յերորդ մասին այսմիկ՝ հրաւիրէ ի սուրբ և  
Մայր կաթուղիկէ Եկեղեցին Եջմիածնի . անտի յԱր-  
տաշատ ի խոր վիրապն , ուր արկաւ լուսատուն մեր  
Գրիգորիս : Բերէ անտի յԵփրատ և անդուստ հանէ  
ի լեռառն Սեպուհ , յորում տայ Հրաւիրակն զման-  
կտին՝ Պլուզ Յովհանէս վարդապետին Երդնկացւոյ՝  
յընեցուցանել զնոսին անդր: Եւ իջուցեալ ածէ յօշա-  
կան գիւղ ի տապան սրբոյն Մեսրովպայ . աւետիս  
հրաւիրակին առ նա . խրատք Երանելոյն առ ման-  
կտին : Եւ անտի բերէ յԱւարայրի դաշան , ուր թա-  
խանձանօք հրաւիրակին իջանէ Եղիշէ վարդապետն  
և ճեմեցուցանէ զմանկտին ի տեղի նահատակու-  
թեան քաջին վարդանայ և նորին նիզակակցացն .  
խրատք նորա առ մանկտին , բանք Հրաւիրակին  
և վերջ :

## Ե Ր Ր Ո Ր Դ

Ա չ Ա , զօր անդ խոստացայ , աստ կատարե՛մ սիրողաբար ,  
Առեալ ըղձեղ , ո՛վ մանկտիք , տանիմանդրէն՝ Վաղարշապատ  
ի տաճարն Աստուածակերտ ի մայրըն մեր ամենածին  
ի վեհ և գերապանծ աթոռ Հայոց Լուսաւորչին :

Աստանօր ցուցաւ ահա տեսիլն այն մեծ զարմանասքանչ  
Հըսկողին գիշերաժամ առ փըրկուժեան տանըս Հայոց ,  
Բացումն խորանացն երկնից յարկին հաստատութեանն ,  
Խջանել լուսաւոր առն՝ ուռն ի ձեռին ոսկիածոյլ ,  
Որ բաղսեալ զյատակ երկրիս , հընչեաց թընթիւն  
ի խոր անդունդ :

Ըզտաճարիս վեհական՝ զհիմըն կառոյց անխախտելի  
Այն վերին ճարտարապետն առ ի Հօրէն միածին բանն :  
Աղբիւր վերնահոսան ջրոյն զենդանի չնորհաց Հոգւոյն  
Բըղիսեցաւ և աստանօր որպէս երբեմն յԵրուսաղէմ ,  
Երաւալեալ ի յԱյրարատ լեալ աւազան մըկըրառութեան ,  
Կապուտակ և երկնագոյն ի ծով դարձան երեսք դաշտաց ,  
Յոր իջեալ հօտ սեւաթոյր ազգըն Հայոց խաւարազգած ,  
Մըկըրտեալ սպիտակացան փայլեալք ի գեղին լուսակիզն ,  
Զիւնապէս մաքրազարդեալք արժանացան վերին կենաց :

Մըտէք , մանկունք , երկիւղիւ երկիր պագցուք  
տեղւոյն Խջման  
Ուր ներբանք Աստուածային կացին որպէս ի Սինէ լեռառն .  
Անդ հրաշիւք տըպաւորէր տիպ աղիւսայ շաղիւղափայլ ,  
Զոր Մովսէս , Յեսու և ծերք նըշմարէին զարմանալեօք ,

Սակայն աստ ոչ իջելցյն ոտից նըշմարք մնացին և եթ՝  
չապա նոյն հայրածին բան եկաց ի սմին ողջամբ յաւէժ։  
Զի սա է լեռոն ընդ որում Տէրըն հաճեալ յերկնուստ անտի  
էջ բոլոր Աստուածութեամբն և բնակեցաւ ի սմա խսպառ,  
խոստացաւ այլ ևս աստէն ոչ բաժանիլ ի յաւիտեան։  
Այս տուն վեհնաճեմ պայծառապարծ և մեծահրաշ,  
Ոչ իբրև Սողոմնեան ըստ տաճարին այն գերազուք  
կերտեցաւ ի նիւթոյ քարանց լերանց կոփեալ մըրճօք,  
Այլ ի վիմաց մարմնեղին կոփեալ ի մուրճ խաչին ի վիշտո  
Յայն ընտիր ընտիր քարանց հիմնազրդեալ յօրինեցաւ։  
Զատաճարաւս կան պարաւոր և կուսանաց վըկայարանք  
Եւ հընձանք արեան գինուց, ուր ճըմիեցան խաչին ողկոցգք  
Հոփիսիմէ, Գաղիանէ սուրբ ընկերօք ընտրելագոյն։  
Որ ի Ֆայրից արեւմըտեան դիմեալ հասին խուճապելրվ  
Յարկելս ի Այրարատ փեսաւէրին լինել սատար,  
Ընդ արիւն Գրիգորին և կուսական խառնել զարիւն,  
Որ ըգհարսըն հեռացեալ եկեղեցին Հայտատանեայց  
Փեսային երկնաւորի մուծանիցին ի յառագաստ։  
Խմաստուն սուրբ կուսանք և հրաւիրեալքն ի հարսանիսն  
Զարսանեաց աղնիւ հանդերձ կարմիր նիւթով  
կազմեցին աստ,  
Ըզդեցեալ զարդարեցան արիւնազդեստ վայելզութեամբ,  
Եւ լուցեալ զըռուոյն լսապտերս պայծառ իւղով  
պարկեշտ վարուց,  
Փութացան ջահաղդեստեալ ի մուտ երկնից հարսնարանին։  
Խաչին սեղան կանգնեցաւ աստ հածոյական պատարագաց  
Յոյր վերայ ելին ի զոհ ողջակիզաց ամբիծ որոջք,  
Յորոց անոյշ հոտ բուրեալ՝ հոտոտեցաւ Տէրն ՚ի վերուստ  
Ընդ խախտեալ և տառապեալ եկեղեցւոյն Հայտատանեայց,  
Հաշտեցաւ սիրովն անչափ ի հուշտարար ընծայ սոցին։  
Աւասիկ ի կարկեհան և շափիւզայ յազնիւ քարանց  
Հայտատան եկեղեցւոյն եղ ըշշիմունս անդըրդուելի։

Մըտէք օ՞ն ի Վակայարան օրիորդին սուրբ Հոփիսիմեայ,  
Տալ համբւայր սուրբ նըշխարաց որ ըդիրիստոս կըրէրի վիշտ,

Որ փախեաւ յառագաստէն և պըսակէն եղծանելի,  
Որ սիրեաց ոչ երկրաւոր թագաւորին լինել ափկին,  
Տարփացեալ երկնաւորին և անթառամ սուրբ պըսակին։  
Տեսանէջը դուք ըզքարինս նոր Սիօնի վեհ տաճարիս  
Թէ զի՞ մեծ և գեղեցիկ ըստ տաճարին Սողոմոնի,  
Հայեցեալ զարմացարուք ընդ ոյժ քային մեր Տըրդատայ,  
Այն, որ ի մանուկ կուսէն պարտէր և ամաչէր։  
Որ ինքնին առ ի Մասեաց ութ մեծամեծ զայս յաղթ արձանս  
Բարձ իյուս հուժկու բազկաւն ած ի Տաճար վըկայուհոյս։  
Որ յայնժամ ըզմարմնեղին շինուած քակեաց հրաշագեղոյն,  
Նա ընդ այն ըզփոխարէնն հատոյց այսպէս ջերմըն սիրով,  
Բարձրագոյն խորանաչէն տաճար կանգնեալ կուսին յանուն  
Ի հանգիստ սըրբասընունդ խաչաչարչար մարմնոյն ամբիծ։

Հանեալ ըզձեզ, ո՛ մանկունք, հարսնացելցյն ի սենեկէս,  
ՅԱՀՄատաշտ փեսաւէրին ի խոր սենեակըն մուծանեմ,  
Ի վիրապն ջանդընդային դատապարտիցըն պատժարան,  
Ուր արկաւ մեղապարտ յազգէն Գրիգորն անդատապարտ  
Կապեալ ոտիւք և ձեռօք ի մէջ օձիցըն դառնաչունչ,  
Որպիսեօք Երեմիասն այն, որ յազգէն իւր ապահորհ,  
Ընկեցաւ ի գուբն անջուր ի մէջ առզմին դանդաղամած։

Սըրտիւ ի վայր խոնարհեալ իջէ՛ք մինչև յատակ հորոյս,  
Եւ յերկիր եղեալ զերեսը մածուսցուք զտեղեօքըն սուրբ,  
Որ պատուանդան և կայան եղեւ ոտից Երանելոյն,  
Եւ ուր զան հընդետասան տոկաց ոգւով համբերատար,  
Աղօթիւք մըշտամըռունչ հըսկեալ ըզտիւ և ըզգիւեր,  
Սինչև հընչէր ձայն ի վերուստ, արի՛ որ կասի գըիդ ներքնում  
Ե՛կ ի դուրս, Գրիգորիէ, ե՛կ լուսատու խաւարելց,  
Շատ եղեւ իմ ծառայիդ յայդ վայր ժուժել խաւարաբնակ։  
Զի՞նչ յայնժամ, աստուստ ի վեր ծագեալ արիւոյն  
գերապայծառ,

Լոյս վառէք զմութըն մերժէր ի մեծ տանէս Յորդումական,  
Ղիւազգեաց մոկենելց ըզգաստութիւն տայր աղօթիւք։  
Եւ զարքայն վարազակերպ փոխէր ի տիպ նոր և շըքնազ։  
Ով, աստ ոչ մեղան նըշմա օձք թիւնաւորք և չարաչունչք

Որպէս և ոչ Դանիէլին ի մէջ գըրին քաղց առխւծունք .  
Քանզի Տէրն ըզծառայն իւր չեթող երրէք ի ճեռանէ  
Այլ ընդ նըմա էջ ի խորս՝ որպէս ի գուրըն Յովսեփիայ :  
Եւ պաշտօնան յըզեաց նըմա ի հրեշտակաց չորրորդ դասէն, 17  
Որ և զայս ի պաշտօնանէն տեղեկանայր մարմնով Հրեշտական  
ի տօնի համբառնալցն խաչաղ րօշակ յաղթանակին  
Յեղովմայ ի յերկրէս դիմեալ յերկինս արիւնաձորձ :

Յուշ այսր, ո' մանկունք, յուշ լիցին ճեղ մեծ երախտիք  
Գրիգորի շարչարելցն յորդիս լուսոյ մեղ ծընողին .  
Որ յետ այնշափ կըտանաց էջ և յայս գուր գըժոխըրմէր,  
Եւ ըզմեզ, որ կենդանւոյն իջեալ էաք ի բանան անել,  
Զարչարանօքն մարմնոյն աղատելով եհան ի վեր :  
Եւ երկնից արքայութեան նոր ժողովաւրդ կաղմեալ մաքուր  
Խուեցաւ Քրիստոսին զմեղ իրու զկոյս մի անարատ,  
Եւ տարեալ յանդիման կացոց երկնից հարսնարանին :

Հրաւիրէ ըզմեզ, մանկունք, Եկրատոն անտի դըզըչալով,  
Հայոց գետն աղենաբուղս, որ Յորդանան եղեւ Հայոց,  
Երթալ անդ և նըւադել վըլկըրտութիւն վերածնելոց  
Թորդուեան ազին ողջոյն յաւաղանին իւր նորասբանչ,  
Յանուն Հօր և Որդւոյ և վերածնող Հոգւոյն սըրբոյ :  
Հիացումն և նոր տեսարան աշխարհախումք էր աստիանօր,  
Նորընծայ սուրբ Հայրապետն, նոր քահանայ Գրիգորիոս  
Պըձնեալ պայծառազգեստ պատմուճանաւոն Ահարոնեան,  
Իջանէր ՚ի մէջ գետոյս հաւաացեալցն Տըրդատաւ,  
Որ հեղանացը զերդ ըզգառն և ըզգլուխ իւր ընդ առ աջովն  
Խոնարհէր, և ի նմանէ զմելըրտութիւն հայցէր սիրով:  
Բազմարիւր ընդ արքային իշխանք և զորք նորահաւատ  
Մերկացեալ մըտանէին յարդանդ ծնողիս ներընդունակ :  
Նշան հրաշատեսիլ որպէս անդէն ի Յորդանան  
Երեէր և աստանօր յերկնուստ, յերկրէ զարմանալեօք .  
Զի ըզտեղի առեալ Եկրատ բանայր ըզծոցն և ծովանայր,  
Ծնդ բոլոր դաշտիս երես հարթածաւալ տարածանէր,  
Այնպէս առ ինքն ընդունէր զազգըն ողջոյն Հայաստանեաց,  
Եւ ալիքն յադինակոյս վէտ վէտ յակունը դառնային

Ընթանալ պատգամաւոր լինել գրափատին աղրամեցելոյ,  
Նոր աւետիս ցընծութեան մատուցանել խոփոջելովն .  
Դու խընդա՛ զուարձացեալ, ո՛վ գարաստոն նախամարդոյն,  
Մի՛ այլ ևս այսուհետեւ ողբար զնորին զըրկումն ի քէն .  
Ահա ծնունդը որ ի նմանէ՝ բնակեալ յաւէժ ըզբոլորիւքդ ,  
Առ իս եկեալ մըլըրտին՝ և զօրանան զինու հոգւոյն  
ի ջարդել և ջախջախել զգլուխ վիշապին սողեալ ի քեզ .  
Եւ փայլին փառօք որպէս յայնժամ Աղամ քոյդ թագաւորն,  
Ելանեն վերծեմեալ երկնից ի դրախտըն լուսազուարձ .  
Նոքա ոչ ևս կարօտին երկրաւորիդ և եղծելոյդ :

Զի՞ աւգա զարմանաց նըշան յայտնէր և ի յերկնուստ .  
Երկին ցելցը ի վերոյ, զուարթունք յերկիր իջանէին ,  
Ընդ նոսին լուսոյ ցընցուղ կոսէր զգետովն ծիրանեփայլ ,  
Երեւէր և Տէրունեան նըշան խաչին լուսաճաճանչ ,  
ի վերայ օդոյն կախեալ վըկայ լինէր խաչեցելոյն ,  
Եւ ի ջուր մըլըրտելոցն գոլ պահապան և զօրափիդ :

Հայրապետըն խաչակիր մինչ արկանէր զիւղն օրհնութեան  
Զանձամիր երախայից և ի Քրիստոս տղայացելոց ,  
Կաթ իւղոյն ծաւալանայր ընդ բովանդակ ջրոյն ի յերես ,  
ի կապոյտ, ի ծիրանի և գոյն կանաչ ծածանելով ,  
Եւ շըրջան առեալ խաղար զմէն մի մարմնովք մըլըրտելոցն ,  
իւրովի առանց ճեռին նոր քրիստոնէայս կընքէր զամէն ,  
Եւ զուարթունքն, որ ըզփաշիւն յօդոյն վերայ սաւառնէին ,  
Որպէս անդ ի Բեթէհէմ և ասա ըղնոյն բարբառէին .  
Մէծ ուրախութիւն, Յիսուս Ֆընաւ ՚ի Հայաստան ,  
Զուշ, ո՛վ մըլըրտեալք, այսօր զգեցայք դուք ըզֆրիստոս ,  
Հարազատ որդի Եղէք և երկնաւոր Հօրըն ճերոյ ,  
Եւ եղբարք Յիսուսի, և իսկ նորուն ժառանդակիցք ,  
Այսպէս Ելին ի լցո ազգըն Հայոց խաւարասնունդ ,  
Նորահաշ եղանակաւս մըլըրտելով ի Գրիգորէն ,  
Զգոյն այծից սկսութեան ի մաքրութիւն մեան փոխարկեալ ,  
Լուսազգեաց եղեն ողջոյն հոգւոյն ծնընդեամբըն կըրկնակին

Աիրելի է ճեղ, մանկունք, ընդ Եկրատին յավն իջանէլ ,  
ի Սեպուհ ամենազով լիտոն ելանել գարանապեաց ,

Որ տենչալի դադար եղեւ փախուցելոյն ի յաշխարհէ ,  
Եւ քըրտնաջան մըշակին հանգըստարան ի վաստակոցն :  
Այլ աստ իմ արքարաձայն թողլըսեսցէ այժմիկ քընար ,  
Հընչեսցէ Պոլուզ Յովհաննուն , որ քաղցրաձայն է և անոյշ :  
Ե՛կ ապա , հասի՛ր ուրեմն , և զբոյդ հա՛ր դու ,  
ճարտար մատամբէդ :

Սքանչելի Սեպուհ լերին դու գովասան ճահողապէս .  
Ե՛կ , ժտեմ , ես դիւր առից , դու զենուանէ կալըզմանկտույն ,  
ի տեղիսն , յոր Գրիգորին կոմեցին ոտքըն երկնամեմ ,  
Շուրջ ածեալ պատմեա՛ նոցա զխորին խորհուրդ  
բարձու լերինս :

Տարփացեալ այդչափ , մանկունք , լուսատուին Հօր  
ոգւոց ձերում ,

Մինչև ի սէր նորին այժմ բարձրանալով ի գլուխ լերինս  
Ցանկալոյն 'ի տուն սիրեալ և ձեմարան ձեմել կամիք ,  
Ես յօժար և անձանձրոյթ ածեալ ըզձեղ շուրջ՝ ի սըմին ,  
Զբարձրագոյն խորհուրդ սորախուն ինչ բանիւ արկից ի ճառ ,  
Երանելոյն ի պարծանս և ձեր նորին որդեացդ ի սէր :

Բարձրէ սա քանըլլափափ գերազանցիկ փառօք Սեպուհ ,  
Թէ ի նմա հանգեաւ տապանն ի փայտեղէն կազմեալ նիւթոց ,  
Որ փրկիչ եղեւ ութից անձանցն և եթ ի հեղձմանէն .

Այլ ի սմա Գրիգորիոս նոր հրաշակերտ տապան Հոգւոյն ,  
Որ զհանուր Հայաստանեայս զերծ ի ծովին կռապաշտութեան  
Դաւարկեալ յերկրէ յերկինս հան ի վերին նաւահանգիստն :

Երեւի սա գերագոյն և քան ըզլեառն Ամօրհացւոց ,  
Յոր՝ ի զոհ ըզսիրելին սիրոյն հանէր Աստուածակոչն ,  
Եւ փոխան նըմին ըզլոյն անդ ընդունէր ի Սարեկայն :  
Իսկ ի սա Գրիգորիոս գերաբուն անձն աստուածազգեաց  
Զբանեղէն ոգւոյն ծընունդս և աղօթից անոյշ բուրմունս ,  
Ըզմասունընտիր վարուց և զմգնութիւնս մարմնոյն ժուժկալ  
ընծայէր Տեառն Աստուծոյ նըմկէր հանոյ քան զպատարագս ,  
Եւ փոխան սոցին առնոյր զագդ մի ողջոյն հաւատացեալ :

Այլով քաղցրէ և Սեպուհ քան զկարմելուրն խըստագոյն ,  
Ուր ելեալ աղօթէր Նախանձաւեան աստուածամին

Առ ի ոչ տեղալ ամպոց յայդի անրեր Խորայէլեան ,  
Եւ զմնդրով ինքեան մատնէր հրոյն ի լուցեկիս երկնատեղաց :  
Բայց ի սա հայրըն խնամոտ ճշգրիտ պատկեր սիրաբուն Հօրն  
Աշօթէր իջուցանէր զանձրև չնորհաց յորդ ի վերուստ ,  
Յողէր արրուցանէր ըզնորատունկ այդին Հայոց  
Զոր տընկեաց չարչարանօքն և ամեցոց սուրբ աղօթիւքն :

Անդանօր Եղիսէ տիպարն իւրոյ վարդապետին  
Տեսանէր առ ինքն իջեալ ըզհոդեղէն զօրաց բանակս ,  
Եւ պատանւոյն անտեսող բանայր անդէն զաչս աղօթիւքն .  
Որ ըզլեառն ետես լցեալ հրեղէն կառօք և հեծելօք ,  
Աստանօր ըզդիրիդորիւ և սէրարփի վեհ սրորէիւն  
Իջեալ կային ի յերկնուստ հոյլք սրովքէից պարառաբար  
կալ ի դէտ հանդիսի ժուժկալատար ճըգնաւորին ,  
Եւ զարմացմանք սաւառնեալ պատգամաւոր գոլի յերկինս ,  
Զօրու վերին ի տեսարան զարմանալոյն փութացուցեալ :  
Թողըւմ և նդ այլ լերանց վեհագունից համեմատել  
Եւ յաւէտ զփառս և պարծանս առաւելուլ իմոյ լերինս ,  
Զոր սիրեալ ես յայլ նըւագ ներբողեցի բազմապատիկ :  
Խաչեցելոյն ըզխորհուրդ , որ երեւե հրաշիք ի սմա , 18  
Յօժարիմ պատմել , մանկունք , զի լըսելով զարմանայցէք :

Ոչ ժուժեալ ընդ անբարի գնացը իւրոց նախարարացն՝  
Զթագն ընկէց արբայական նախանձաւորըն Տըրդատէս ,  
Զոգաւ և ընթացաւ կոմաւն ըզկետ երկնաւորին  
Եւ ընդ իւրում լըւատուին սիրեաց լինել լեռնակեցիկ :  
Աստ յայնժամ արտասուեալ զալըստամբիցըն գանդատէր  
Հեռադէտ հովուին ի լուր որ կանխապէս գիտէր հոդւովն ,  
Եւ սըրբոյն բազում ինչ աստ խօսեալ նըմի զապագայիցն ,  
Առնոյր զարբայական ըզգէն նորին կայսերաձիր ,  
Եւ օծեալ խաչանըման հրաշիք տընկէր յօդոյն վերայ :  
Այսպէս խաչին փոխանակ ձօնեալ գործի զայն ըսպանման ,  
Որ և իմ աշաց երբեմն երեւեցաւ յայտնատեմիլ  
Ի լեառն այս բարձրանըշան զոր ի գովել յորդորեցայ :

Տանիմայժմըզն ըզձեղ , մանկունք , ի մենարան Մանի կուոին 19  
Որ զայլ իմն ընտրեալ ըզվարս , այլով խաչի հանդիսանայր .

Ոչ արեամբ իրրե զընկերս նըւէր ձօնէր զինքն անձկալոյն  
Ա.Ա. անարիւն հանապազ հոգ ւողն ի սիրտ ողջակիցեալ  
Պատարագ բոլորանուէր ընծայէր զանցն քրիստոսին ,  
Եւ այսու վեհ ևս կրօնիւք նա փայլեցաւ ի խաչակիրսն :  
ի լքառն այս մինչ աղօթէր և զըւարթունն գրիգորիոս  
Պատահէր յաւուր միում Մանի կուսին ի յայրի աստ ,  
Եւ կուսին տեսեալ աստուստ աղերս ածէր առ նա ճայնիւ .  
Մի՛ առ իս եկեսջիր , ասէր , այժմիկ զի մերկ եմ , հայր ,  
Պատկառիմ ես աղախինս՝ պատկառելի քոյդ յերեսաց ,  
Երթ և յետ երից աւուրց առա ել դու յայց աղախնոյս :  
Եւ սուրբ հօրն ըսպասելով եկըն դարձեալ ըստ պայմանին ,  
Զհարսըն եգիտ հրաւիրեալ յայրէս՝ երկնից ի հարսնարան  
Առ ցանկալին իւր ջիսուս , որում եղև մայր կուսութեամբ :  
Եւ զնորա մարմին մաքուր ամիսին ելով յիւր ճըգնարան ,  
Փեսաւէրն այնուհետև զհարսին սենեակըն ժառանգէր .  
Մինչև հաս և Գրիգորին յայրէս այսմիկ փոխիլ յերկնաս ,  
Ընդ հարսին նախահրաւէր ի լրւածեմ առագ աստին  
Յաւէրթ պարել զուարճանալ առ տարփախն փեսայն ջիսուս :  
Ա.Ա. հըսկող հովուին մարմնոյ՝ հովիւքն եղեն ըսպասաւոր ,  
Զի վայել էր իսկ նոցին՝ ասէ պատմիչըն խորենեան ,  
Որ փըրկին մերոյ ծնընդեան եղեն անդէն խորհըրդածուք ,  
Եւ աստէն հովուին չայոց՝ կալ սպասաւոր ճըգնող մարմնոյն ,  
Ամիսին քարակուտափ , ոչ գիտելով թէ ո՛վ իցէ :

Հուպ այրիս առ նըշխարօք նորին բայի յորդ՝ Լուսազրիւրն  
Ոյր չնորհիւ ընդ լըւանալ կուրին՝ բացան աչքըն հրաշիւք :  
Սելովամ էր միթէ՝ այն բացեալ ի դուլիս լերին Սեպուհ :  
Կայ և մի այլ ազրիւր՝ ջուր բարեհամ վերաձայնեալ ,  
Որ անտուստ իսկըզբանէ դառն էր իրու զջուր Մեռային .  
Իսկ խաչակիք նըշանաւ դրումեալ յաջոյն իմ Գրիգորի ,  
Յաղտաղտուկ ի բնութենէն յանուշակ ջուր փոխարկեցաւ :  
Իջէք այժմիկ , ո՛մանկունք , արդ ի ծործորս դարանաղեաց  
Ուր դարանի ազնիւ աղն որ չէ չնորհեալ այլում լերանց :  
Գարնայնոյ ջերին օդովք մինչ զօրանայ տապ արեւուն ,  
Զիւնք այդ լերանց բարձրաբերձ և պնդութիւնք

սառնամանեաց

Լուծանին , և կաթելով դիզեալ լինուն ի քարանձաւս ,  
Եւ պավեալ կըրկին անդէն գառնան սառոց բիւրեղափայլ :  
Զըմերանի երր սառին ջրոց բնութիւնքըն լուծական ,  
Ըսկըսնուն յայնժամ սառոցք հավլի ծորիլ ի ստոր անձաւս ,  
Սառն ազրիւրակ՝ աւազանիկ կազմեն ի ջրոց զուտ և մաքուր .  
Յոց եկեալ տանէին երբեմն ի պէտու մեր արքայից ,  
Զոր արբեալ զօրանային՝ ստ առողջային ջրոյն զօրութեան :  
Նա և լերանց ի խորածորս ի ծոց հողայն ընդ առ երկրաւ .  
Դարանեալ կան բազմադոյն աղրիւրք ազի սպիտակ աղնիւ ,  
Զոր արևուն ջերմութիւն հանէ ի վեր ի խորութեանցն ,  
Եւ ծըծեալ հրցն զօրութեամբ զիսառնեալ մասունք  
խնաւութեան ,  
Յըստակեալ պարզի յայնժամ պատուական աղն անուշարար .  
Յայսմանէ առեալ զանուն կոչի լերինք Դարանաղեաց :

Այսորիկ են ահա իմանալի և ըգգ ավի

Սըմբալի Սեպուհ լերինս փառք սեպհական և տիրամիր ,  
Զորոց ես ոչ համօրէն , այլ համառօտըս պատմեցի .  
Պերձագունինթէ ցանկաքինուադ նախկին զէկառապերի .<sup>20</sup>  
Ուր յաւէտ անդանօր դըրուատեցի սու մէր Սըրբոյն :  
Ա՛ռ հապա , ո՛հրաւիրակ , ա՛ռ ըցմանկտիս տար , ուր կամինն ,  
Զըսդ հայցուած հեշտալուր ահա սիրով կատարեցի :

Ուր տարայց , ոչ գիտեմ , առեալ ըգձեղ այժմիկ աստուստ ,  
Ի թորդամն թէ յօշական գիւղն առ չիրիմ երտնեւոյն  
Մեսրովզայ լըւաւորչին խաւար մըտաց Հայոց մանկոււցող :  
Անդ այո՛ , գիտեմ կամիք երթալ անդէն հատուցանել  
Զարժանին ըլպարտըս մեր այնպիսում հօր երախտամեծ ,  
Վարժողին ի դըպրութիւն զմեդ ի տառին իւր հրաշագիւտ ,  
Եւ ի տաճարն իմաստութեան զլասըս մանկոււցող :  
մուծանողին :

Հասաք , մանկունք , ըղտապահաւ ոըրբոյն ակումբ  
րուրեցէք ,

Ե՞ս նորին խոռվեալ ոսկերց նոր աւետեաց հընչեցից լուր :

Որ անդէն սիրեցելը աշակերտին յողբերգութիւն  
Հեծեցին ցաւօք ներքուստընդ անպատուելն իմաստութեան,  
Թող այսօր ընդ մեծ պատիւ նորուն դարձեալ ուրախասցին:  
Այս, մանկունք, այսըր երբեմն եկեալ նըստէր երգող լեզուն,  
ՅԱ.թենայ շունչ հատկըեալ վազէր և դայր ի հարսանիս,  
Որ յուսայր երագելով առագաստին զերգ նըւագել,  
Այսէն հասեալ փոխէր, ո՞հ, ուրատին այն յոյս յորդ և ի սուզ,  
Լայր, և ձայն ածէր առ փէսաւէրան երկնահրաւէր,  
Ուրբ մանկուոյն չե հարսանեաց զերգ յօրինեալ պար և ի խաղ,  
Փութացան զայնի զուարթնոց երկնից լըսել Մեսրովլոյ, Ասհակ:  
Վասն որոյ հեզձամշղձուէկ լեալ Մովսիսի յանձուկ սըրտին,  
Հեղոյր լալիս յայս տապան և ձայն ուժդին հընչէր յերկինս.  
Ո՞վ ասէր, այսուհետեւ զմերս յարգեսցէ զուսումն աղնիւ,  
Եւ ո՞վ ուրախասցի ընդ աշակերտո յառաջադէմ:

Ոչլըսէր զայս Այրարատ, լըսէր սակայն Մեսրովլոյերկինից,  
Ա.յլ ո՞նըմա տայր անդուստ այսր իջանել կըրկին յերկիր,  
Յանկա՞րծ այն բաղմատիսուր սըրտին բերել զուրախութիւն,  
Յանկարծ այն աչաց կարօտ զդէմսիւր ծագել ժըսլիտ զըւարթ-  
Ոյր ի տես փութայր անձկաւ ի քաղաքէն բիւզանդիս :

Ա.յլ ես տրուպ քո աշակերտ՝ աշակերտիդ քերթողահօր  
Եւ նըման նըմին այսպէս առ քո շիրմաւ նըստեալ այսօր,  
Ոչ նորին դկանչիւն ողոց՝ այլ դաւետեաց քեզ արդ հընչեմ,  
Ո՞վ դըսկիր ընորհաղըրուատ, ո՞վ հոգեհրաշ բարուն Մեսրովլոյ:  
Ահա քո այն ոսկեղար կըրկին դարձաւ ի Հայաստան,  
Որ քեզ և քոյն Մովսիսի նոր գովեստից կիւսէ պըսակ,  
Որ ընդ իւր առեալ բերէ Արամանման հայրենասէրս,  
Որ տայր հրաման ազգաց ազանց ըզհայացի լեզու խօսել.  
Եւ շատ ես քոյդ դըսկրութեան նոր աշակերտս անձնանըւէր  
ի Հայոց դրախտէն ծաղկեալ, ոչ յԱ.թենայ դարաստանէն:  
Քոյինաշէն այն դըսկրոցք, որ ըզկնի քո դարձան յաւեր,  
Նոյն նորոգ ըստ առաջնոյն կառուցանին վայելչօրէն,  
Եւ մանկուն Հայոց երթայ և դեկերի առ դուրս ուստան:  
Նոր յայնժամ քերթողդ Մովսէս և Ղաղարիկըդ ձարտաստն,  
Եղնիկ, Յովհան, կորիւն, Մասիրէ, Գաւէիթ անյաղթ ի Հելլենաց,  
Երկեսցին յԱ.յրարատ և ոսկեգիր ելցեն մատեանք:

Հապա դու ցընծասչիր յերկինս ողւով նդ այս աւետիս,  
Եւ ոսկերքդ ի ծոց հողայս թողչունչ ասցեն կենդանութեան:  
Մի՛ լըսեր, մի՛ լըսեր դՄովլսիդ ձայն դառնարողք,  
Որ գուցէ եկեալ և այդր ըզնոյն կըրկնէ քեզ ի մօտուսա  
Յանտըրտում յայդ վայր երկնից քեզ տըրտմութեան

լինել առիթ :

Ա.յլ ոչ ես թողումք ըզդա մարդ անձանօթ թափառական  
Պարկաբարձ անընդունակ չըրջիլ ի մէջ Հայաստանեայց .  
Լուռումուռ անմըսիթար դալ և թաքչիլ յանկիւն մի գեղջ,  
Մերժեալ և հալածեալ յանսիրովաց իմաստութեան ,  
Ա.ու տապանաւ անձկալուոյդ ողբար կոծով զչայոց աշխարհ ,  
Մանուցաւ մեզ աւասիկ դա և դորին իմաստութիւն ,  
Եկեալ են ընդ իս մանկուիք յանշուք գեղջն հանել տանել  
Եւ ի գահն Արշակունեան նըստուցանել առօք փառօք .  
Եւ ի գլուխ իմաստութեան դընել լըդթադըն դիւցաղանց,  
Եւ կառավար և մեծ իշխան կացուցանել միայն զիտութիւնն  
Հայր, այդ խոնարհք Մովսէս վերբարձրացաւ քան ըզՄասիս .  
Դա չկարէ այսուհետեւ ծածկիլ երբէք յաչաց մերոց .  
Ի պատուել ըզդա մեք տուն և օթանոց պատրաստեալ եմք .  
Ա.ռաքեա դու այժմ յերկնից ընդառաջնեմք ի յովունել ,  
Եւ միրով ասալընջական լինել ծերոյդ ծանրաթախիծ ,  
Ոչ ի տուն այլ ի յոգի և սիրտ ըզդա հանդուցանել :  
Թող դիւր առցէ և մի՛ ևս բառնայցէ զմէնջ

տըրտունջըն զայն : Ձւ

Վասն որոյ ընդ պատուհան երկնից յերկիր կարկառիր արդ,  
Եւ ածովդ հայրականաւ օրհնեա զողջոյն մանկախին Հայոց ,  
Ա.ու որս քոյդ սէր և յորդոր զիս առաքեաց ի հրաւիրակ ,  
Ոյք ի լըսել զայն կեռուստ ելին այսպէս եկին սիրով ,  
Ա.ւասիկ հասեալ կան այժմ ի դիր անշուք սուրբ նշխարացդ .  
Զաջրդ հա՞ն՝ գերեզմանէն, օրհնեա զմանկախին Հայոց, ո՞հայր,  
Բարբառեա յերկնուստ այտի քո յորդորիչ լեզուաւդ անոյց,  
Որպակեօք յերկրի չըրջեալ խրախուսէիր զնոսին յուսումն :

Ա.յդ-պէ՞ս, մանկախիր Հայոց, դուք հայրասէր հայրենասէր,  
ՅԱ.յրարատ Հայոց այսարհ յայց ելեալ էք և չըրջիք արդ .

Եւ սըրտիւ հայրակարօտ գալ սիրեցիք և յիմ տապան  
Տըրտեցելոյս ի յերկինս ուրախութիւն լինել յերկրէ :  
Զի յորէ յորմէ վալոյն ես ձայն լրւայ ըզմովնիսին :  
Ես լսյի մինչև ցայսօր զաշխարհն Հայոց միջտ անընտրով.  
Որ չեղեւ նաւահանդիսաւ այն շահաբեր նաւուն բարձեալ  
Որ բերէր ի յԱթենայ զվաճառ անդին իմաստութեան ,  
Զաղքատիկ Հայոց մանկտին առնել փարթամ ընչիւք առատ՝  
Խսկ այսօր զայդ աւետիս՝ որում կայի յերկնուսաւ յուսով ;  
Երբ այժմիկ լրւայ ի ձէնջ վա՛շ բերկրեցաւ հոգիս իմ յոյժ ,  
Եւ լրուեաց մրշականչիւն ողբալի ձայն որբ Մովսիսին ;  
Զի ընդ այդ նոր աւետիս և 'նդ իմ ցընծաց նորա ոգին :

Զի՞նչ ի ձեզ այդ նոր փափաք առ գիտութիւն ,

աղնի՛ւ մանկունք .

Զմարդարիտն անգին անդիւտ զոր ի գընել չելին յայնժամ ,  
Այժմ դուք յօժար իտութայք վաճառելով զինչս ամենայն  
ի գընել ըզնա միայն որ պատուական է քան զոսկի ;  
Միթէ ուսացք թէ մեծութիւնք գան ընդ նըմին

ըստ իմաստնոյն :

Որ զդովաւ շուրջ փակելով գիրկս արկանէք սըրտի մըտօք ,  
Դա ըզնեզ առնէ անշուշտ կենօք յապայն գերաբաստիկ :

Այլ իմ խրատ հայրապատուէր այս է զոր ձեզ

սիրով տամ արդ ,

Դուք որդեակք հօրըս խրատու մատուցէք ունկոն մըտադիւր .  
Մի՛ լիցի ձեզ միայնոյ լոկ գիտութեան լինել սիրող ,

Ըզդործոց առաքինի և զանարատ վարուց անփոյթ :

Ոչ կարէ յերկրէ թըրոչուն վերաթեել միով թեով .

Սապէն ոչ և գիտութիւն առանց թեայն ընտիր վարուց :

Առաքինւոյն չեն պիտոյ լինել սատար երկուց թեոյն

Զի կարէ նա և միով վերապանալ գեր ի վերոյ .

Զեզ առ այս օրինակ լիցին Պնտօն և Պլշշանոն ,

Կամ գիւղական անդրագէս , քաղաքացին չար և սատան :

Պատուիրեմ և զայս յաւէտ , որում անսալ սիրով՝ ժշմեմ :

Հայրենի կրօնից , շաւզաց և աւանդից փոյթ լիցի ձեզ

Ճետեել նախնի սուրբ հարց ուղիղ հետոց լուսաշուխ .

Զոր նոքին ձեր ընդ առաջ հորդեալ բացին խրատու հոգւոյն

Ուզիլ և անխոտոր ընդ այն շաւիլ գնալ ձեզ յերկինս :  
Առաւել և քան զամէն կտակ և պատուէր՝ այս է իմ ձեզ  
Քա՛ւ , և մի՛ երդէք թողնուք ըզտառդ իմ տիրաձիր  
Եւ ըզպերձ հայկեան բարբառ նախամեծար և անդրանիկն ,  
Եւ մերում լեալ անհըմուտ ախորժիցէք այլում լեզուի :  
Յուշ լիցին ձեզ անմոռաց այնչափ ձրդունք իմ և վաստակիք ,  
Զոր ի պէտը ձեր միայն սիրով կրեցի առ գիւտ գըրոյն :  
Բայցէք զայդ իմ տապան , հանգիստ ոտից վաստակաւոր ,  
Որ զշայաստան և Յունաստան շրջէր տըքնէր միշտ անդադար ,  
Վըկայ լիցին թող առ այս մասունք ուկերցըդ մաշեցեալ :

Այսափ են խրատու բանք դոր ձեղիքայեմեն հայրացրար .

Թէ յօժար թէ կամակար ունկըն տաջիք և առնիցէք ,

Օրհնեալ յերկնուսաւ և յերկրէ միջիք յԱջոյն ամենարաշմու

Խսկ ես հոգւով պազանելով պաշոպան լինիմ ձեղի յերկինս :

Առ Այն որ զցօղ չնորհաց ցծիք ի տունկուդ բանաւոր ,

Զարդանալ ծաղկիլ յուսումն և քաղցրունակ բերել պըտուգ :

Զի հայրենեաց քաղցեալ որդիք վայելեսցեն անոյշ անոյշ :

Լըւարուք ահա մանկուիք , ցանկալի հօր բարի պատգամա ,

Թէ լըսէք և թէ պահէք երանելիս առնէ լընեզ :

Ցաշխարհի աստ բարեբաստ և ի յերկինըս երջանիկ :

Մեկնեալ արդ գընամբ աստէն , այլ կարուսով

սուրբ նըլինարացդ ,

Գոնէ առցուք զայս կարօտ մէն մի մասանց տրւեալ համբոյք .

Նախ գընխոյն հողի պարհ խոնարհելոյ առ մեր յազօթս :

Եւ աչացըն նըւաղեալ կայուն անքուն գար և գիւեր ,

Բերանցն չնորհաբուզ դադարելոյ յընթերցմանէն ,

Եւ լեզուին քաղցրախօսակ լըւեցելոյ յորդ որմանէն ,

Մատանցըն կաշարուեստ թարդման տառիցն ,

աստուածայնոյն :

Եւ ոակիցըն երկնաշու որ ի յերկրի յերկին շըրչէր ,

Որ վասն մեր վաստակեցաւ զի մի՛ մնասցուք մեք անխասան :

Վա՛շ , լըցաւ մեր ցանկութիւն , սուրբ ուկերօդդ անմահահուա :

Ելէ՛ք ի վեր երթիցուք , այլ ուր և յոր վայր , ով մանկուէք .

ի յլլրտաղ յԱւարայրին ուր Ազաւնեակ մընչէ տակաւ  
ի վերայ վարդագ ոյն և ճապաղեալ արեան քաջացն ,  
Ուր կոշեմ յերկնէ յերկիր զեղիչէի անմահ հոդին  
իջանել ի Շաւարշան շըշել , մընչէլ աղու ձայնիւն  
Եւ շուրջ ածել ըզձեզ անդր ի մէջ դաշտին ծաղկեալ կարմիր  
Ուռոգեալ ի ջրոյ արեան աստուածավառ նահատակացն :

Էջ այտի , դու որ այժմիկ ծառոյն կենաց վերայ հանգչիս ,  
Ով ծիծառնըդ քաղրախօս և հեղ ոգիդ վըկայասէր :  
Դըժարէ , գիտեմ , թողուլ ըզդաշտ երկնից լուսասահման ,  
Եւ զոդին քոյն վարդանայ զորով փարիս աղապատեալ ,  
իջանել յայս դաշտ կըրկիններկեալ նորուն հեղեալ արեամբ ,  
Եւ դիտել որպէս յայնժամ ըզդիակունս չայոց քաջացն :  
Մի՛ այս դառն յիշատակաւ քընքուշ ոգիդ քըստմընեսցի ,  
Զի դաշտն արդ յԱւարայրի պայծառացեալ է ծաղկալից ,  
Ոչ յամպոց անձրեւաբեր , այլ ի ցօղց արեան քաջացն ,  
Եւ այն մարմինք արիւնթաթախսք ոչ տարածին աշացդ առաջ ,  
Քանզի նոյնք իրեւ ցորեան ծածկեալ եղեն ի ծոց երկրին ,  
Որ ի գեղ պըմեալ բոսոր բոզբոջեսցին ի գալրտեանն :  
Էջ հապա , մի՛ տար այսքան սպասել մանկուոյս քեղ աստանօր :

Այդ քո ձայն սիրահրաւէր զիս բաժանէ ի սիրելոյն ,  
Զոր յայնժամ յԱւարայրիդ , ո՛հ , ես լալով որոնէի ,  
Եւ ելեալ գըտի յերկինս , ի Գրիգորին գիրկ հանգուցեալ  
կալայ ըզնա և չէ հնար այլ ևս թողուլ զիմ սէրն ի բաց :  
Սակայն ոչ և անձանձիր ձայնիդ ժուժեմ ով հրաւիրակ ,  
իջից օ՛ն , թէպէտ վայրիկ մի յանձկալոյն կացից ի բաց ,  
Եւ զայդ սիրոյ քո հայցուած կատարեցից յօժարարար :

Դուք ի սէր իմ վարդանայ վառեալք այդպէս  
ազնիւ մանկունք ,  
Եմիք ի Շաւարշան , յորում չայոց քաջ շահատակը 22  
Առ հաւատոյն ճըշմարիտ և հայրենի կրօնին աղատ  
կամակար նահատակեալ կատարեցան սիրով Փըրկին :  
Ճեմեցէր մանկունք ընդիս , առ արիւնոտ Տըղմուտ դետովս ,

Յոր զինաւորըն մանկագոյն վառէր մըրցէր հարազատովն ,  
Զոմն ի գետ զոմն ի յեղերս ի թըշնամեացըն թօթափեալ ,  
Յոյց նորախոց ի վիրաց վըտակ վըտակ վիթեալ արեան  
Յորդելով գընայր Տըղմուտ արիւնախատոն ի մէջ շամբիցտ ,  
Թըշնամեաց ըզդիակունս գլորեալ տանէր թաղէր ի տիղմա :  
Այսր անկաւ նոյն շահատակ յառաջադէմըն Գարեդին .  
Երկոքումք հարազատովք նախամարտիկ դիմագրաւեալ ,  
Երեքին սիրուն եղբարք նախընծայեալք Երրորդութեանն .  
Որ անդէն յառաջ անցեալ ոգւումն արի քան զնախարաբսն  
Աներկիւլ ի յատենին յանդիմանէր զյուզեալն Յաղիերտ  
Որ լըէր ցասնոյր յոդի ընդ խաչելցյն և խաչին ճառ ,  
Նաև աստ ի նոյն ոգի վառեալ յաւէտ քան զամենայն  
Փութացաւ նախ մեռանիլ և զանթառամն առնուլ պսակ ,  
Երթալ և չոյտ ի յերկինս մեծ աւետիս տալ Գրիգորին .  
Թէ գառինքըն կոտորեալ յարձակմանէ ի թուլս գայլոցն , 23  
Բաւարոյս թուչին ահա գան ի յերկինըս վիրաւորք  
Վաստակեալ յարիւն քըրտանց ի մէջ դաշտին յԱւարայրի ,  
Ընդառաջնեալ գըրկաբաց հանդուցանել զնոսին ի գոգդ :  
Այսպէս նա մանուկ տիօք նախաշաւիլ եղւ ծերոցն  
Մանկացելցյն Յիսուսի ընծայելով զիւր մանկութիւն :

Անցէ՛ք աստի յասպարէզ յորում մանկաւ մեծն ախոյեան  
Մամգունի քաջ շառաւիղն ընտրելագոյն նիզակակցօքն :  
Եղուկ զիս , ի գիշերին մինչ միայնակ ի մէջ դաշտիս  
Երր լըսէր գառըն մընչիւն և մըուընչիւն վիրաւորացն  
Եւ ձայն լալց ծերունւոյս , ես անձկալցյն էի խնդիր  
Վիրողին զիս վարդանայ , ա՛հ , որ թող զիս չոգաւ յերկին :  
Եւ գըտի ոչ ըգնողին անմահ պայծառ յարեւ ի կեանս  
Այլ վարմինն մահաքուն վարդան մեռեալ վասն հայրենեաց  
Վարդն ի յարիւն թաթաւէր կարմիր փայլէր ողջ յԱւարայր .  
Որպէս թափօր ճառագայթէր լրյու երեսացըն երկնաղէմ ,  
Մինչ ոդին ըզյաղթութեանն առնոյր պըսակ ի Գրիտտուէն .  
Ոչ երբէք տեսեալ էր իմ զդէմըն նորին ծաղկեալ այնպէս  
Երբ գառանայր յաղթանակաւ և պըսակէր յերկրաւորէն .  
Որպէս ես նորին սէր զմարմնով անկեալ իմ սիրելոյն

ի վերայ վեհ հակառուն և այն բացեալ լսյնալանջացն  
թափէի արտասուս և ստէու ըստէու տայի համբոյք  
Պատուական դըմսոյն այնմիկ , պատուեալ յաւէտ

ի կայսերաց :

Եւ աչացըն սիրային , յորմէ կաթէր սէր հայրենեաց .  
Շըրթանցըն կափուցեալ , որ տայր խրախոյս Հայոց քաջացն,  
Եւ բազկացըն կորովի յաղթուղ աղանց հիւսիսայնոց :  
Ա՛հ , մանկաթիք , շըրթունք սիրոյս յարիւն մածնոյր  
ընդ համբուրելն ,  
Եւ սիրտ իմ ի ներքուստ աղէխարչեալ ճըմէր ցաւօք ,  
Մինչ տեսի զմնացեալ նըշոյլ Հայոց փառաց շիջեալ այնպէս:

Զաչս ի վեր առի դիտել և ըզնորուն նիզակակիցս ,  
Տեսի զրմն հըսկայակերպ հուռալ վարդանայ գետնատարած ,  
Եւ առ ոտիւքթօթափեալ զքաջուի յարեաց դընդէն Մատեան  
Գնացեալ մօտ նըշմարեցի զդէմըս քաջին երկնահայեաց ,  
Մանեայ զի էր կորովին , Հայկազն խորէն խորլսոռունեան:

Կից նըմին կային երկու այլ նորատիք երիսասարդք ,  
ի մահուն քան թէ յիւրեանց կենդանութեան  
փայլեալք զըւարթ .  
Անկեալք՝ այլ ո'չ ի բաց թողեալ ըզկէնըս քաջութեան .  
Միոյն ի ձեռին էր վահան , միւսոյն նիզակ խաչաղրօշեալ .  
Պալունին արին Արտակ զարմանալին և Տաճատ :

Ոչ հեռի կայր ի սոցունց ոմիօք սոսասարաս ,  
Գոդ թէ նոր տապարահատ յերկիր անկեալ ճըզակոտոր ,  
Քայքայեալ այն գեղանի շինուած մարմնոյն վայելչատիալ .  
Առ ի նոր չքնալ չինիլ ի Քրիստոսի անդ գալստեանն .  
Ներսեհըն հրաշակերտ , որ ի տոհմէն Քաջերունեաց :

Առ գլխով սորուն հանգչէր գետնոյն վերայ իրը ի հանդիսատ  
Մեղրոյ աչկունք ընդ աշխարհնոր կափուցեալ մահուն մթով ,  
ի գիմաց զըւարթագին արդարութիւն փայլէր պայծառ ,  
Անարատ վարուց նորին վըկայ լինել անդ ի մահուան ,

Յանկալի արդարն Արսէն Տեառն ընծայեալ ի յընծայնոց  
ի հեռուստ լցոյս մի առ իս ճառագայթեաց արեանման .

Գիտացի թէ անդուստ էր որ զլցո սիրէր իմաստութեան .  
Քայլ առի երթալ առ նա և համբուրել ըզտարփալին .

Տեսի զի նա զերդ ոչխար մի լուսակիցն ի մէջ այծիցն  
Թաւալեալ ուն ի ձիգ գեղմն ըսպիտակ ներկեալ յարիւն .  
Բաց աչք հայէր ի վեր ընդ երկնից դուռն բացեալ ընդդէմ .  
Ինձ թըւէր թէ նա զհանդէս դիտել կամէր հանդիսադրին ,  
Ժըպտէր երեսն երբ ի գեղ ոդւոյն յառէր աստղապլսակ  
իմաստունըն Հըմայեակ ազնիւ բողբոջըն Դիմաքսեան :

Հապա ով էր այն որ տնդ բաց է տնկեալ ծաղկանց վերայ ,  
Ոյր արեան չիկորակ չիթք ցայտեալ էին զցողուտ ծաղկամբք ,  
Կարմրաթուշ այտիցն ընդ մէջ նետ մի տիգ եալ սուրասըլքք ,  
Վիրօքն այնու զրելիար վիրաւորեաց մինչեւ ի մահ .

Մանուկ էր դեռ հասակու և կայր ի քուն նա քաջրանինջ ,  
Ողջ երեսք ծաղկեալ էին կարմիր քըրտան սուրբ կայլակօք  
իրու զկոկոն փրթթեալ վարդից շաղն ի վերայ յառաւօտուն ,  
Մատեայ մօտ զարթուցանել զայն , որ զարթնու ի ձայն փողոյն ,  
Յանոյշի քնոյն ոչ զարթեաւ , ո՛հ , մանկագոյն գնունին վահանու

Սոյնափիսի տեսարան ցոյց ինձ գիշերն այն սրգալի ,  
Գլուխըս լընոյր տարափով և թաթաւէր ոտք իմ յարիւն ,  
ի լալոյն խաւարելցոյ՝ լըւսին լինէր ինձ լըւսատու ,  
Ես նորին լըւսով չըրջեալ մի մի թուէի զՀայոց մանկուն ,  
զնջեալ աստէն քաջրի քուն խրատու վարեալք Սողոմոննեան  
Որոց զոդիս հրեշտակ երկնից նախ թըւելով ետուն պըսակ :

Այսգունակ , ո՛վ մանկունք , ջրով ի հոգւոյն  
նախ մըկըրտեալքն ,

Յաւազան բոսորային մըկըրտեցան կըրկին արեամբ  
Զնորահրաշ մըկըրտութիւն վըրկչին՝ մարմնով ի մահ խաչին .  
Բով սիրոյ Յիսուսին բորբոքեցաւ աստ ի չոգւոյն .  
Այն որ եկն հուր արկ յաշխարհ՝ զմարդիկ վասեաց

բոցով սիրոյն ,  
ընդ մէջ անցեալ որպէս զոսկի հրով վորձեցան հոզիք որբոցն ,  
ի ժանգոյ մեղաց սըրբեալք եղեն մաքուրք և լուսափայլք .

Մեռեալք՝ բայց կենդանի մըտին յերկինս առ Աստղւած՝  
թէ և յաչս անըգգամացն համարեցան իբրև մեռեալ։  
Զդուսն եթերին ի վերուստ բացին աստէն  
զուարթունք երկնից,  
Մարմնեղէն զուարթնոց հոգիք մրտին ընդ այն ազաւնացեալ  
Առաջի հանդիսադրին կացին փառաց յաղթանակաւ,  
Եւ ըզթագըն գեղեցիկ ի ձեռանէ Տեսառն ընկալան։  
Աստ և հրեշտակքն չարին բացին ըզդրունըս դըժոխոց;  
Անդ իջին ագռաւացեալ հոգիք գընդին ուրացողացն  
Որ փափագեալք երկրայնոյն, առ ի յերկնից պըսակէն  
Զըրկեցան և եղեն Ժառանդաւորք տարտարոսին։  
Ի դաշտիս Աւարայրի՝ արին Վարդան աւարաւուն, 24  
Արար և կատարեաց զոր Խօսեցաւ յատեան Պարսից,  
Խրախուսեալ զընկերոս իւր դիմել ի մահ յօժարութեամբ,  
Զոգիս նոցին աւարեալ յուրացողացըն յերամէն  
Վերածեալ տարաւ յերկինս ընծայեցոց Հօր Աստուծոյ։  
Եւ այսպէս յաւիտեան անուան իւրում փառաց պարծանն  
ի յերկիք և ի յերկինս յաւէրժացոց նա քաջութեամբն։  
Դուք ըզհող դաշտիս, մանկունք, անկեալ զգետնով  
Համբուրեցէք,

Ուր կաթիւք արեան քաջին և երջանիկ նորա դընդին  
Յօլցան և շիջուցին զբորբոքեալ հուրըն հրապաշտից,  
Որով նորոգեցան և կեղեցիք Հայաստանեաց,  
Եւ յարիւն նոցին ամրիծ պայծառացան վայելչառիս։

Ահա ըզմեղ ո՞ մանկունք թախանձանօք հրաւիրակիդ  
իջի այսր ի յերկնուստ և ի դաշտիս ձեմեցուցի,  
Յանդիսան ձեր կըրկնակի նըրկարելով զպատկեր քաջացն։  
Նըմանողք լերուք և դուք այնպիսում վեհ առաքինեացն  
ի նոյն սէր աստուածային և հայրենի Ծեռեալք ողւով,  
Եւ զինու վառեալք այլ իմն՝ իմաստութեան և հանճարոյ  
Գունդ կազմեալ մասազերամ ելէ՛ք յԱրտակ ի յասպարէս,  
Ոչի վանել սեաւ ըզդունդն՝ այլ ըզմաւար տըգիտութեան,  
Զի ձաճանչ արփոյն անմուտ՝ ծաւալեսցի յերկիք Հայոց,  
Եւ ի լոյս նորա դնասջիք դուք անվաստակք ի դիւր շաւիլ։

Այլ ես որ յիմ անձկալոյն զատեալ այսչափ եղէ ընդ ձեզ  
Թռանիմ արդ առ ի ձէնջ երթամ յերկինս առ տենչալին,  
Աւետիս խընդութեան տամ Վարդանայ և Վահանայ  
Նորազուարձ լինել յոդի ընդ նոր ձեր այդ սէր հայրենեաց։

Քաղցր էր ինձ և ձեզ, մանկունք, ողջոյն յերկիք  
մեր հայրենեաց  
Եւ ի յայլ տեղիս, յորում քաջքըն Հայոց հանդիսացան,  
Երթալ ձեմել և այսպէս անդ նըւագել զհանդէս նոցին։  
Այլ անդուստ բըռնագոյն սէրն ըստիպէ բնիկ հայրենւոյս  
Զիս վարեալ յԱւարայրէս ի մայրածնունդն ածէ յերկիք,  
Ուրանօր գիրկ մայրենի զիս գըդուցին քաղցրասընոյց,  
Եւ այն կակուղ մանրիկ մաղեալ հողն աճեցոյց  
զիմ մանկութիւն, 25

Որ քաղցրիկ իմն է մարմնոյ նախ ի նմանէ դոլով ծընեալ։  
Վասն որոյ անդըլ փութամ ես այն հողյն մնացեալ կարօտ,  
Եւ զձեզ մանկութիւն անդելի, բարձեալ յոտից լերին Մասեաց  
Տանիմ արդ կացուցանեմ անդ առ ոտիւք լերին Արագ։



## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

### ՉՈՐՐՈՐԴ ՆԱԽԱԳԻՆ

ի չորրորդ մասին այս՝ հրաւիրէ ի քաղաքն վան,  
և չուրջ ածեալ ի հրապարակս առ ուռենովք ծա-  
ռաստանեայց՝ ածէ ապա յայդիս և ի միդաստան  
պարտէզս վանայ. ուր երգեալ զպէսպէս պտուզս  
նոյին նաև զորթատունկս՝ հանէ ի լեառն վարագ  
և ճեմեցուցեալ ի մենաստանս որ զնովաւ՝ դար-  
ձուցանէ ի հարաւ կոյս ի խաչին և ի կուշնկավանս,  
անտի յԱրտամեա, ի Հայոց Զոր և յ՛՛Ստան, յորմէ  
հանեալ աանի ի Հսդւց վանք ի տապան Սրբոյն  
Տրդաայ : Ողբք Հրաւիրակին և ազաշանք առ  
Սուրբն. պատասխանիք նորին նախ առ նա և ապա  
առ մանկտին խրատուք հանդերձ : Դարձուցեալ  
անտի բերէ ի Նարեկայ վանս և անդուստ յԱղթա-  
մար, ուր պատմագիրն Թովմայ Արծրունին ցուցանէ  
զգրօշուած մեծագործ տաճարին, հուսկ յետոյ ածէ  
ի Լիմ և ի կտուց անապատ. ներբող ի Գէորգ ճըդ-  
նաւորն, և վերջ չորրորդ նուագին :

## ՆՈՒԱԳԻ

### ՉՈՐՐՈՐԴ

Եկեղեցափի այժմառ քեզ, ո'վդուտեղի ծնընդեանիմոյ  
գաւառ Վասպուրական և հռոչակեալ քաղաքըդ Վան:  
Ըղքեղ արդ առնում ի յերդ և գեղդեղեմ երկար նուագօք,  
գամ այսպէս ոտիւք ողւոյս ճեմեմ ի վայրըդ գեղեցիկ,  
գոնէ սակաւ ինչ այսու առից ի քէն զանձուկ սըրտիս :

Յոտից լերինդ, ո'վ մանկունք, չուրջ հայեցէք ըզքաղաքաւ,  
Բա՛րէ, զի՞նչ տեսարան ձեզ երևի գեղազուարձ.  
Հըրճուեցէք, որ յԱյրարատ և ի յԱնին ողբացիք շատ:  
ի կուսէ արևմշաեան ծով ծածանի զեփիւռ հողմով,  
Յարեւելցիկան այդեստանք՝ ուռիք, բարտիք դիտակաբարձ,  
Հարաւոյ՝ Շամիրամայ՝ Արտամետու ճոմի բուրաստանք,  
ի հիւսիսոյ՝ Աւանուց խիտ ծառատունկք ծովելքերեայ : 26  
Այսպէս ըզքոլրիւք պար են առեալ այս տեսարանք,  
ի միջի յարմարապէս հրաշակերտեալ Վան վաղաձէն:  
Այս է տեղին վայելուչ, ուր անուշակ շնչեն սըզոմք,  
Զոր ծըծեալ հեշտացաւ յոյժ մեծ թագուհին այն Շամիրամ,  
Եւ անդէն բիւրաւոր արուեստագէտ գործաւորաց  
Հրամայէր առ ծովակիս կառուցանել զայս՝ փառաւոր:  
Եւ երագ ընդ հրամանին գործն ահաւոր փութայր ի գլուխ,  
Առ որ շատ աշխարհակալք ոչ զօրէին յայն մեծ ճեռնարկ,  
Զօրեցին ճեռք մեծագործ և առնասիրտ Շամիրամայ :

ի ձահ էր ըզմեղ, մանկութ, նախ մուծանել

‘նդ մէջ քաղաքիս,

Եւ հանել անտի ապա լեռնասարաս յանառիկ բերդն,  
Անդ մի առ մի ցուցանել զարմանալիս մեծագործին.

Սակայն ոչ ի նոսա դոն առաջին շուր շինուածոց

Գոլ երդոց արժանաւոր և զլինողացդ առ ի զարմանս:

Թողեալ վասն այն ըլնսոին՝ հանեմ ըզմեղ ի յայդեստանս 27

Ուր յաւէտ քաղցր է ճեմել քան ի քաղաքն անծառաստան:

Մըտէ՛ք արդ լայնավողոց ի հրապարակս հովանուտ,

Յորը շատ յըստակածուր դնան վըտակունք դըդըչալով,

Առուակ առուակ բաժանեալ ոռոգանեն զողջ այդեստանս:

Ի զըւարթ ափունս առուաց ուռենի ծառք ուզեշասսիւռ:

Շար ի շար տընկեալ են խիտ և ամբարձեալ սաղորթանոի,

Եւ աստի ՚ անտի շինեալ տանց և շինից ածեն ըզշուք:

Նըստարո՛ւք այսոր, մանկութ, առ հին և նոր

աղբերակամբս, 28

Վայրէկ մի զով առցուք մեք ընդ հովանեօքս այս ուռենեաց:

Վա՛շիբը զի՞ գրօսուցիկէ և զուարթարարդուս այս աղբեք

Ո՞րպէս ջուրք ի յականէ կըլըրալով բըլսոին ի դուրս, 29

Եւ ընդ այդ առուաց ափունս պլճնեալ մանրիկ

կանանչ բուսովք,

Ուռնազուարձ մըշտամիլթիթ ընդ ջըրասէր ջըրոց կարոսս,

Եւ ի գնացըս պարզ վըտակիդ, յոր խաղ առնուն

մանր աւապանք,

Նայեցեալ զմայլեցարուք, զի՞ հեշտալուր են հայելեաց:

Այսոր, ո՞հ, նըստեալ երբեմն աշակերտիս աշխատութեան,

Քաղցրախօս քնարին հայկեան ըգհարկանելն ուսանէի,

Եւ հարեալ զայն լի յուսով և անձանձիր զտիւ և գիշեր,

Ուսայ ես իւրովի մաստակ հոգւոյն ամենարուեստ,

Ում զիս անդուստ միայնում ընծայեցի սըրախ բոլոր:

Եւա՛լ որ անդ յոր ուսայ չեղի ինձ ժամ զայս աւաչել,

Գիթ ըմարեալ զայն անոյշ ջուր և շունչ պուեալ ի ջինջ օդովն

Երդ ողիս իմ ձայն պարզէր և քաղցրանսոյր Հայրց մանկուոյն:

Մի՛ յինէն զայսու բերեալ ի բաց թողցի բանիցըս կարդ.

Երդ եցից արդ զուգենիադ, որ ի վերայ սատոց իւրեանց

Զերգեցիկ և դաշնաւոր թըլչունս երկնից հանգուցանեն

Լեալ նոցին ասալընջական և օժանոց խնամօք վերնոյն :

Ո՛վ, ո՞րքան զմայլի սիրտ որ ցընծայ զարարածովք

Մինչ նոքին ի դաշնաց երամ երամ դան յերեկուն,

ի ճօճան ճիւղոց վերայ թառին հանգչին ի գիշերի :

Եւ մերձ յայգն երր արուսեակ բարձըր սարէն ի վարադայ

Եւանէ և աւետիս տայ զծագմանէ մեծ արփենւոյն,

Երագեն քան զայլսն անդէն որ ենն արթունք և երգասէր,

Ճընճուկը ճըռուողականք, սարեկի, ծիծուունք շատախմօսիկք

Ճըռուըրան ճայն տան միմեանց և յառաջին քան զբանաւորս,

Յարարչէն ուսեալ երգովք տան օրհնութիւնս Հօրըն վերին,

Թըռչոց անհոգացող կուտ, կերակուր պարգեղին :

Ընդ երդ նոցուն խառնի յայն պահ և կոշնակին ձայն ի ուղղողոյն տիպ 30

Սահմանեալ իսկըզրանէ ի ջերմեռանդ սիրոյ սուրբ հարցն,

Եւ զարթնու զուարթուն ողին, որ յառաջի նա քան զարե,

Երդակից լինի թըռչոց, օրհնէ լոգիլըն սաղմոսիք,

Եւ երթայ յեկեղեցին կալ ի պաշտօն գիշերաժամ:

Շատ այսչափի ի հրապարակսընդ ուռենւովք և առ աղբերս,

Մըտէ արդ ի մէջ այդեաց և պարտիզացըն պըտղաբեր :

Ես ի նուագ առից անդէն աղգի: աղգի զնոցին պարգևս,

Զոր կըլիլն յեղանակի շնորհէն նոքին առատ ի պէտու :

Յամարան շոյտ գայ ի բեր աղնիւ ծիրան վաղահասիկ .

Զարմանայ, որ զաշըս իւր ծառոյն ի գեղ յառեալ դիտէ,

Ուր ծիրանի և դեղնաթթոյր գունով պըճնի ճիւղքըն բոլոր,

Մինչ մեղմով շնչէ հոգմինչ և կամ ելեալ շարժեն մանկափ,

Խուռնօրէն ի վայր թափին անդէն բոլոր հասունացեալքն.

Ժողովեն հանեն պարզեն ի տանեստանս դէմ արեուն,

Ոյր ըզիրն ի կերակուր արկեալ՝ լինի յոյտ համեմիչ :

Յետ որմին հասունանց և ալուչայն շատապըտուլ, 31

Դիւրաբեկ յոստոց ծառոյն կախին ի վայր ողկուզօրէն :

Զինչ պէս պէս և լնդ սոսա զամարայինսըն ողեցից,

Զըստահասն և ըզմեղըրուկնըզ եղին տանձն քաղցրագոյն 32

Ծզթըթուն որ շատ ուտի և զորդտրղիկըն դիւրագիւտ, 33

Էզիւնծորըն շիկագոյն ծաղկաբերան հեշտատեսիլ , 34  
Եւ զյոլով տեսակս այլոց , ոյց ոչ կարեմ թըւել զանուանս :  
Իսկ յաշուն մինչ մերկանան ամարային ծառքն ի պլտղոց ,  
Ճոխանայ յոյժ մեծացեալ մալաղի տանձըն թըռնալիր . 35  
Գան ի վերջն աշնան ի բեր և ձմեռնային միրդըն ողջոյն ,  
Մալաշին պընդագոյն և նըռնենին նարընջածե , 36  
Եւ խընծորն երկարատոկ զոր տան առատ

պատուաստեալ տունկք : 37

Ոչ գան յուշ իմ աստէն , ո՛հ , և զայլ պըտղոցս նըւագել ,  
Զորսանրաւ առ աշնայնով շնորհեն պարտէզք վասպուրական  
Զի տարաւ յուշոյս իմոյ թըռուտուարեր պանդըստութիւնս :

Ա.Ա. յինչն ոչ մոռանին այն դինաւէտ նորեկ այդիք , 38  
Բեր և ի կարգ մըրգարերացս առից ի յերգ և ըզնուին .  
Որի դիւր և վայր պարարտ կարգաւ տընկեալ են մօտ առ մօտ  
Եւ որ ոչ ընդ ամուսնեաւ նըշդարենեօքըն պատատին ,  
Ա.Ա. ի թումբս ակոսածե ուռք տարածին գեղեցկաշար ,  
Եւ զովկոյս ի մայրենի հողոյն ի ծոց տան ի սընունդ .  
Յամարան տօթաժամու մինչ հարկանի շողն ըզնոփօք ,  
Զեռանի մայրն ի ներքոյ՝ ջեռուցանէ վիւր ըլմանկունս ,  
Եւ սպիտակ նոցին մարմինք դառնան բնաւին ի թոյրաթուեին  
Տէր այդուն հրաւէր կարդայ բարեկամացն ի յայգեկութ .  
Ինձ վաղ դուք արդ օգնութիւն , եկայք ասէ , ո՛վ սիրելիք ,  
Զի ահա փափիկի մանկունք այն սեւացեալ հասուն ողիոյզք  
Պատառին անօրացեալ ծորի քաղցուն հողոյն ի ծոց :

Ա.Րագէ մըշակն անդէն կողովն ի յուս երթայ յայգին ,  
Կոթեն լընուն այդ եկութք՝ տանի թափէ նա ի հընձան ,  
Եւ ողկոյզք միմեանց վերայ դիզեալք ճըմին ծանրանալով .  
Եւ ահա ի ներքուստ ի դուրս բըզմեն իբրև զաղբիւրա  
Շատ սիրուն կարմիր վրտակս որ վազ առնուն բարակ բարակ  
Եւ անցեալ ընդ խողովակ փոյթ փոյթ կաթեն ի յաւազան :  
Ա.Ա. ոչ ըզգուր հընձանին կարեն լընուլ կաթուածք ըոիշտ ,  
Մինչւ ոչ մերկէ ըզարունս հընձանահարն և մըտանէ  
Բոկանի՝ մէջ խաղողոյն կոխէ ճըմէ զիրշարեալ ողիոյզք .  
Տէ՛ս յայնծամ ո՛րապէս խաղան դինւոյն աղրիւրք ի հընձանին  
Եւ զօրէն ջուրց խոխոջիւն ընդ ջըռորդան թափին ի գուրն ,

Բարձրանան վըրփըրադէզ մինչւ ի վեր բերան գըրոյն :  
Անդ ածեալ փութով նոր տիկ առեալ ըզնոր գինին ի մէջ ,  
Տարեալ ի զով ներքնատուն լընուն զկարասըս լայնափոր  
Յամարան եղանակի խորեն 'նդ հողով ցըրտապահէկ ,  
Այնուհետեւ ի խրախնանս յար զուարճանան :

Վասպուրականքն :  
Հերիք է այսքան , մանկունք , ըզի՞րդարերս

և զորթատունկս  
Ինձ երգել , ձեզ ի նոսին ձեմել այդպէս զուարճազըսօփիք :  
Արդ ի միջոյ այդ եստանեացց ելք ի վեր ընդ արևելս ,  
Աւասիկ հանեմ աստէն ըզձեղ ի լեառըն վարագ այ ,  
Ուրի վերին վարագ նըստեալի դլուխազբերըն ստոնային 39  
Ա՛հ , ուրտիւ կարօտալից երգեմ զայն լեառն ըրքանչելի :  
Ուր ընդ այդուն այդուն զըւարթ շընչէր կենաց  
իմ աճման օդ ,

Ուր և արդ ևս ի հեռուստ շընչէ և տայ շընչել երդով  
Եւ մանկուցն հեռացելոյ զոդ հազրդել հայրենասէր :  
Մինչ երթայ ձըմեռն , և գայ գարուն բնութեանցըն  
Դարդարիչ ,

Եւ շընչեն քաղցրաշունչ հովք և մերձենան ջերտա տւութք  
Ձիւնքն հալին թանձրախուռն 'ւ արդանդ փակեալ  
բանի հողոյն ,

Ո՛վ , քանի՛ գեղ ըզգենու յայնժամ այս լեառն ամենաբոյս :  
Ա.Վարեաց ակունք բանին շուրբըն ելեալ ըըրջին ընդ մարգս ,  
Ճեմ առնուն կարկաջահոս և տան համբոյր նոր ծիլ բուտոց :  
Ուր եղերք ձեանց նախ ծաղկի վաղաթառամ ձիւնածաղկի  
Լեալ այլոցըն կարտակետ , որ ըզկնի նոր բանին զըւարթ :  
Եւ ծաղիկն անուշահոտ ըզգիներփուկն ասեմ սիրուն , 40  
Ուր սիրէ կալ յարազուարճ վարճէ վըշտակ զուարթացուցիչ  
Խիտօրէն ի ճախմախուտ տեղիս ծաղկի կապուտափայլ ,  
Ուր առ արմովք իւր յաւէժ ջուրք ծաւալին զըզկըլալով : 41  
Խակ չուշանըն երփինափայլ ոչ սիրելով զեռնային վայրս  
իջանէ և ի ցածուն ձորաց հովտաց ի մէջ վըթթի :  
Մանկակ մանրաթերթիկ տիպարն անձին խոնարհասէր  
Զիւր կարճիկ հասակն ի մէջ բարձըր բուտոց թագուցանէ ,

Սակայն ըզհոտ իւր անոյշ բուրէ անդուստ ի վեր նոցին։  
Եւ յառապարս անջրդի ծաղկի կակաչ կարմրաթոյր,  
գեղեցիկ տեսլեամբ և եթ և ի հոտոյն անմասն և զուրկ,  
բանաւոր մարդոյն ի տիպ, որ զարդարեալ է արտաքուստ,  
Եւ չունի զհոտ գիտութեան առ ի ներքուստ

բուրեալ յոգւսյն։

Առ նովսւ իրը դրացի բանի ծաղիկն և անթառամ,  
Զոր ոչ հողըն տապախառն և ոչ արև թօշնեալ խամրէ,  
Օրինակ հաստատուն և ժուժկալող ոդւսյն ի վիշտ։  
Այլ միթէ հնա՞ր է աստէն ըզրիւրադան և զայլ ծաղկունս  
Երդել այսպէս մի առ մի, որ գարնայնի գունակ գունակ  
Ոմն ըսպիտակ ոմըն կարմիր ոմըն կապրտ ոմըն գեղին  
Գունովք իւրեանց գեղաղէշ զարդարեն զայլեառն վարագ։  
Երջանիկ հովիւն հօտիւք խոյտայ ի մէջ հովտաց լերինս,  
Ըզմակատն արևակէզ պլճնէ յաւէժ ծաղկապատակ,  
Պարք մեղուացն երկասէր դիմեն յայս լեառն երախովին,  
Ընդ արշալոյս երդ ծաղկունք շաղով շողին մարդարտափայլ  
Ի վերայ նըստեալ նոցին զնիւթ ժողովին քաղցըր մեղեր։  
Խոկ ըզմանկտեայց հայրենուս ես ո՞րսիսեօք նըւագեցից,  
Որ այն ինչ գայ Համբարձումն և նոր գեղով

զարդարի լեառնս,

Եւ ճանապարհ ձիւնախից արձակ բանի Գալիւսյին,  
Անով ընկերացեալ յուստ ելանեն նըմա յայնժամ,  
Եւ ի վայրը ծաղկաբեր և աւազուտ ի յառապարս  
Մի զիրվ վաղեալ քաղեն ըզխաւարծիլ և ըզծաղկունս,  
Երախան երախան ազրերակաց ի գլուխ նըստեալ  
Գոյն առ դոյն յարմարելով փընջեալ շարեն ջրոյն ի յեղերս։  
Եւ տապա սեղան կաղմեալ ակումիր առնուն գեղարովոր,  
Ըզբաժակ լընուն գինեաւ սառուցելոյ ի ցուրտ աղբեր  
Եւ սըրախւ զըւտրթառատ յօժար միմեանց մատըռուտակեալ  
Զայս լեառն ցանկալի երդ են տաղիւ գեղգեղածայն։ 42

Ով աստէն զիս, ո՞վ մանկունք, առեալ տարցից  
յակուտ նոցին,

Այն սիրավիր սեղանոյն զիս արասցէ ուրախակից։ 43

Այլ զիս ո՛ւր, թէ ոչ ի լմառըն վարագայ յափըշտակէ,  
Որ չէ տեղի դից Մուսայիցն այլերկնաւոր սուրբ հրեշտակացն,  
Զայսոսիկ թողում ես արդ զազրիւր, ծաղկունս,

Երկրաւոր ձիրս,  
Որ չեն խոկ պարձանք յաւէժ բնութեամբ իւրեանց  
գիւրաթառաւմ,

Զայն առնոււմ երգ ել այժմիկ, որ փառք են սմայաէրժական,  
ԶԳալիւեայն, յորմէ փայտին կենաց նըշան պարզեցաւ։ 44

Սրիք հասա, ո՞վ մանկունք, ելցուք ի գլուխ նորին սիրով,  
Տենչանօք տացուք համբոյր այն խաչակիր ուրբաց վիմին,

Եւ տեղւոյն ասովնչական խաչին բեռամբք աշխատելոցն  
Թագազարմից կուսանացն, որ ի թագէն թարշամելի

Փախուցեալ եկին այսրէն զօղեալ ի գլուխ Գալիւեայիս։  
Եւ կենատուք փայտին մասն որ ձօն տըւեալ էր Հսխիսիւեայ

Այս վերին ակնարկութեամբն պահեցաւ իւրեւ յաւանդ,

Այս պարգել ի Տեառնէ գուլ պահապան երկրիս Հայոց։  
Այսու խոկ հանդ ունատիպ լեառն այս գըտաւ Գոդդոթային  
Զօրհնեալ վայտըն տէրունեան կըրեալ ի գլուխ պըսակօրէն։  
Ինեալ աստի մըտցուք արդ և յանձուկ այր

Թօղիկ սուրբ հօրն, 45

Որոյ անհատ աղօթիւք յայտնեցաւ փայտըն փըրկական  
Երեւեալ ի գլուխ լերինս խաչանըշան ըւսով պայծառ,

Ուստ' ի վայր ցուանալով անհահ զօրացըն նուրբ թեօք  
Եկեալ եմուտ ի տաճարն, յոր աղօթէր հայրըն հըսկող։  
Բա՛րէ, քանի՛ բավահանց հանդէս լինէր այսրը յայնժամ,

Եխանք և ժողովուրդը ի քաջաքէն խուռն նըմթացեալ  
Ի տես հրաշից զորմացեալ պանչանացին ամենեքեան,

Եւ զուարձախտան երկիւղիւ յերկիր անկեալ համբուրէին  
Ըզմայլեալք Փըրկշին հոտովն, որ ի նմանէ բուրէր անոյշ։

Եւ լընոյր զլեառըն ողջոյն որպէս երբեմն ըզդողդոթա,  
Ընդ յայտնիլ վայտին բոլոր պատանեկին նորյարութեամբն։  
Այս պարգել գերագոյն խընդաց ողջոյն Հայոց աշխարհ,

Ցընծացին յաւէտ նոքա որ զայս տեսին աչօք իւրեանց,  
Եւ անդէն իտեղիս այսյոր հանդ եաւ խաչնաստուածարարձ։  
Նոր Տաճար կառուցին խորանազարդ կամարաբերձ,

Եւ ըզնովաւ մենաստան, որ կոչեցաւ վերին վարագ, Դուք սակայն արդ, ուրբատամարն, ուր մենաստան հարցէք, մանկունք է կան ահա, ոչ տեսանէք, միթէ չժուժա՞յք հայել ի կերպն, կան ահա, ոչ ի կամարն, այլ ի յերկրի քարինք սըփուեալ ինձ ի յողը և ձեզ հառաջ, ո՛հ, ի վերայ քանդեալ քարանցդ: Զայս զիտէ՞ք թէ՞ ո՞ արար, յաջորդող դարն աշխարհամէր, Յորում ողջ լերինք Հայոց, ա՛հ, մերկացան ի միանձանցն, Յայնծ ամ և ոմն անըզգամ տեսեալ բնաւին ամայացեալ, Ա՛ռ ի պէտ իւր շնուռածոյն քակեաց ըզսա ոչ երկուցեալ ի խաչէն, որ շոյտ նըմա եւս ըզպատիժն արժանահաս:

Ընդ երկայն և զառ ի վայր մեմեալ ի ձորըդ ծաղկաբյո, Խեալ գնասցուք, ովմանկուիք, և ի սսորին վարագըն մեծ 47 Որ փառաւորն է և պայծառ ի մէջ բոլոր մենաստանաց, Եւ պարծի գոլ հաւասար Խման տեղւոյն Այրարատայ, Լուսով ասառաւածեղէն պատուեալ յերկնուստ որպէս ըզնաւ Քանդի այս է Տերունի տեղին յորում երկոտասան Լուսոյ սիւնքըն շողաձեւ երեւեցան յայտնաստեսի, Խոկ և խոկ այսըր հասեալ պաշտօնասէր իշխանաց խումբ Հիմնեցին և նոր աստէն տաճարըս եօթն հրաշանորոդ ի յաւէժ յիշատակ մեծամեծացն աստուածայնոյ Անդուստ ի սկզբանէ միշտ երեւեալ ի Հայաստան: Ի մէջ միում այս խորանաց շինեալ յանուն սուրբ Գէրոդեայ Հանդուցեալ կան Գետադարձ հայրապետին մերոյ նըշխարք, Որ նըշանաւըն հրաշաւոր արդել ըզգ ետըն յորդադէմ: Հուալ նըմին հանդշին ոսկերք և արքային Սենեքերիմ, 48 Նորուն, որ զայս մենաստան նոր նորոդեաց վայելչապէս, Եւ ելից բազմերամ պայծառ դասուք կրօնաւորաց: Որ աւա՛լ, զի արդ զարդիս նուազունք մնացին ի հարիւրոցն, Այդպէս, ո՛հ, սուրբ ըզգ ենուն սենեակը նոցին փակեալ դըրօք, Եւ ի ներքուստ ազօթից այլ ոչ լսին քաղցըր մըրմունջք: Խնայիչ և կարի ժամա եղեր այդչափ, ով Հայաստան, Յանձնասէր դարուս յետին թողեր թափուր ըզմանաստանն: Այդպէս չէիր դու երեմի, այլ յայժ առատ և զուարթամիտ

Որոշեալ զընտիրուն ի քէն պարգևէիր նոցին յօժար, Թողում այժմ ըզպարգևելդ և ի նոցունց քարշեալ հանես Եւ զսիրու նոցին առ ի քեզ յանկուցանես հակեալ յաշխարհ:

Ելէք արդ ի վարագայ զըստորոտով լերինս քերեալ Ա՛ռ Շուշանիւ, կարմրւորաւ անցեալ գնասցուքի Զորովանք 49 Հիմարիկեալ ի Գրիգորէն ի մէջ հովտին շուշանարեր, Մինչ ըըրջեալ ինքնին անձամբ կանդ նէր տաճար ամենուրեք: Եւ սըրբոյն՝ սիրելի երևելով ցանկալի վայրս, Ոչ սակաւ և ինքն այսրէն մընայր վարուք ճըդնողական, Որ և կայ աւասիկ իւր մենարան ի վեր վանիցս, Մերձ նըմին նորուն շնորհէւ աղբիւրբազմեալ յոյժ բարեհամե, Տեսէք թէ զի՞ վայելուչ է վայր փոքրիկ մենաստանիս, ի յերկուց կողմանց լերինք հովանանան բարձրադաղ աղաթ, Խակ ընդ հարաւ և ընդ հիւսիս ծործոր է յօյժ երկայնաձիգ, Եւ աստի անտի ջրաբուխ լերանց կողից վիժեալը վրտակը ի խոխոմը միացեալ խուռն ընթանան կարկաջասահ, Եւ շրիեալ թափ ընդ քարինս պարզեալ զըտին թեթեանան: Տեսէք և զընկուզիս և զայլ բազում վարսաւոր տունկս, ինքնարոյս անտառասէս ըզբոլորիւք վանից բուսեալք, Եւ ընդ լերանց բարձրագոյն և հովանիք լեալ են նոքին: Նա քանի՛ զուարթաբեր է այդ ճախրահոս վըտակ ձորոցդ, Սառնասոյր և սառնորակ ի ձրւնեցին լերանց իշեալ, Ընդ ձայնից սահանաց ջուրց և սոսափիւն ծառոց խառնեալ Զի՞ հեշտանս բերեն ունկան և զուարձութիւն սըրտի, մանկունք:

Երանի՛ ուխտաւորացն որ ի տօնի սուրբ Գրիգորին ի քաղաքէն և զիւղից ջերմեն սիրով դիմեալ դան յուխտ, Եւ բազմին դաս առ դաս առ հովանեօքըս հեշտակի:

Ըզպատիւ Սըրբոյն և զուխտս ոչ մոռանան համեստագոյնքն, Անհամեստքըն մոռացեալ մարմնով և ել՛ հեշտանան աստ:

Ահա ի լեառն վարագայ և ի նորին շուրջ մենաստանս Շըրջեցայք, ով մանկունք, և զուարձալից եղէք սըրտիւ: Ժամ է դառնալ այժմ աստէն ի հարաւոյ կոյս քաղաքիս

ի խաչին վանս, ուր անդ ևս դադարեցան

սուրբ Հոփիսիմեանքն, 50

Ոյց շնորհիւ բըժըշկութեան աղբիւր բղմեալ կայ անդ անօր,

Եւ ի ջուր նորին՝ ջերմուտ թէ լրւասցի ջերմ հաւատով՝

իսկ և իսկ թողու զնա ջերմն և դիւր լինի տագնապելցն:

Գեղեցիկ կունկավանքն որ է հանդէալ Զըւըստանայ, 51

Բարձրագահ բըլրոյն ի գլուխ ի կրօնասէր հարցըն շինեալ

Ուր բըլմէծ դէս կրաչալուր պատմեն զթըռչնոյն ընկերասէր.

Թէ զինւոյ սուրբ Խորհրդեանն ի պակասիւ յաւուր միում

Շըւարեալ մընայր անդէն նըւիրական պատարագիչն.

Այլ որ ի ճեռն ագռաւոյն հաց առաքէր Եղիայն,

Զգիտեմ նոյն խորդոյն ի Կառւց ուստի՞ արւեալ

զարկոյ մի սուրբ

Շոյտ յըշէր շըւարելցն սպասաւորել իւր խորհրդեանն:

Չե ըլքէզ յայլ վանորայս տարեալ աստուատ՝ ինձ կամ է նախ

Տանել ի յԱրտամետ յԱրտաշիսէն շինեալ աւան 52

Ուր ահա մօտ է մեզ և երեխն ծովուն յեզեր

Բուրաստանք իւր բերունակ պէսպէս տընկովք

ուռճազարդեալ

Եւ մըրգովք մեղրահամ դրախտին բերէ զնըմանութիւն

Ուր սոոգին յազրերէն ակնավլճիտ և յորդաբուխ,

Զոր բերան սըրբոյն երբեմն անպատկառիցն առ ի պատիժ, 53

Անիծեալ ցամաքեցոյց, թէպէտ յետոյ ցոյց և ըդութն:

Ի մէջ պըտղոց սորին բոլոր է պատուական և զրօսուցիկ

Ճոխաձիր առատութեամբն և սեպհական ազնիւ ձըրիւքն

Բոլըրչի բուրազըւարթ՝ և անուշահամ կարմիր խընծորն:

Ուր յօրժամ դայ Վարդալաւոն և արեւուն սաստկանայ շողն

Շիկնին հասունացեալ դասնան բնաւին յարիւներանգ,

Եւ ճղալից լեալ ըղծառոյն կարմիր կարմին ի վայր,

Զանձրանայ պարտիպան ի թօթափել և ժողովել.

Գան խըռնին նաւքն ի ծովու և կարաւանքն ի ցամաքի

Պատարուն բեռնաւորեալ ածեն վաճառ հեռաւորացն.

Ահա բերք Հայոց երկրին արդար պատ ի գըրժանաց,

Այսպէս ամի ամի երկրագործին շնորհեալ ի պէտու:

Ելէք, մանկուիկ, յԱրտամիսու, Ելէք հասաք ի Հայոց ձոր

Յասպարէզ լ յաղթողական մեծ դիւցազին մերում Հայկայ,

Գոռ ոդւոյն սիրարտաւան լեալ արդելիչ արշաւանսացն:

Եւ տեղին յոր վառեալ սիրտ մեր կորովոյն քաջազանդուր,

Խաղացոյց ընդ երակունս արիւն ջերմիկ ի քաջ բազուկն,

Որ զայնալիճն լի քարշեալ զնետըն սլացոյց ի սիրաըն սէդ.

Դէդ ամրարտակին կործանեալ կործանեցոյց և ըզդըտիչն,

Եւ յաղթական իւր բաղկին յաւէրժանալ փառաց պարծանք

Գերդաստաննորդ գեղեցիկ սատէն կանդնէր յաղթողն Հայկ,

Դուք նորին սիրուն սերունդը նախնոյն ըզափակերէք յանձինս

Ոչ նոյնակէս յաղթել թէլայ այլ գործակցին բելիարայ

Եւ անժոյժ կրից և կամաց, որ բանագ ոյն են քան ըզէէլ:

Թէ յաղթող լիջիք սոցին ոչ ի յերկրի ճեզ գերդաստանք,

Այլ իշերկինսն կանդնին աներդ յաղթականաց հանդիսադրէն:

Տեսանէք թէ ո՛րպիսի ջրաւէտ տեղի է Հայոց ձոր,

Անկըլայ դետ քաղցրացուր և մեծ առուն Շամիրամայ 54

Լըցեալ դան դարիւ դարիւ յարբումն իւրոց գաշտորէից:

Գարնայնի մինչ դայ Մայիս և ջուր գետոյս առատանաց,

Ի ծովին ձըկունքն ի մէջ խուրըն խաղան երամօրէն 55

Իրեւ կրօս ինչ ելեալ կայտիր ածեն յանուշակ ջուր:

Եւ ի կողովո, որ ի կակուղ ուռեաց հիւսեն ուռկանաւորքն,

Անկանին սըպըրդելով և լի ձըկամրէ հանեն ի դուրս,

Պարդ և առատ Մայիսին բաւեալ մինչև ի գլուխ տարույն:

Առ գետովս յայսկոյս յայնկոյս ի դաշտավայրս պարարտահոդ

Երբեմին շատ մօտ ի մօտ շինեալ էին գեղաստանեայք,

Ուր համակ փարթամ էին եղնամոզք և մըշակք:

Գուք յայնժամ տեսանէք զայս ըրբարքի արտօս բուսակս

Հասկադել և բարձրառն մինչև ի չափ մարդահասակ:

Վա՛շ կարդայր մըշակին անձին, քաղցր էր վիժանք

դառըն քըրտանց, Քաջաձիրէ մերկարազուկ ըզդերանդին յաջ և յահեակ

Հարկանէր, և բարդ ի բարդ միմեանց վերայ դիկէր զորայս:

Զի եղեն, ո՛հ, ի հաղարաց հաղիւ կան արդ քանի մի գիւղը:

Եւ այն յոյժ աղքատին տարակուեալ անպիտոյիւր,

Կարօտ են զոյդ մի եղանց հերկել զիւրեանց կորդ արտօրայս,

Կարօտ են նաև սերմանն թէ և բահիւ բրիցեն դոյզն ինչ:  
Զովային ծիծաղծաւալ առ ծովափամբըդ ճեմելով  
Երթիցուք յազատ Ռստան մայրագաղաքն Ըուրբունեաց,  
Յարքայէն Սրծրունեան շինեալ ի վայր բարձրադիտակ,  
Ընդ որ քաջըր օդոց վրչմունք շրնչեն յաւէժ յամէն կողմանց.  
Լեառն Արտոս ճիւնապամոյն կայ ի կուսէ հարաւային,  
Որ զդարիս և ըզծաղլուն ի դարնայնոյ մինչեւ յաշուն  
Նոր ի նորոյ բուսուցեալ շնորհէր մերում թագաւորաց:  
Ի կողից իւր առ ճիւնովք ի դուրս բըղիին առուակք հազար,  
Խշանեն սահանահոս ի հրապարակը Ռստունայ,  
Որ յուսոգումն անդոց այդեայց նորին երբեմն ոչ բաւէին,  
Ի գուր, ավաս'ո, այժմ այդ ջուրք անցեալ դընան

թափին ի ծովն:

Զաշս ի յ՛լստան դարձուցեալ քաջիկ ըզդա նըզմարեցէք,  
Միթէ ա՞յդ իցէ, մա՞նկունք, այն մեծ քաղաք արքայամոխ,  
Ռոտան՝, որ շատ զոստանիկս ծընեալ ի ծոց իւր սնուցանէր,  
Ռոտան՝, որ էր բնակաւոր տեղի սպայից ազատադունդ,  
Ռոտան՝, որ գունդըս խըմիեալ յազատ տանէ յըլէր ի մարտ.  
Արդ ի սոցունց մերկացեալ եղէ տեղի սովկականաց,  
Ապաշուք դարձան բոլոր և հոյակապ շինուածքըն իւր:  
Ուր են այժմ այն մեծացէն բարձր ապարանք ճովապամոյն,  
Ուր որ անդ ի դադաման իւր ամրոցին ծովահայեաց  
Այն տաճար և ճեմարան ոյր հրաշաղան էր յօրինուածն,  
Ռումունք համայն ոսկեզարդ և պաճուճեալ պերճ նըկարովք,  
Դրունքն էին բարձրակամար հրաւէր տային օդոց ի ներքո  
Զով շընշել արքային, որ անդ ճեմիթ նախարարօն .  
Հուսանցոյցք չողախաղաց յարմար բացեալք ի ծովըն կոյս,  
Ընդ այդուն և ընդ երեկո յելս և ի մուտս արեգական,  
Ծիրանի նըշոյք լուսոյն ծովուն վերայ մինչ ծագէին  
Եւ անդուստ ի լուսամտից շող տաճարին ի սիրտ շոշեալ,  
Զի՞, մա՞նկունք, այն գեղերփնեալ նըկարք որմոց

գոնակ գունակ

Փայլ ի փայլ շողլովելով շըրջըրջէին ակնախըտիդ.  
Այլ ուր են այժմ այսոքիկ, ուր են քո շուք, Ուստան քաղաք:  
Անցին գնացին, ողբերգու, զի՞ դու յինէն հարցանես զայդ.

Ես որպէս ծաղիկ ծաղկեալ ի գարնային վայրիկ մի ժամ,  
ի գաւառուիս Ըուրցաւունեաց երեւեցայ պայծառաշէն,  
Եկըն աշուն, զի այսուէս թառամելով թօթափեցաց:  
Անժարշամ էի փառօք երբ թեւ արծւոյն հովանանայր  
ի վերայ իմ, և պահէր զիս ի հողմոցըն տապախարչ .  
Իսկ յորժամ յերկնից արեն և ի յերկրէ թընամեաց նետք  
Զթես արծւոյն բարձրատարու, որ մինչ ճակրէր հովաթնեալ  
Ճարին և թեաթափ վայր ընկեցին ի բարձրութեանցն,  
Եղուկ զիս, յայնժամ և ես մնացի բնակին անտառալսալր .  
Շընչեցին հողմունք հինից բախնեալ սաստիկ բունոյ արծւոյն,  
Անդուստ արկին ի վայր զեղեալս յաւէտ ի բարձրութիւնս,  
Զի չկարէ կալ հաստատուն, որ բարձրանայ յանիրաւի:  
Այստէս ահա, ողբերգակ, ծաղիկ փառացն իմ թափեցաւ,  
Փոխանակ ապարանիցն և գեղաշուք Տաճարին այն  
Այդ ցածուն խըրթին խըրթիթք յիս մընացին շինականայ: 56  
Արգիք, մի՛ յամեք յ՛լստան, օն ըշտապով ելէք, մա՞նկունք,  
Ջի մի՛ և ոս ընդ երկար հեծեալ զթառաչ հանցէ ցաւոց,  
Եւ կըրկին աստ ովրանուէր նըստջիք ի լաց իրբու յլինին:  
Վասն որոյ ելէք մի՛ մնայք, և 'նդ Առնոսայ անցեալ ընդ սարն  
Իջուք ի չոգւոց վանք վաղակառոց կին մենաստան  
Հիմնեցեալ ի նախուստ յառաքելոյն բարթողիմէ:  
Խորագոյն ի ծործորին և առ Տիգրիս դրախտին գետովն,  
Որ ի նմա հանգուցաւ կուսին պատկեր կենդանագիր,  
Կուսանացն առաքինի լեալ կրուսաստան այնուհետեւ:  
Մըտէք նախ, մանկունք, ի մէջ սուրբ Տաճարիս մօրն Ցիսուսի,  
Պատկերին աստուածահոււպ տենչիւ համբոյր նըւիրեցէք:  
Ելեալ ասպա երթիցուք ի ցած մատուռն, որ երեխ,  
Մեկուսի և ի բացէ շինեալ յայնկոյս առ գետակաւն, 57  
Ինքըն փոքր, այլ զոմբն մեծ առ ընդ իւրեւ հանգուցանէ,  
Ինքն անջուք, սակայն զըլիսոյն ամենաչուք՝ հովանանայ:  
Այսը յայդ իսկ եկեալ եմք թողլով անդէն ըզմերձակայսն,  
Այլ ուր, ո՛ մանկունք, զայդ իւրովի գուք իմասցիք:  
Խոնարհեալ ըզդլուխըն ձեր մըտէքի ներքըս սուրբ մատրանդ,  
Ոյը է հարցէք աւասիկ, ոյը է միրիմոդ հրսկայաշուք,  
Եւ ո՞վ ի դմա եղեալն ի գիւցաղանցն Այրարատայ:

Մեռեալ է, դեռ հասակին շուքն ի վերայ չիրմին փայլի, Գլուխն եղեալի մատրան սրունքըն ծըգեալ դրանէն ի դուրս Զի մարմնոյն տիք սօսատիպ ոչ պարագրի յանձռւկ տեղւոց, Գողցե՛ս հասակըն է պերճ վեհ արքային մեր Տըրդատայ: 58 Հա՛, մանկունք, նորին է իսկ ։ շուրջ ըզդովաւ նստարուք յուրի, Ես սրտիւ տղիկոտոր կոչեմ լարվ ըզդուցեալդ, Մինչեւ դըմա տաց խօսել և զարթուցից ի քնարանէդ, Զայն տալ ինձ ողբերդակիս թէ լրուցո՛ զքնարիդ քո ձայն: Իսկ դուք ի հող տապանիդ պինդ մածուցէք զերեսըս ձեր, Յօլցեք կաթիլս յաշաց՝ վեհին յոսկերսդ աճիւնացեալ, Գէթ սիրով այսու զնոցին մեք հատուսցուք այժմ ըզպարտիս Գոլ որդիք այնոցիկ, որ դատան առ դա ապախտաւոր: Մահ՝ որո՞ւմ, բարերարին, ո՛հ նիւթեցին տիրագրուէքն. Ում դարան, սիրելոյն, բա՛րէ թագոյց տուն Միսակեան, Եւ ուռտի՞ դառըն բաժակ, ա՛հ ընտանի դաւաճանաց: Զոյժ մարմնոյս այս վիմեղէն, զոր լուծանել չկարաց Պարմիկ, Հայն իւր համազգին դիւրաւ ելոյծ այսպէս ի հող: Այն բազուկն անպարտելի գոռ թըշնամեացն ա՛հացուցիչ, ի գրուժան տոհմից իւրոց, աւա՛զ, փութով դարձաւ նըլուն: Մոռացաւ Այրարատ ըզբացեալ դիրկ սիրոյ սորին Որով վինքն և զիւր մանկափս գրգուէք գըթով հայրանըման Եւ վերդ ըզմայր որ ի գիրկ զարդեալ տաճէ գորովագէս, Նոյնպիսեօք և յանձանձէր ըզտուն Հայկեան մեծ Տըրդատէս: Որսացան դարանակալքն առիւծ հըզօր զԱրշակունիս, Որ ըզորջն առ Մասիսիւ եղեալ մեւընչէր ահեղագոչ, ի ձայնէն դաղանք երկրի խուճապէին առ ի փախուստ ՅԱյրարատայ սահմանէն ցորչափ լամէր ձայն առիւծոյս: ի ձեան առին դաւողք՝ հատու զտապարըն նենգութեան, Հարին և հատին ըզծառը բարձրացեալ ի Հայաստան, Ոյր ի ստեղունս տիրոստեան, ո՛հ, թառէին Հայոց մանկտիք: Վասն այս դուք լացէք լացէք աստ, ո՛վ մանկունք, մեծարքունչ:

Զայն ոդին աօրանորհ, որ այսպիսում բարերարի Զայս վիտարիէն հատուցին. ո՛վ հատացմանս անօրինակ: Մարտափելի դառն յիշատակ միշտ անմոռաց,

Մինչև յե՞րբ դարուց ի դարըս հոլովեալ զհետ մեր գայցես, Մինչև յե՞րբ Հայոց ունկան բոլով ածես քըստմընելի: Կա՛ց անդէն, մի՛ գար յառաջ ծածկեալ ի ծոց ժամանակաց, կաց, ժըտեմ, մի՛ յաւելուր բասրանս բերել մեզ յաւիտեան: Այլինձ դու ձայն տուր այժմիկ որ ի վերայ միամիդ անկեալ թալկանամ ուշագնաց մինչ յուշ ածեմ զլախման վեհիդ. Ձայն տուր ինձ արեգ Հայոց, որ սըրտառուէ մըտեր ի մայր, Զշառաւիզըս քո բոլոր ամիսուցեր յԱյրարատայ, Ճրագի մի չափ և նըլոյլ չթողեր ի լցո տան թորդումեան: Մըւընչեա՛ նըւադ մի ևս, արի Առիւծդ Արշակունեան, Միթէ կոնայիշն կորիւն մի դու ծնանիլ ազգին քո սիրեցեալ. Զարթի՛ր որ ծանըր քընով դու նինջ առնուս ի քնարանիս, Ըզէասակիդ հըսկայակերպ ի նեղ մատրանս կլծկեալ այդպէս. Այդչափ ի քէն սիրեալ քո Այրարատ սիրեաց ըզքեզ, Զայս իւռարհն և նըւաստիկ մատո՞ւռ չափեաց յիրմիդ բաժին, Զափողիդ նըմա զանբուռ տեղիս տիգաւըդ քաջութեան, Բիւրաւոր ժողովրոց նորին լինել ի բնակութիւն: Վայելէր նըմա յաւէտ ի լայնածիր ծոցին իւրում: Արժանորդ՝ հոյակապ և փառաւոր կանգնել տաճար, Քանդակեալ ի ճակատին զանմահ անունըդ քաջապանն, Եւ հովանի տաճարին լինէր անդէն շուք Մասիսին: Այլ թէ հարգըն մեր մեղան ըզփիրելիդ անկուչելով, Յագեալ և պարարեալ ի ձեռըն մեծ բարերարիդ, Մե՛ք՝ որդիք նոցին այսօր առ քո տապան դիմեալ, ի դիմաց հարցըն մերոց ըզթողութիւն ժըտեմք լալով, Լեր ներող նոցին և մեզ քոյին ողւովդ վեհանըման: Եւ դու, ո՛վ քըրիստոսակէր հոգի մարմնոյս խաչազդ եստեալ, Թէպէտ տուն եղօր մարմնոյդ անձուկ է յոյժ անիմառունակ Սակայն քոյդ որ յերկինս անեղացէն է և պայծառ: Հաշտ այտի հայեաց ի մեզ լեր բարեխօս առ Այցելուն: Մի՛ մոռանար մի՛ մոռանար ըզփիրելիդ քո յԱյրարատ: Գարմիր որ ոչ ի Այրարատ այլ յերկինց լեւառն փախեար ի մէնջ, Յայոցը մի՛ և այժմիկ դու գանգատիր Գլիդ որին յունին: Փոխեցաք մեք յանբարի բնութեանց մերոց միշտ բարձրայօն,

Յանուշակ բնութիւն սիրոյ որ տայ սիրել զոէրըդ սըրտիւ :  
Ո՛չ այսուհետեւ խառնեմք ըդթոյն քեզ մահառիդ ,  
Գիտացաք զի՞նդ քոյդ կենաց կարձելև կեանքմեր կարձեցաւ  
Գիտացաք , մահուամբ գըլլոյդ մահ սըիռեցաւ  
ընդ ողջ մարմինն .

Զայն ուրեմն այտի յերկնուստ արդ լըսեցո զներողւթեանդ  
Եւ պըռութիւնդ թախճալից լըծ աւասիկ հարուստ ամաց,  
ՅԱՅՐԱՐԱՄ դարձո զերեսդ , յորմէ ծածկեալ ելեր յայնժամ :

Զի՞ ձայնիւդ յորդորիւն դոչես յերկրէ , այ ողբերդակ .  
Զի՞ չժողուս եղօրդ իմոյ նընջել հանգիստ ի տապանիդ ,  
Եւ զի՞ զիմ , որ յերկինից դահն ընդ Քրիստոսի թադաւորեմ ,  
Ըղվախճան յուշ ածեալ դու թալկանաս ուշամոռաց ;  
Եւ յոյժ ուրախ եմ ընդ այն , որ զիս հանկը յԱՅՐԱՐԱՄ այ ,  
Տէրն ետ ինձ փոխան նորին զգաւառն երկինից ամենատենչ ,  
Ուրանօր անտըրտում թադաւորեմ յաւէրժարար ;  
Անդ ոչ դոյ դաւաճան , ոչ տիրադրուժ երախտամոռ ,  
Ոչ և բաժակ մահագոյժ և կամ աթոռ ժանտ և զըրժով  
Այլ զըրարձ անիիշտ վիճակ յաւէրժարակից ընդ հրեշտակացն ,  
Եւ անմահ երանալից միառք անվատում տիրապատրաստ :  
Զի՞ և քեզ կըսկիծ է յոյժ առ ապաշուք շիրմիդ եղօրս ,  
Շատ է այդ բաժին յերկրի մարմնոյդ իմոյ հողապատեան ,  
Թող առ այժմ հանդիցէ դո ի մայրենի հողոյն ի ծոց :  
Գայ դարուն՝ դամ ես յայնժամ և զեզրապիկդ

իմ բողբոջեալ

Առնում յանձուկ ի տանէդ՝ հանեմ յերկինս լայնատարած  
ի տուն Հօրըն Քրիստոսի ուր օթեվանք բազում են յոյժ ,  
Արձակ արձակ ինոսին թող ճեմ առցեն սրունքըդ կըծկեալ :  
Ոչ պիտին տաճար դըմա որ երկնայնոյս է ցանկացող ,  
Այդ և եթ այնոցիկ է , որ ի մանէ վրիպեալ են յոյժ ,  
Եւ ըզյոյս իւրեանց միայն լընուլ կամին երկրաւորօքդ :  
Իսկ որ արդ վասն իմ հոգւոյս ուրախ լինել ես ասացի  
ընդ հանել զիս նոցին փութով ի հայրենիս այս անտըրտում ,  
Այլ երբ հայիմ ի յերկնուստ յիմդ յԱՅՐԱՐԱՄ շարժիմ ի լաց ,  
Զի տեսանեմ ըզդա թափուր ի բիւրաւոր ժողովրդոց ,

Տեսանեմ իսպառ մերկեալ յիւր ճոխ վիառաց նախանձարկու :  
Ճեծ ճեմ 'ի վերայ վանորէից , աւերակաց ,  
Զորս լուսատուին հօր ճըգունք լիմ կանգնեալ զարդարեցին ,  
Հառաչեալ հոգւոց հանեմ և ի վերայ ճոխ գաւառացն ,  
Ոյց կառավար էին իշխանք չորեքհարիւր արքայաշուք :  
Լամ և հոգիս մորմաք զմէն մի զարմից նախարարացն ,  
Առաւել և յոյժ կարի զտոհմին իմոյ Արշակունեան ,  
Որոց ճետք և շառափիղք համայնածինջ ըստաւեցան ,  
Եւ զանունս աշխարհալուր , ո՛հ , մուռացան մանկատին անգամ :  
Ես վասն այն սուգ ըզգենում և յոյզ նստիմ թէպէտ յերկինս ,  
Ինձ այս տեղիք ուրախաբեր դառնան տըխուր տեսարանք ,  
Եւ ցողեմ յամարոց սիրոյս շաղ ի վերայ երկրիդ . Հայոց ,  
Ճեղեալ արտօնր ի յերկինս առ աթոռով պետականին ,  
Նոր գուցէ զուարթացուցից ըզթառամեալդ իմ Հայաստան :

Բըլիսեսցին և յիւր լերանցդ ի վերազրիւր հայրենասէր ,  
Վ ըտակունքն եկետլ ի մի յորդոր գնասցեն գետահետեալ ,  
Ընթասցին իբրև զԵփրատ , Երասլի ի մէջ խոնարհ դաշտացդ  
Եւ երկրի ծարաւելց տացեն ըզգուր առատ առատ ,  
Ծըծեալ փըլսրին և բերուն հողոց ի գուրս բոզբոշեցէ  
ի ծոցոյն իւրոյ զցորեան սովիցելց մանկաւոյդ ի հաց ,  
Կերիցեն կըշտապինդ , և յաւիտեան մի՛ քաղցիցին :

Ընդ ճեղ արդ ժամէ է խօսիլ Հայկեան բողբոջքի հող օտար  
Որ ըզճրագ լուսոյն մըտաց լուցեալ ելեալ էք ի իւրնդիր  
Գանձուն կորուսելց յԱՅՐԱՄ տուն գիշերացեալ :  
Մի՛ կասիք մի՛ կասիք ի տոէպ ըստէպ յորոնելցոց ,  
Կարծելալ թէ ո՛չ ի տան կայ թագուցեալ զ անձ հայրենեացն  
Ո՛չ , ի դ մա խորեալ է այժմ հողով խաւար տըգիտութեան .  
Թէ միայն զիւզ ի ճրագիդ յաւերլուցուք ըզէրն ասեմ ,  
Շոյտ ըզնա հարուստ լուսով դորին կարեք դուք գըտանել :  
Այլ միթէ ընդ այս գանձուն և զի՞ս ինդրէք լեառնի Սեպուհ ,  
Ողքեալ նոր սոյդ սիրով ընդ վոմիլ ճեր բնութիւն յանոյշ .  
Բայց ոչ այլ իմ լուսատուն թողու զիս պինդ զըրկեալ ի գիրկն ,  
Ինձ ի դէմըս բերելով զհարուած նետին և ըզբաժակն ,  
Զէ պիտոյ և ճեղ այլ զօրեղ բազուկ դէմ թըշնամեաց ,

բարձան այժմիկ ի յերկրէ Շասուհն պարսիկ և գեթուեհոն,  
ընդ հողմոցըն բռնաշունչ արդ շնչեն օղք խաղաղասիւք,  
Ցորում Տէրըն երեսի ի Մասեաց զլրւխ գըթով իւրով  
ի սեպուհ լեռնէ երկնից իջեալ կըրկին յայցելութիւն :  
Եւ ոչ ևս պիտոյանան զէն և զըրեհ , վահան և տէզ ,  
Այլ հանձար իմաստութեան որ տան ըգփասըս ժառանդել  
Եւ ընդ իմ ձեզ կառավար Տէրն է երկնից միահեծան  
Որ առանց Սաւուզայ հովանէր երրեմն զլարայէլ :  
Զայս՝ Այրարատայ արժան ետես նախատեսուչն ,  
Զի որ թիւրէր զընթացըս իւր մինչ վեր առնոյր

ի բարձրութիւն ,

Ուսցի գէթ խոնարհելովդ յանըստերիւր գընալ շաւիդ :

Տուրարդ լուել ողբերգու քնարիդ լեզու աշխարանուադ ,  
Ել և ա՛ո ըղաղական մանկահիսքդ քո հրաւիրեալ այդր ,  
Առ ի բաց դնա ի շիրմիդ մի՛ տար ինձ շատ խօսել յերկնուաստ  
Եւ ոսկերցդ իմ ի ներքոյ մահարձանիդ հեծել ողորմ ,  
Ծըծեալ ըմպեալ դառնասիս զիջեալ կայլակս արտասուելոյդ :

Մայրամած զերեսըս ձեր ի վեր առէք արդ : ո՛վ մանկունք  
Եւ յետին հասրոյր տըւեալ սուրբ տապանիդ՝ ելէք յուղի ,  
Դարձուցեալ անդրէն ըզձեւզ տանիմ կըրկին յլուըշունիս ,  
Շարեկեան ի մենաստան շինեալ հանդէպ Առտէր կըզզւոյն ,<sup>59</sup>  
Երկոքումրք խորանայարկ սուրբ Տաճարօք վայելչօրէն .  
Մին յանուն Աստուածածնի , և միւս նախկին վըկայուհւոյն  
Սանդընստոյ պարկեշտ կուսին հետեւելոյն Թաղէսուի ,  
Ուր և իսկ յիւր տաճարին կան հանդուցեալ

մաքուր նըշխարըն :

Իսկ ի յետուսա խորանին ի սուրբ մատրանըն նուաստակերտ  
Աւանդ եալ են այն մատունք , որ զըրաշահիւս

զրեցին մատեանն

Զօնեալ ողջոյն միանձանց աշակերտեալ ի կրօնաստանս :  
Այլ չնորհաց չոգւոյն , մանկունք , որ եմք նիազ և փափազող ,  
ի տապան զիմեալ ողըրոյն առ այս կալցուք ըզնա օճան .  
Եւ պատմեցից անդանօր զմին ի կրաշից երանելոյն ,  
Առ ի փառս ներդ ողին որ ըզծ առայն պատուէ այնպէս :

Դժնեայ ուրն բարբարոս բնակեալ երրեմնի գիւղս նարեկ  
Եւ ըլուհաւ մի դընել թուխս կուսան կընողն որ էր տընտես .  
Եւ այն ինչ հաւըն նորեկ ճետովք ճեմէր իբակ վանից <sup>60</sup>  
Խուճապեալ ի մըրըրկէ պատըսպարէր զձագս ընդ թեօք  
Ապաւէն խընդրեալ ինքեան զերկանաքարն յեցելց յորմ :  
իւ . չգիտեմ չարին հնարիւք թէ իսկ վերին ակնարկութեամբն  
Անկանէր քարն ատաւէն զհաւըն ձըմէր ճետովք հանդերձ :  
Զայս տեսեալ տընտեսին տարակուսէր մեծ երկիւղւ ,  
Այլ յուշ ածեալ ըղիքիգորն , ում ծառայէր սըրտի մըտօք ,  
Եւ ըզնա , որ զաղաւնիալն տապակեալ թըռոյց հրախւք ,  
Շայտ անդէն լընոյր ի մաղ զնոսին տանէր ի դիր սըրբոյն :  
Բա՛րէ , յետ պահու միոյ կենդանանայր հաւըն մեռեալ ,  
Եւանէր և զըրգ ալով գայր առ արնաեսն առեալ ըզճագսն :  
Կամի՞ք զի զձեզ , ո՛վ մանկունք , հանից ի լեռան

և քարանձաւն

Անդ ուր իրրե յառագաստ հարսըն հըսկէր աղօթանուէր ,  
Փետային իւր անձկութեամբ մաշեալ ողւովըն խանդակաթ ,  
Եւ ի սեղան սիրոյ սըրտին յիշատակաւըն ճենձերեալ ,  
Տես մինչեւ ըղտենչալին առ ի սէր իւր իջեալ յերկնից :  
Քանդի մինչ երանելին նոր այգուն բանիլ նոր զուարթաբեր ,  
Նըւիրէր իւր փետային զիսրոց սըրտին սիրոյն նըւէր ,  
Այն ինչ զաչս ի ծովըն կոյս գարձուցանէր յԱռտէր կըզզին ,  
Տեսանէր ըզնա ողջոյն լցուեալ լուսով ծիրանափայլ ,  
Եւ ի մէջ լըսոյն երկու արեգակունք հրաշաճաճանչ ,  
Ուստի ձայն քաղցրիկ լըսէր . Ե՛կ Գրիգորէ , էջ ի լունէդ ,  
Մատի՛ր և ա՛ո ըզքո Տէր , ըղտենչալին ում ցանկայիր :  
Ո՛վ , զի՞նչ տարփաւոր հարսին յակճիւս կացեալ ընդ այ ,  
Աչքն անըլթիթ ի կըրդին սիրոյն ի սէր յափշտակեալ ,  
Զայշն ծով ծինաշուրէր գեղզ եղելով իջանէր վայր ,  
Եւ ծովուն վերայ ճեմեալ իրրու զՊետրոսն առ սիրելին ,  
Մօտենայր և անկանէր նոր առաջ կուսին լի անձկանօք ,  
Զմոնէկի ջիւտուս մօրն ի զըրկէն առնոյր ըզծիւ և համբուրէր ,  
Տայր անդէն՝ և դու , ասէր , ա՛ո ըզքո Տէրըդ կուսածին ,  
Տայր անդէն՝ և դու , ասէր , ա՛ո ըզքո Տէրըդ կուսածին , Մայր անարատ :

Ա.Ա. և շըրթամբք համբուրեաց զտիալ ըւսագեղ

Աստուածորդւոյն :

Ա.Ա. և հովուաց այրին լեալ զուգակիր փոքրիկ կըղղեակիր,  
երևեալ ի դմա հրաշիրք՝ կուսին որդւովըն մանկացեալ :

Են և այլ չատ վանորայք ի դաւասիս ըուցտունեաց,  
Ա.Ա. գեղով զարմանալին զիս գրաւելով քարչեալ տանի  
Մենաստան Աղթամարայ հրաշաղլին ի չայաստան :

Ա.Ա. է որ անդ ի ծովուն զգլուխն ամբարձեալ վըսեմարերձ  
Զեռն ի նըմար հրաւիրէ, օնն երթիցուք անդըր, մանկալք :

Բայց եղուկինն, և աստին զիս ըմբըսնեն ցաւքիննըուստ,  
Կըրկնակի տան ի սրբտէս ի վեր հանել ըղհառաչումն :

Ա.Ա. եկ այժմ, որ իսկ աչօք ըզէն սորին հիաջքնաղ  
Նըկատեր և քոյդ ի վէպ նըկարեցեր ճըզզըրսուապէս,  
Թէ զրազում շնոր նախնեաց շըրջեալ տեսի յաշխարհնչայոց  
Սակայն զիս ապէցոյց սըխրասարասն այն Աղթամար :

Ե՛կ և շըրջեաց դու այժմիկ, տես զի՞նչ կան արդ

յայնց շինուածոց

Եւ զի՞նչ անցեալ գընացին ընդ շինողին փառացըն ճոյն :  
Ուր պարիսպն ահեղակերպ հիմունքն ի խոր ծովուն եղեալ  
Զարդարեալ աշտարակօք և գեղեցիկ բոլըր բըրդօք,  
Ոյց ի գլուխ գահոյք էին խորանանման և տախտածն .

Ա.Ա. ի զրօս նըստէր զագիկ՝ ապատագունդ զօրքն ըզնովաւ,  
Եւ կապուտակ ծովուն դաշտ շուրջանակի կայր տեսարան,  
Մեղմաշարժ ալիքն ընդ դէմ ծիծաղին ծաւալ ծաւալ:

Ուր քաղաքն ապաստանի պարըսպաւոր ամրակառոյց  
Եւ ի նմա փարթամագոյն աղատ իշխանք ըուցտունեաց,  
Կամ պալատն ոյր ըզաւեղին նոյն ինքն արքայն չափեաց լարիւ  
Ուրչեալ ի նմա փողոցս և բուրաստանըս ծաղկոցաց,

Զոյս անթառամ պահէր միշտ վրտակ աղբերն անհատահոս :  
Եւ ուր դաշիճն վեհ շինեալ ի պէտս ըզուսանեաց,  
Նըկարովք գեղավանոյն գերազանցեալ քան զիստանին,

Յորս երեէր բազմեալ ի դահ արքայն կերպիւ նազելագոյն,  
Զիւրե պար իբր ի պալատու դասք պատանեաց լուսաեսիկ,  
Յանդիման ի մարտ ելեալք հոյլք ըմբըշաց սուսերամերկ :

Անդ ահեղ առիւծունք և այլ պէս պէս գաղանաց խումբք,  
Սոսկալի տեսարան մարտից նոցուն երևէին :  
Հապա զի՞նչ և զերամոց հաւուցն ասեմ գունակ գունակ  
Գեղովիւրեանցբանակաւոր ընդ երկնադոյն յորմ նըկարեալք,  
Գիտես թէ ՚նդ օդ ձախրէին թւապարեալ կենդանապէս :  
Ուր սոքին աստ, ո՞ պատմիչ, էրում և մի ոչ երևին,  
Մի միայն նոցին տեղիք արդ նըկարին աւերակեալ :

Ա.Ա. գովիկ, ո՞ր երգու, երկրաւորին էին վայելք,  
Եւ մորմնոյն ունայնասէր բաժին տրւեալ անտեւական,  
Եւ զիւրեղ տւապափուլ համառուտ շինուածք հիմունք ի հով,  
Վասն այն չցոյ ի շնչիմանէ հողմոց փիւրգեալ տապալեցան:  
Ի դոցունց միայնակ զարմանագործ կաթուղիկն ,  
Որ բաժին գովով հոդւոյն՝ հիմունք յերկինըս կանդաղեալ,  
Մինչև ցայսոր հաստատուն եկաց անշարժ միշտ ի հողմոց:

Ա.Ա. մի՛ դու չերեւելոք՝ մեծագործին յաւելուր փառս,  
Շատ է այն պարծանք նըմին և յիշատակ յաւերժական :  
Ա՛ռ ուրեմն այտի վմանկունս տա՛ր Տաճարին այն յանդիման  
Եւ ցուցից անդանօր զանձար ոդւոյն մեծագործին ,  
Եւ մատին Մանուէլ զձարտարութիւն ամենարուեստ: Ել  
Տեսէք ահա զարտաքուստ յորմոց վերայ նորին դրօշուածս  
Զիվ հընոյն և ըզնորոյն զըզգիտ ի վէմըս քանդակեալ,  
Գոդշիր թէ նոր յանդիման բերեն աշաց՝ զանցելոց գործ :  
Նախաստեղջք տերևապատ առ թըզենեաւ պատըսպարին ,  
Արարիչն ի վերոյ ժառոյն կայցեալ ձայնէ զի՞ւր եսն .

Ի վերայ եւեալ կայչն ըսպանանէ զԱրէն անմեղ .  
Մասեաց ի գլուխ կայ ի նիստ նաւըն նոյեան անառագաստ,  
Աղաւնին շըզարեր ընդ պատուհան մուտ առնէ՝ ներքս .  
Աբրահամ սուր ի ձեսին զենու զորդեամին իւր սիրելի ,  
Ուր նովաւ խոյն յեղիներաց ի Սաբեկաց ծառոյն կախեալ .  
Խահակ օրհնէ զթակոր զաջն ի վերայ գըլմոյն եղեալ .  
Փախուցեալն ի յեղորէն զքարն ի սընարս ելեալ նընջէ :  
Եւ սանդուխին առնմենք որով մարդիկ ելին յերկինն .  
Ցովսէփ, արև, լուսին և միտասան աստեղքն ի յոտն .  
Մովսէս և առ անթովք տախտակ քարանցն Աստուածադրոշ:

Ահարօն՝ թագն ի գըլուս և ի ձեռին բուրվառ խընկոց ,  
Քահանայքն ըղտապանակն իշուս բարձեալ ընդօրդանան .  
Դաւիթ՝ պարսաքարիւ Գողիաթուն կայ ի ճակատ ,  
Ակըստամբն Սրբուղմ զվարսիցն ի կախ կայ ի ծառէն .  
Սողոմն առիւծադրօջ ի գահ բազմեալ ըքեղակերպ ,  
Առաջի նորին ի գատ երկու կանայքն և նոր մանկիկն .  
Եղիա կառօքն յերկինս և Եղիաէ հայի ընդ ելն .  
Եսայի , ոյր ի ըլրթունս մատուցանի հուրն ունելիօք .  
Դանիէլ , և Հինաւուրց ծերն ի յաթոռ նըստեալ փառաց .  
Հիազարհուրն Ամբակում իրր ի վիմին կացեալ պահօք ,  
Ընդ նոր գործ խաչեցելցն անդուստ հայի զարմանալիօք .  
Ի կիտէն կըլեալ Յովիան առ զըդմենւոյն ըքով նըստի :  
Այսպէս և այլ մարդարէք և նահապետք խրայէլեան  
Ի մի շար շուրջանակի կան պարաւոր զեկեղեցեաւ :

Թողեալ արդ զայդոսիկ տեսէք և նոր կտակին ըզիէպս .  
Աւետիս տայ Գարդիէլ հաւան կուսին խօսեցելոյ .  
Սքանչելի ծնունդն ի յայրին , հրեշտակք , հովիք ,  
ի խօնայր Յովիէփ ,  
Անդ և մոգք աստղահրաւէր՝ զընծայս ձօնէն Արքայ ծնելցն ,  
Ընծայումն ի տաճարին Յիսուս ի դիրկըն ծերունւոյն .  
Յովիաննէս ջուր ածէ զիսոնարհ գրիմով՝ Մըկըրտելցն .  
Տէրն իշով յԵրուսաղէմ , մանկալին ի ձեռու արմաւենիս .  
Պըրկիչն ի վերնատունն յընթիս բազմեալ ընտրեալ դասուըն ,  
Ի ներքոյ իրր ի պարտէզն ի ծունըր կայ խաչապատրաստն ,  
Հրեշտակն վերուստ կարկառէ զմահուն բաժակ

յօժար Ոգւոյն .

Մատնիչըն նենդ ուորք հրայեալ ի չեղն համբուրիւ .  
Զեռսկապ առեալ տանին յինուորքըն չար գՏէրն ի յատեան .  
Զփայտ մահուն Անպարտակիրն առեալ դիմէ ի Գողգոթա ,  
Զիսաւիւ Որդույն փարեալ Մայրն անդ սիրելին և Յովիաննէս .  
Թաղումըն կենդանւոյն , պատէ Յովիէփ զԱնպարսգիրն ,  
Յարուցեալն ի կոյս վիմէն և յաղթական դրօն ի ձեռին .  
Համբառնալն ի վեր Բանին ւ աշակերտացըն կոտ յակճիռս  
Առաքեալք և ընտրեալ սուրբ Հայրապետք Եկեղեցւոյ  
Մէն մի իւրեանց նըանիւք որ առ նոսա յայտնեն ըզնորհսն .

Մատթէոս , Մարկոս , Ղուկաս և Յովիաննէս արծուաթըոիչն  
Խոր հրդեամբքըն կենդանեացի չորս կողմունը քանդ ակեալ  
Տեսանէ՛ք և արքայից Արքակունի և Արծրունեան  
Զկերպարանս ահեղատես և ըզհասակս հըսկայաձև :  
Նա յաւէտ ընդ փառացի պատկեր Գագկայ նայեցարուք  
Որ հաւատով մեծապարծուն բարձեալ յիւրում .

բազկաց Վերայ ,

Զբոլորակ տիալ Տաճարին և ձև փոքրիկ ճըզքըրտահան  
Ընծայէ ձեռօք՝ Փըրիչն որ յանդիման իւր յօրինեալ :  
Ի թիկունս Եկեղեցւոյն անցեալ այտի տեսէք և անդ  
Զորի և զուս ողկուզազարդ այդ եգործովք ի միասին ,  
Զիթենիս մանրապատուղ և այլ պէս պէս ծաւըս մըրգաց ,  
Զիթ մանրամասին Կերպացեալ են ձիւզովք , ալբազովք : 62

Զարտագին գեղեցկութիւն տեսիք ահա և սպանչացայք  
Արդ և ի ներքըն մըտեալ սըրբասահման վեհ Տաճարիդ՝  
Ղվանեցէք և ըզներքին շըքեզութիւն փառաց գորա ,  
Թէ ողջիկ կա՞ն տակաւին ոչ Կողնապեալ ի թըչնամեացն :  
Եղուկ և դիս , ողբերգուն , ես ևս ընդ քեզ լըզաւ առնում ,  
Գանդի ոչ որպէս յայնժամ արդ տեսանեմ ըզուքներին :  
Կրունքըն իւր մայրատափատկ՝ քերեալ գերգիւալ

Որ պատեալ էին համբուն զուտ արծաթեայ  
Վայլուն թիթղամիքք :  
Զերեին ի յորմունս այն ձաղկաձև ուկիքանդակք :  
Ի պատկեր տնօրէնութեանց , և ոչ ոսկուով յեռեալ ակօնքն :  
Հայիմ , ո՛հ , և ի սեղան և տեսանեմ մերկ ի զարդուցն ,  
Ոչ աշտանակ սակե ձոյլ շուշանադործ բազմաձիւզեան ,  
Կամ սրահակ մետաքսահիւս գունեան թէրք նարօտ նապուտ ,  
Կամ ծածկոցի բազմոցն մարդաբատաշաբ համատակեալ :  
Զայսոսիկ , աւա՛զ ուկոյն յաւար տարան կինց հրոսակք ,  
Այդու մերկ թողին ըզգա յիւր ի ներքին հանդ կըճանաց ,  
Զգեցուցանել վերըստին ձեզ բապաէ , Հայկեան մանկունք :

Գաջ ահա զիտեալ տեսիք ի հոյակմապ այս մենաստան  
Զկրաշարուեստ ձարտամբութիւն և ըզհանճար մտտին Հայոց ,

Այս յորժամ ոյժ զօրավիդ տային բաղուկքըն քաջազօռ  
Եւ արիւն յամէն որբուէ խաղայր ցամաք մատին ի ջիլ ,  
Զայսպիսի զարմանափս՝ մատըն ողջիկ այն քանդ ակէր :  
Իցէ՞ , զի և դարձեալ խալըլ առցէ յամէն որբուց ,  
Եւ մատանց մեռելութեան տացէ չարժումըն կենդ անի ,  
Ցարիցեն և ոյսպիսեաւ դշոնճար Հայոց հանցեն ի լոյ :

Եւք , մանկունք , յԱղմամարայ , տանիմ ըլոձեղ  
ի միւս կըդզիս ,  
ի Վիմ և ի կըտուց սուրբ կրօնաստանըս միանձանց :  
Թըռի՛ք հապա թեած եալ զծովըն հատեալ լայն ասպարէզ ,  
Շոյտ հացուք անդ ուր կամիմ դիւր տալ ոտիցիմ վաստակեալ  
Եւ քնարիս թուլադ աշնակ՝ հանդիստ վայրիկ մի լուսութեամբ :  
Հասաք վաշ յիմսիրեալ տեղ և խաղաղիկ նաւահնդիստն  
Ուր փութան նաւքըն խոռվեալ զերծեալք յալեաց  
կենցաղոյս այս

Գիսաշին բացեալ զառագաստ հովմով սիրոց ֆըրկչին վարեալք  
Եւ ի տապան իմըն մոտաք՝ անձեռազ ործ և հողանիւթ  
ի փոքրիկ ծովակիս կազմեալ վերին ճարտարութեամբ ,  
Ուր պահին մաքուր երամ սուրբ աղաւնեաց մըշտամընչիւն  
Ուր փախուցեալ ի բաղէից ի ծոց սորին թաքչին անքոյթ :  
Ասպարէզ է տատանօր խըմից ա՛յլ իմըն մենամարտ ,  
Դրօշու խաչին խրախուսեալք ընդ դէմ չարին աներեւոյթ ,  
Եւ ոչ ի զէն այլ յաղօթս վասեալ մարմովըն մերկանդ ամ ,  
Մարտուցեալ ընդ թէլիար զդ ետնեն բընա չնորհիւ խաչին :

Աղքասին յանձուէ խլցիունս , մըտեալ , մանկունք ,  
արդ ըրջեսցուք ,

Ուր ի սոսին ձինեալք են անձուէ հետոց հետեռզացն ,  
Զի՞ , տեսէք , մութ և անշուք դեղատըխուր են ըլնապին ,  
Պատեալ որմովք դուզնաքեայ , ցած և խոնարհ  
են առաստաղքն ,  
Մի և կամ երկու լուսանցու ունին միայն ի յարեգդէմ ,  
Ցոյց չողիկ կաթեն և լոյս առնեն անձանցն արդ ելական :  
Խոկ յտակը են անպանցամ ըրկ փըսիաթ արկեալ և եթ .  
Չարժամանամ , ի՞ր ի խոնաւ դետնայն մարմինք ոչ խօթանան

Այլ միջտ առողջ մընան և միր թէ և լինին հարիւրամեայ :  
Սակայն ոչ ընդ այս յաւէա՝ այլ ընդ նոցին վարս հիանամ ,  
Որ այնշախ տաժանութեանց տանին ողջով ժուժ կալսաէր ,  
Մարմնով մեկնահանդերձ կըռուին սաստիկ ցըրտոյն ընդ դէմ ,  
Բազմօրեայ պահօք յազթեն անժայժ մարմնոցն ախորժակաց ,  
Եւ արթաւն հրակովութեամբ աչաց քրնացն ծանրացուցիչ .  
Են ոմանք որ երկնաւոր վարդապետին բերեն լցուիլաւ ,  
Անձանձուցի անձանձու նիրհեն փափուկ ի յանկողնուոջ ,  
Նոյնք արթունք և կըռարթունք ի սուրբ աղօթըս կանխելով  
Պաշանէն լցէլիք անդադար գուարինոց երկնից նրանենըրլու :  
Այլ յորժամ ձայն գանդ ակին կոչէ զոգիսըն աըքնասէր ,  
Եւ զնոտին որ դուք թէ նոր զաշըս արւեալ են քնոյ անօսր ,  
Որպէ՞ս արտղ և նորին զքուն թօթափեն յարտեանաց ,  
Ելանեն լուրջ և զլւարթ փայթ ժողովին յԵկեղեցին :

Անդ ըսկիզըն առնուն հընչել զիտւթեան քընար  
ապմանէրգուն ,  
Ոմանք լուռ կացեալ նոցա նըսկիւն ունկն մըտադիւր .  
Ամք յոտից վերաց անշարժ նոդ երկիր հային միջտ ակընկոր  
Քաղցր ի ձայն երգոյն զմայլեալք հրեշտակային  
սուրբ օրհնութեանց .  
Կէսք ըստէպ ծունըր կըրկնեալ և մածուցեալ  
զգ ետնով վերեսս ,  
ի հանդէս ժութեամութեան ջերմ արտասուօք հայցեն ըզշնորհ  
Եւ ըզձեռս որ չէ լցուցեալ արեամբ մեղաց այսարհիս այս ,  
Տարածեալ միջտ պաղատին վասն աշխարհի խաղաղութեան :  
Խոկ յորժամ աւարտեն վերիար պաշտօն ձաշոյ ժամենք ,  
Ելեալ տանին աղօթից երթան յառաջ ի ճաշտառն .  
Ոմն անդէն ի յամիրին ելեալ կարդայ զվարըս Հարանց ,  
Լուռ մընջիկ այլքն ի սեղան ընդ ձաշակեն ի միտ առնուն

Զի՞նչ է սակայն զոր ճաշեն , այսըլ տեսնէք զօրէնս պահոց  
Լոկ հացիկ ընդ բանջարոյ , զոր համեմեն աղին համով ,  
կամ ապուր ընդեղին ծերոցն ի պէտու եփեալ ջերմիկ :  
Աստ ո՞չ դռն խոհակեր և ամճաքեր կամ ծաղարար ,  
Ոչ գառինք խորովեալ կամ համադամ պէսսպէս խորտիլք .  
Ոչ գինի և կամ այլ քաղցր ինչ ըմպելք օշարակաց ,  
Քանզի աղատ են սեղանք նոցին փափուկ յայտ վայելից :  
Յանպաճոյն սեղանին ելեալ սակա զուարթ անտըրտունջ  
Գոհանան զՊարգևողին , դառնայ մին մի յիւր մենանոց ,  
Վերծանեն այնուհետեւ անյափ ոդւով զհոգեմատեանու ,  
Որ քաղցեալ ոդւոց նոցին է ճաջ քաղցրիկ հոդեսպարար :

Սիրեմ ես , բայտահամբեր ճըդնաւորին վախճանելց  
Զեղ , մանկութք , զհանդէս վարուցն և ճըդնութեանց  
երգել ասաէն :

Որ ըզվարս խոստովանող աշակերտին բերէր ճըդգրիտ , 63  
Զողջ գիշեր իբրու գկաննեղ նա կայր անշէջ արթուն աչօք  
Աղօթիւք անհատական ընդ Աստուծոյ խօսեալ ի սիրա :  
Բացօթեայ ճըդնէր յաւէտ ի մէջ կըզզւոյն ուր և կամէր ,  
Անձաշակ անկերակուր պահէր անդէն զեօթնեակ աւուրս :

Արդար , այլ արտասուէր իբրև ըզյոյժ մեղուցեալ ոք ,  
Եւ կրկնէր շըրթամբք անլուռ զմոնարհ Մեղայն մաքսաւորին ,  
Յամենայն ի շաբաթւոջ խոստովանէր զոչ դորձեցեալսն ,  
Եւ ըզշացն իջեալ յերկնից միշտ ճաշակէր , ոչ յադենայր :  
Ոչ միայն էր ընչափեաց , այլ և շինդրէր ըզկարեւորսն ,  
Զըրհէր զանձն ի ալիտոյից տայր ընկերին կարօտելոյ .  
Կենդանւոյն առ աշխարհ մեռեալ էր նա բոլորովին ,  
Սոսկացեալ ի յերկրէս և ըզդեցեալ զերկինս հոգւուղի .  
Ծզմարմինն ի խաչ հանեալ անտար վըշտօք ժուժկալութեան  
կարօտեալ կամովին նեղեալ մարմինով և չարչարեալ :

Այսպէս Երանելին իրու զարե ի բոյլ աստեղ  
Փայլեցա ի մէջ Եղբարց պայծառ լուսով ճըդնողական :  
Եղե անհամելոց աղ համեմիչ վարուքըն Խիստ ,  
Եւ խթան խաչակրօնիդ հեղդացելոց ի նոյն հ անդէս :

## संक्षिप्त विवरण

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Ն Ո Ւ Ա Գ Ի Ն

Հրաւիրակն զմանկտին ի վասպուրական աշխարհէն ածէ ի Տարօն՝ հայրենի աշխարհ Մամդունի քաջաց և Թարդմանիչ հարյն մերոց, և անդ նախ տանի ի վանս Գլակայ, ուր համառօտ պատմէ նոյա զնախկին յաղթանակն ի ձեռն սրբոյն Գրիգորի և Տրդատայ և զկործանումն վահեւանեանց և Գիսանեանց, այլովքն հանդերձ: ի Գլակայ վանացն իջուցանէ յԱշտիշատ ի գերեզման մեծին Սահակայ, յորում ողբական բանիւ յառաջ բերէ զանխորհուրդ միաբանութիւն իշխանացն Հայոց, զանկումն թագին Արշակունեան և դրարձումն Հայրապետական գաւաղանին ի տանէն սըլբոյն Գրիգորի, և այլն: Եւ ապա յԱշտիշատայ հանէ ի վանս Առաքելոց, ուր առ գերեզմանօք Թարդմանչաց բազմադիմի դարձուածովք բանից ողբակցի ընդ Մովսիսի Խորենացւոյ զէին և զնոր հանդամանաց Հայոց աշխարհին՝ այլովքն հանդերձ: ՅԱռաքելոց վանից իջուցանէ Հրաւիրակն զմանկտին յափն Եփրատայ, ուր զգեղջկական խնճոյս կազմելով ի պատիւ մանկտոյն՝ համառօտ իմն նկարագրէ զանպաճոյն սեղան շինական կենաց: ի վերջոյ յԵփրատէն ընդ իննակնեան աղբերակունս անցեալ՝ Հրաւիրակն կրկին դարձուցանէ զմանկտին ի Բիւրակնեան լերինս. անդ լուէ ինքն, և խօսի Մայր Հայաստան առ Մանկտին. և յաւարտն՝ Հրաւիրակն դարձուցանէ զդէմս բանին յինքն, և կնքէ ողբով:

Ն Ո Ւ Ա Գ

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ

ՅԱՇԽԱՐՀԵՆ Վասպուրական նաւեալ անցէք ընդ ծով կապոյտ. Օ՞ն առեալ մանկունք, ըզձեղ տանիմ հանել յերկիր Տարօն, Յաշխարհ Մամիկոնեան, աշխարհ քաջաց և զըպութեան, Ուր յարմատոյ մի ձենազին բողբոջ բազում շառաւիղեալ Խառնէր ձենազն լնդ հայտպին և գիւցագունս ծնանէր Տարօն, Վարդանն էր այն, Մուշեղն էր այն, և գու մըրցողն Վարդանն էր այն, Մուշեղն էր այն, և գու մըրցողն Վահան:

Օտար էր արիւն և ճետ, այլ քան բզշայն հաւատարիմ, Հայրենեաց անձնանլուելք և մեծ պաշատանք եկեղեցւոյ, Հեղինակ և զըպութիւնք և թարդմանոլ հանճար գըրիք. Մեորովովն էր այն, Մովսէոն էր այն, Գաւիթ, Մամիրէ և Կորիւն.

Զայս ամէն Տարօն ծընաւ զայեակ եղեւ հայ դըպութեանց: Հո՛վդու որ յարև կուսէն, Վանայ ծովէն ըբչես անոյշ, Շընչեա՛, թող փարատի մէզն և մըշուշ Մըշոյ դաշտին, Եւ պայծառ տեսից զաշխարհն զրո սիրեցի, յօր աբքնեցայ, Ասացի զէն ճրբադ վասեմ, ո՛հ, սիերիմք շիշուցին զայն:

ի Տարօն ուր նախըզձեղ տարայց, մանկունք, ասացէք դուք թէ սիրէք զոր եւ կամիմ, երթիցուք նախ ի Գլակայ վանք. Ուր կանգնէր ի հին դարուց վահեանեան դրօյից տաճար, Ուր Գիսանեան կըսոց պաշտօն բըսնակալէր զերկիրն ողջոյն, Ուր ոչ լցու, և կետարան, և ժողովուրդ նըստէր ի ստուեր: Օրհնեալ միտին Գրիգոր, Տրդատ, որ մին խաչի միւսըն ոըրով

Քանդեցին աւերեցին, մոխիր գարձան կըուոց կայանք .  
Դեք ի խաչէն՝ խաւար՝ լուսէն հալածեցան յեզր աշխարհին,  
Կորեան գիսանեանք, և բարձացաւ Գրիգորին փառք .  
Ուր փոխան հին մեհենաց հիմեաց տաճար Տէրունական,  
Ընդ կրօնին մարդապոհի՝ զանմահ Գառին շինեաց սեղան .  
Ընդ անսուրբ քաւարանին՝ նոր աւազան մըկըրտարան,  
Յոր լուացաւ, մաքրեցաւ մըխտ մըրջոտ Հայ ժողովուրդ .  
Ժողովուրդն եթող զվահագն և զառասպելլս Գիսանեանց,  
Ծանեաւ ըզշայր և զթիսուս յաշխարհ եկեալ վրիկչ մարդկան:  
Որ Տարօնոյ յանապատին մոլորեալ էր և թափառէր,  
Հօն ըզհովիւ ծանեաւ անդէն՝ բառաշելով դնաց ըզլինի,  
Մուտ ի գաւիթ միահօտ կաթողիկէ Նկեղեցւոյն:  
Այսպէս եղաւ վըրիութիւն Տարօնոյ տան և աշխարհին,  
Ընդ Աստուծոյ խաչեալ Որդւոյն խաչեալն Գրիգոր  
օժանդակեալ:

Մըտէք, մանկունք, արդ ի Տաճարն համբոյր և յուխտ  
գերեզմանին,  
Յոր ամփոփին պահին նըխսարք՝ անսալտի ճըդնաւորին  
Զոր պարզ և ետ Գրիգորին Ղեռնդիէ մեծ հայրապետն,  
Այսր երեր հանդոյց ի դիր գոլ պահապան Հայոց երկրին:  
Աստ են ոսկերք այն մեռաց որ մերձեցաւ ի գլուխ հրավառ,  
Որ ըգֆիսուս լրեաց ի ջուր, ինքն իյարիւն մըկըրտեցաւ,  
Զանօրէնըն Հերովդէս կըշտամբելով խիստ անաչառ .  
Ոխութեամբ լրկտի կընոջ լրտեաց լեզուն յանդիմանչին,  
Որոյ զդլուխ պարզ և խընդրէր այն կաքաւող աղջիկ լըսիրչ:  
Աստի՞ միթէ քէն վրիմու առնուլ կամի վանական դասն,  
Որ ըլթողու մուտ առնել կանանց ընդ դուռըն Տաճարին,  
Համբուրել զտապան սրբոյն և կատարել ջերմեռանդ ուխտ  
Զարմանա՛մ. և դուք ընդիս զարմացարուք միամիտ մանկունք.  
Առ ի՞նչ արդեօք անպարտ կանայք վասըն լըկտի  
կնոջ մեղապարտ  
Զեռս ի յարիւն թաթաւեալ և մեղսակից գոլ համարին .  
Միթէ ծառայն Յովհաննէս՝ Գառինն այն հեզ չէ՞ր նըմանող,  
Որ մեղաւոր կնոջըն թողյոր դիւր մերձենալ յոտն և ի գլուխ.

Այլ յաւէտ ևս այն է զարմանք զոր աւանդէ Գլակայ պատմիչն  
Թէ այս կըտակ և պատուէր ի Գրիգորէն մեղ աւանդի .  
Գրիգոր, որ բարձրապատում ճառս յօրինեաց ովֆմուութեամբ :  
Որ վէրծանէր զԱւետարան և գիտէր քաջ զազատ կըրօն :  
Տեսէք, մանկունք, առ տապանաւոդ գի՞նչ են պէս պէս  
այդ նուագարանք,  
Զոր մեր աշուղք անդիր անուս՝ բերեն դընեն լի հաւատով,  
Յանապատի երգող ձայնէն բանաստեղծի չնորհըս խընդրեն,  
Խանդավառ ողկորեալ դաւնան համակ երգիչ սոխակ .  
Բան բըզմէն, խաղ յօրինեն ժողովրդեան այն երդասացք  
Զե կարգացեալ ըզշուերոս ի բնութենէ բանաստեղծեն,  
Բզշնկուոն ի յուս կախեալ երթան զրջին՝ Հայոց աշխարհու  
կանչեն, գովասանեն վենւրատատուր սուրբ կարապետ  
իսկ գուք զի՞նչ խընդրէք, մանկունք, ի չնորհատուր  
գերեզմանէն .  
Խընդրեցէք ըզՄամդ ունի անմահ քաջաց հողին ի ձեզ,  
Խընդրեցէք ըզՄեսորվայ և Մովիսի շընորհն ի ձեզ,  
Խընդրեցէք, մի՛ երկմըտիք, Աստուծ հանէ զարդ ի բարանց:  
Աստ առ յատակ լայնադաւթիս հուպ Մըկրտչին  
ի դամբարան  
Հանդշին ոսկերք անմահ քաջաց և զշազար ամ նընջեն ի քուն,  
Մարդ ունի վեհ դիւցազունք Մըւշեղ. Սըմբատ և Գոյլ վահան  
Որ հանձարեկ և խորագէտ և ռազմագէտ ի մարտ և կոփւ  
Զգոռ Փարսիկ սասանեցոյց և զշայրենին փըրկեաց ի սրոյ:  
Սըմբարի հայրենասէրք և սուրբ կրօնին նախանձաւորք,  
Սիրողք մենաստանաց և վանական հարցըն ձըգնող,  
Այս մեծ ուխտ Գլակայ վանից չնորհիւ նոցին պայծառանայր:  
Այլ գուք, հոգի՞ք հայրենասէրք, ձեզ ո՞չ անդրի  
կանդնեաց Տարօն,  
Բայց խընդրացէք գուք յաւէտ զի ոչ նընջէք ի յաւերակս,  
Այլ ի գաւիթս այս հոյակապ ձեզ հովանի կայ Ամլորդին .  
Շիրիմք ձեր ընդ ջրիմս, ոսկերք նոդ ոսկերս խառնին ի հող,  
Եւ յառնէք ի միասին, ձեզ կարապետ բարբառոյ ձայն:  
Այլ ցե՞րը գուք նընջէք ի քուն, զՏարօն տարան  
ձեր հայրենիք .

Զարթիք հասէք արծուիք՝ առիւծք, առէք զաւարն ի գերողէն  
Դարձուցէք ըզհայրենին, ազատ լիցի Մամգունի տուն  
Ծեր Շուշեղդ մը ի մահուդ ըզհայրենեաց կըասկ տայիր,  
Ա՛հ, յուկերացդ ամիւնացեալ ելցե՞ն այլևս վահան, Սըմբատ,  
Թէ անարի որդիքն անզօր մնացեն այսպէս միշտ անազատ:  
Ելէք, մանկունք, երթարք և արդ ի վիայաբան

Ճգդնող սուրբ հարց,

Ուր հանդչին ի վաստակոց եօթըն հրեշտակք Խոտաճարակք,  
Ար զողջոյն ի կեանո իւրեանց բարձին ըզմաչ չարչարանաց,  
Խոտարուտ կենօք վարեալ ըստ անասնոցըն սարասի.

Թող աշխարհ ծաղր առնէ, նոքա գնացին գլուխն զերկինս,  
Թողըմարմոյն մեռելութիւն, վասն խաչելցն զենան ի զոհ,  
Առաշխարհ խաչեալ մեռեալ, աշխարհ մեռաւ վասըն նոցա:  
Ո՛վ դուք անմահ խաչակիք, ելէք տեսէք

զի՞նչ են մար կեանք,

Որ պարծիք ի մենաստանս գոլ բնակաւոր իրու լրձեղ  
Խաչարձ, աշխարհուրաց, կրօնաւորեալ յանապատի.  
Ո՛հ, յետնեալ եմք յոց յաւաբինի հետոց ձերոց,

Ալօթաւոր և կրօնաւոր, այլ հեղդ ացեալք ի պաշտօնէն.  
Զեղծեալ ի կեանըս մեր համակ, վարեմք ըզկեանս

մեք աշխարհի.

Թէ ժողովուրդ ելցէ այսրէն, զի՞նչ աեսանէ չվմերկամարմի՞նս,  
Զընտօ՞ն և կրօնիդէս և կամ ըզմուն այն չինական.

Այլ ըզմափուկս ըզգեցեալ, որպէս ի տունս թագաւորաց,  
Վասն այն դատի զմեզ աշխարհ ըզկրօնաւորս մեղկացեալ,  
Սուրբ հարց անուամբ կրօնաւորեալ ըստ աշխարհի

կեանըս վարել:

Ո՛վ ժուժկալոց Խոտաճարակք, ելէք տեսէք զի՞նչ ուտեմք մեք.  
Ուտեմք ըզմիս և ըզմատաղ, ըզիսորովուն գաւըն կարմած,

Ուտեմք ըզմաշ ըզմարիսայ իւզն ի վերայ լիճ լրցեալ.  
Ուտեմք ըզկաթըն մաքեաց և ըզմածունըն մերակապ,

Ուտեմք զանհալլն կարագ և ձագուց մեզր ըզհեա նորա.  
Ուտեմք և յափրանամբ նընջեմք ի խուց, խորդամք անհոգ.

Այլ սուրբ նախնեաց,

Ուուսանիմք, ուսուցանեմք զրանն Աստուծոյ առ Ճողովուրդ ս.  
Թողեա՛լ զլւետարան, պաշտեմք սեղան և զուխտաւորս,  
Թողեալ զուխտ կոչման մերոյ լընումք ըզմէտըն մարմնաւորս,  
Ոչ ըզմաչ և ըզմախաղ, ոչ անվըզինձ գօտի կապեալ,  
Ոչ տուպեալ ոչ մարտիբոս վասն աշխարհին Հայոց եղեալ,  
Ոչ լոյս ժողովըրդեան, ոչ աղ երկիր անհամելց,  
Այլ անսփուանք մեր համացն յերկիր կոխեալ ի մարդկանէ,  
Կոչեցաք Տեառըն ծառայք, այլ ոչ կոմացըն կատարողք.  
Ուստի կայ մեզ գան բաղում որպէս վընուէ Յիսուսին բան:  
Ելէք, մանկունք ի Գրակայ, Ելէք երթամք ի յիշտիշատ  
Ուր մենանք դիւցակրօնից բաղումք էին և մեծաչնք,  
Եւ ուր շատ յաշտ ծօնէին նախնիքըն մեր մողեկըրօն.  
Հին անունն այն հընչի ցայսօր քաղաք գոհից Աշտիշատ:  
Պարթևականըն Գրիգոր յետ քանդելց զգիսանեան կուռս,  
Ի բարձանցըն Գրելսկոյ էջ տեսանել և զԱշտիշատ,  
Եւ սըրբեալ զայս յաշտարան ի յարենէ պըղծեալ զոհից,  
Գողդոթայի սուրբ զենարան կանգ նէր աստէն զիսաչին սեղան  
ի նախնէ կախէր ըզգառն, ասէր այս է զոհ փորկութեան:  
Նոր մեր Նոյ, Ախօնին Հայոց սուրբ նահապետ և Հայրապետ,  
Այստի հաջտ աւանէր զԱլսոսուած, ածէր ըզլոյսն ի յԱշտիշատ,  
Ընդ զոհիցն անաստական զոդիս մարդկան ծօնէր ի յաշտ:  
Հին խաւարըն հալածէր, Տարօն ինէր տուն Աստուծոյ,  
Եւ ի վերայ դըմիոց Մըրանց աղեղոն ածէր նըշան ուխտին.  
Գոշէր Աստուծ, Գրիգորէ, քեւընդ Տարօն հաշտեալ եմարդ,  
Արդ վնեա՛ դու զԱշտիշատ նոր ինձ տաճար և սըրբարան,  
Ես հրեշտակ նոր ուխտին գամ ըընակիմ ընդ իմ որդիս:  
Նախնագոյն քան զԱյրարատ աստբարձրացաւ կաթու զիկէն,  
Աշտիշատ թող զիսանեանն և հարսնացաւ Յիսուս փրկչին  
Էջ փեսայն անազտ սիրով և բնակեցաւ յիւր առագ աստ,  
Հոգեոր էր հարսնանիքն և ցընծային մանկունքն ի պար:  
Որ յայնմ օրէ ըակըսեալ Աշտիշատայ եկեղեցին  
Ժառանգութիւն լինէր աղատ սուրբ Գրիգորի  
տան և տոհմին.

Որ հայրապետ լինէր Հայոց և մեծ աղնտես տանն Աստուծոյ,  
Նա հոգայր և խնամ ածէր զոհէարս որդւոց եկեղեցւոյն:

Այլ հարցէ՛ք, մա՞նկունք, զի՞ կայք, թէ ո՞ւր է հինն  
ի իւրաւոր բնակիչ ունէք, ո՞հ, տասըն առւն միայն կայ այսօր,  
Աշտիշատն յաւեր դարձաւ հողաբլուր եղեւ քաղաքն :  
Ո՞ւր և այն կաթուղիկէն, որ հիացումն էր տեսողացն,  
Բա՛րէ, հիմանց գոծագիրն դեռ երեխ խաչախորան :  
Ասեն թէ թիմուր Լէնկին մինչ արշաւանք հասին ի ջայս,  
Երկաթէ աւերիչ ոտք կոխէր ջարդէր և զԱշտիշատ .  
Հրաման տայր վաղվաղակի անհուն գօրաց և բանակին,  
Ըղրարձրագոյն կաթուղիկէն քանդել մինչև ի հիմն.  
Զեռն ի ձեռն տալ ըգքարինս հասուցանել մինչև յԵփրատ,  
Անդ կամուրջ կապել հաստատ, որ անցանեն զօրքն ի վերաբ  
Արշաւել կոսել քանդել զերկիր Մըլոյ առհասարակ .  
Թէ որդով թէ գերութեամբ ըզէն աշխարհն առնել աւար :

Այսպէս վայրագն այն բըսնաւոր որ պատուհան  
էր աշխարհի ,  
Ըղչայատան մեր ողջոյն և զԱշտիշատն անշքացոյց .  
Կաթուղիկէն խնարհեցաւ որպէս տաճարն այն Սաղիմայ  
Մի մատուն միայն մինաց որ ի վերջին աւուրս ժնեալ,  
Գիտէ՞ք արդեօք, ո՞մանկանք, թէ ո՞վն ընդնէ ի մէջ մատրանդ,  
Եւ ո՞նչ գանձ անդ թագուցեալ Հայոց մատաց  
և զըպրութեան ,  
Պարթև Սահանէ ոյն, աւա՛ղ որ աստ հանգչի իսեաւ տապան,  
Մտէրի դաւթէն արդ իներքս ըուրջ վարառէք զգ երեվանաւ  
Համբուրեցէք և թափեցէք զաղի արտօնոր կայլալ կայլակ .  
Զուր, աւատա յորդէք յաշաց թող լըւանայ մըրճոտ ու քար,  
Թող իջանէ հաստանի մինչ ի ցամաքեալ ոսկերը Հօրն :  
Ունկընդիք, զինչ ի խորոց լըսին հառաչք և հեծ մըրմուջք .  
Սահակ մեւեալ է ի վաղուց, խօսին ողբան ոսկերըն ի հոլ,  
Եւ հոդին յերկինս խոռվեալ ո՞հ, ոչ հայի յաշխարհս Հայոց :  
Ո՞վ հայրադ և մատրնու իշխանք Հայոց և նախարարք,  
Որ զիտագաւորն և Հայրապետ և հայրենեաց աղատութիւն  
Տարայք վաճառեցիք յատեան Պարսից յուղ այսպէս ,  
ԶԱրշակունեան և Գրիգ որին բարձիք ըմթակն և գաւաղան .  
Զլոյն ետուք զիսաւարն առիք ըդիրդիչոյն և Յըմբաէլ .

Արդ ո՞ւր էք դուք, ձեր յիշատակ և գերեզմանք  
անիծապարտ ,  
Զի հանեմ թափեմ ցրուեմ զոսկերը ձեր ի գեան Եփրատ,  
Թող երթան և կորընչին մինչև յանդ ունդ Ովլիանեան .  
Դուք հայրենեաց հողոյն վրմին չէք արժանի, ո՞վ ապիրատք ,  
Միշտ տիրատեացը լվասանակովս որպէս ասէ պատմիչ Պաղար:  
Դուք իրը վականնջըս ձեր առ պաղատանս երջանիկ Հօրն,  
Որ աղաչէր ժըտէր լալոր՝ ըրանալ ըզդ ուռուն կորըստեան ,  
Ո՛չ փախել զախտացեալ անձն ընդ դազանին առողջ և չար .  
Դուք կեղծաւո՛ր նախանձաւորք, վասն օրինաց  
գործեցիք լայդ ,  
Ըգմոլորեալ ոչխար հօտին՝ մոլորելոց յատեան հանիք .  
Կայր մուեռանդ փարիսեցիք, դուք սուրբ անմե՞ն է կիք արդէօք,  
Որ ըգգարինս առեալ ի ձեռս քարկոծէիք ըզձեր եղբայրն .  
Անդ չէր Յիսուս սրբտագէտ որ զմեզըս ձեր զբրէր մատամբ:  
Եւ բերէր ձեզ յանդիման զգգաղտնիկեանս ձեր մեղապարտ:  
Այլ հեր ծառայն՝ որ Յիսուսին հոդւով վարէր միշտ մարդ ասէր  
ի պաշտպան մեղուցելոյն խօսէր բանիւ նա համարձակ .  
Խելամբաէր և զայրանայր Պարսից ատեան յասլու կըրթէր:  
Կայր և լուէր անպատասիսն. ճշմարտութիւն յաղթանակէր:  
Դուք տակաւին չամաչեցայք և յամառեալ կացիք ի բանս .  
Մեկչէ սկիառյալը ակակունւոյն թագ, գաւազան, աղատութիւն,  
Մեկ մարզպան Պարսիկ բաւ է ու խուեմբ ծառայ դուկ ու ամայ .  
Բարձէ՛ք ի մէնջ զԱրտաշիր, առուք Ասհակայ փոխան Սուրմակ :

Այլ խելացնոր ուշամուք, միթէ դուք ո՞չ ստըրջացայք ,  
Մինչ անուր Պարսիցն ըզձեր խխտ պարանոցըն ջախջախէր,  
Մինչ վարձկան օտար հովիւք ըզհօտն Հայոց վարատէին ,  
Մինչ յաձախէր հիւանդ ութիւն Հայն ի մահիմ զընէր ցաւոց,  
Դուք անդ էն վաղվաղէցիք առ քաջ հովիւլն հօտասէր ,  
Զինչ խլնդրէիք ապաժամ որդիքը թիւր և ապաշնորհ .  
Ե՞կ, ժըտէիք, հայր արդար, հովուեալ ըզհօտ քո անտերունչ ,  
Վարձկան հովուաց չէ փոյթ ըզմենջ , գայլոց ճարակ  
եղաք բուջք .  
Արրութիւն անպատուեցաւ, դարձար իսպառ մեք նըշաւակ ,  
Զերիս հովիւք փոխեցաք , այլ ո՞վ դըտաւ քեզ համոնման .

Դու լցուես, նոքախաւար, խոստովականիմք այժմիկ, ո՛վ հայր, կոյս տուր կըրկին աչաց մերոց, ասաւ թէ ոչ նընջեմք ի մահ։ Զի՞նչ, մանկոնք, տայր պատասխան տու այս Ողին մեծախորհուրդ,

Որ ի տեսիլն ուսաւ նա քաջ զհանդերձելցին կանխաւ գիտել։ Գնացէք, ասէր, իշխանք Հայոց, Սահակն այլ ևս ձեղ չէ հոմիւ։ Զիս մի՛ ստիպէք մի՛ սղզբէք, թողէք ողբամ մինչ ի վախճան։ Թողէք նրատիմ մոխրոց վերայ լընում զՀայոց տան ասլաշաւ։ Աստուածնախնույնիմն երսիսի լըւաւ լըրան՝ հա՛տ ըղմիւն, ի սերընդոց Պարմեական զՄագք և հովիւ այլ մի՛ տեսնիք։ Տէրն եցոյց իւր ծառային մինչ հոդի իմ հոգայր, տըրտմէք թէ ո՛վ լինէք ինձ յաջորդ, երբ չունէք զաւակ արու։ Գնացէք օ՞ն, գնացէք ի բաց, Աստուած լիցի ձեղառամ ֆնորդ։ Տէր հըզօր հովուէ ըղմեղ թէ արք արդարք բառնին յերկրէ, Առ ի մարդոց չիք վըրկութիւն, հոդեն մօրդիկ և յոյս նոցին։ Լացէք լացէք, ո՛ մանկոնք, զինչ խօսեցաւ

Սուրբն Աստուածոյ

Կոյնալէս ի լրումն եհաս բանն. որբացաք մեք ի քաջ հովուաց Եւ խարերայք ագահէք հովարտք, ո՛հ, տիրեցին մեղբռնարար, Խրամատեցաւ գրիդ որին ցանկ և շերսիսին օրէնք և կարդ։ Յարեան հովիւք կուիւ ընդ միմեանս և կապալաւ կալան ըղլահ։ Վիճակս արթին բաժանեցին Հայոց հօտին ըղմի փարախ, Խրաքանչիւր ա՛ռ զիւր աւար և գեռ կըռուին յափշտակեն։ Տէր քո է հօտն. հըզօր Հովիւ, ա՛ռ դու զաւարդ ի գերոզաց։ Առէք, մանկոնք, ըզվիմն ի բաց, ուր խոր նընջէ հովիւն Սահակլ.

Տեսցուք նորա տըքնող զսուկերս որ մաշեցան ի վաստակոց, Համբոյր տացուք սուրբ նըշմարացն, ո՛վ զի՞նչ անոց։

բուրէ ըզհոտ։

Կախ գագաթան այն օրհնեալ զոր օծ Հոդին իւղով շնորհաց Եւ զըմսոյն պատուական որ հանճարով լի էր զեղուն։ Ճակատուն պայծառափայլ որ խորհըրդով ճառագ այթէք, Յօնիցըն հեզ և խոնարհ որ ակնարկէք, ուղիքը ըզմարդ։ Աչացն արտասուակաթ որ միշտ ելաց ըզհայատան, վեհ դիմացըն վառահել որ դիտողաց պատկառ ածէք։

Բերանոյն, որ չնորհ շընչէք և լողոգին առնորի և տայր, Շըրթանցըն երաժիշտ, որ գաղնակէք ըզշարականն Եւ առ թաղումն Անմահին երգաբանէք զՊարդւատունն. Լեզուին այն հրեղէքն, նոգ որ հիանայր Յոյն և Պարսիկ, Զեմանքաւ ի վերնատուն քան ըզՊետրոս Խօսէք լեզու։ Արտիլիար սըրբութեան աան յորում բնակէք Յիսուս ընդ Հօր։ Արտիլիար սըրբութեան աան յորում բնակէք միշտ իյերկինս, Բազկացն աստուածաղերու, որ տարածէք միշտ իյերկինս, Վասն ապիրատ և ապառում որդւոց իւրոց շնորհըն խնդրէք. Զեռացն այն դաստիարակ մանկաւոյն ի գիր և դըպրութիւն, Մատանցըն հրաշարուեատ, թարգման տառիցն Աստուածաշունչ,

Յոր պարծիմք յաղգըս բուրոր գուլ թագուհի թարգմանութեանց։ Թողէք ինձ, մանկունք, աստէն գանգատ բառնամ հեղինակ Հօրն։

Զայն անհաւան քերականաց, որ գինն լեզուն հարթել ճանին. Ասեն թէ Սահակ մեռաւ, մեռաւ լեզուն և թաղեցաւ, Հարկ է թողուլ զայն ի բաց և կենդանի լեզուաւ վարիլ. Հարկ է թողուլ զայն ի բաց և կենդանի լեզուաւ վարիկին, Հին լեզուն սորուկ լիցի և իշխեցի բիրա աշխարհիկն, Զոր տաշել կոկել ի բան, ասեն, գիտենք, նոր արուեստիւ. Զբառ երկայն կարձենք անյօդ. չեն պիտոյ կապքըն ճայնաւորք, Զհօրեղբայրն և զօրեղեղբայր կարենք հընչել հօրար մօրար։

Զհօրեղբայրն և զօրեղեղբայր կարենք հընչել հօրար մօրար։ Եւ այսպէս համառօտենք ըզպովանդակ Հայոց բարբառ։ Խոկ դու վի՞նչ խօսիս առ այս, Հայիլ դըպրութեան, ոչ զայրանաս,

Երբ որդիք յանդրդունք զհիմըն լեզուին ըրջել ջանան։ Երբ յորդիք յանդրդունք զհիմըն լեզուին, զդաշնունքն աղարտելով, ըզպութիւն, զվայելութիւն, զայն կապարան։ Զոր յոլով լարք կազմեցին և քո հանճար մըշակեաց զայն։ Զոր յոլով լարք կազմեցին և քո հանճար մըշակեաց զայն։ Քո շնորհիւ պայծառացտու եկեղեցին օրհներդութեամբ, Քո շնորհիւ Մովսէս, Յիսուս խօսին ընդ մեզ կտակարանաւ. Քո թող մանկախին զԱսորւոյն և ըզթունին զօտարածայն, Քո թող մանկախին զԱսորւոյն և ըզթունին զօտարածայն, Քո լեզուքըն ծանրախօս՝ արդ խիզախին տրագախօս։ զի՞ք, մանկունք, ըզգլուխըն ձերընդ տռ աշով Սահակայ հօր. Զայրագ բա՛րձ, սուրբ Հայրապետ, օրհնեա՛ զմանկուն։ զի զարդ ասցին։

Եւ մի՛ լիցին ժըպիրհ ձեռօք , փոխել զըրժել ըստ հաճոյից ,  
Այլ սիրել , խօսիլ , գըրել , և բարբառոյդ սլահել զաւանդ :

Թողէք , մանկունք , զԱշխատ զի հանդիցէ Արդարնի հոդ .  
Յերկնից յերկրէ օրհնեալ լիցի անման կացցէ իւր լիշտավակ  
Ելէք անցէք ընդ գետն Եփրատ ելցուք ի լեաւըն Ծովասար ,  
Անդ ի վան Առաքելոց յայն հովասուն վայելչավայր ,  
Ուր ձեռամբըն Գրիդորի կան ամիսիւեալ նըլսարք և ձեռք  
Նախակոչ առաքելոցն , որ ըդՔրիստոս եգիտ յառաջ ,  
Եւ Ղուկասու աւետագրին արքայութեան դըպին այն քաջ :  
Առ հովանեօք սոցա հանդչին խոնչեալ մըշակք

մեր դըպութեան ,

Պատմիչք Հայոց ժառաց , քերթոլ Մովսէս Խորենացին ,  
Կորիւն , Մամրիէ Վերծանող , Դաւիթ Անյաղթ Ներքեանցին ,  
Աշակերտք Սահակայ հօր հուտ են միմեանց ի ծոց հողայն :  
Նա յԱշխատ և սոքին ասոտ խօսին արդեօք զես ըղձայոց .  
Մովսէս ողբայ . Սահակ լսու . Սահակ ողբայ , Մովսէս լսէ ,  
Երկոցունց առհասարակ ողբով կոծով լի են շրիմք :

ՑԱշխատայ գ ամք , Մովսէս , զողոյնքերեմք ի Սահակայ ,  
Նա դեռ ողբայ զտիրագրուժու դու զի՞նչ առնես և իլո՞ւռ կաս .  
Ե՛լ ողբա՛ դՀայոց աշխարհ , կրկնեա՛ զի՞ն ողբա՛ , և ես ըղնոր .  
Որ յայնժամ արքարնջէիր թէ անսիրով որդիք Հայոց ,  
Ոչ տուն ոչ օթանոց պատրաստեցին քեզ արժանի :

Ո՛հ մեռար և սիրեցար , քո վերջի տունն է Ծովասար ,  
Բացօթեայ ընդ քո ընկերս նընջես երկնից ընդ կամարաւ ,  
Արև լրւսին՝ աստեղք համայն շիրմիդ վերայ կախին կանթեզ .  
Լոյս սիրէիր և ի մահուդ՝ լոյսն է քո տուն ասալընջական .  
Եւ ցամաքեալոսկերդ ըզցող ծծեն յամսոց և զուարթանան :  
Դու դիտե՞ս , որդեակ Մովսէս , բարերաստիկ եսքան ըղձայրդ .  
Դու ի չէն վանք բընակիս , Սահակն յանչէն իյԱշխատ ,  
Միայնակ ի մէջ մատրան , լոյսն ի նըսեմ խաւարչըտին .  
Որ լոյս էր տանըն Հայոց , ինքըն չունի զմի կանթեզ լոյս :  
Ա՛հ մոռացաւ Հայրն ի սրբաէ . ո՞վ զայն յիշէ յապաշնորհիցս .  
Ոչ ժամ , ոչ պատարագ , ոչ սալմոսաց քաղցըր մըրմունջք  
Ոչ տօն , ոչ տօնասէր . տուն Սահակայ մընաց անտօն :

Այլ միթէ դու յիշի՞ս , Մովսէս , որ չյիշեցար  
մինչ էիր ողջ .  
Կղերն ըզքէն ըդպրէժ քինուն և ի մահուդ հան , դու դիտե՞ս .  
Գերեզմանիդ չարար պատիւ , քակեաց ըղինիքըն խաչանից ,  
Զոսկերը քո հան ի հողէն , տարաւ թափեաց յԵփրատայ գետ :  
Այս դաղու էր ի մէջ մըթան , և հսն ի լոյս Ղաղար պատմիչն  
Որ հալածեալ իրբե ըզքեղ , դընաց եհաս մինչև յԱմիթ ,  
Յորմէ գըրէր թուղթ առ Վահան և զայս պատմիչը  
դառնակըսկիծ :

Բնդէր այսպէս վատացաւ , թընամանեաց ըզքեղ կըղերն ,  
Զի դու զվարուց կենաց նոցին արկեր զընչեր ողբովդ ի դիր .  
Թերես աստի հալածեալ , թագչէիր դու ցերեսուն ամ ,  
Եւ իրու ճրագ ընդ գըրուանաւ մնացեր այնպէս

լոյսդ ի մըթան .

Կեանք քո լոյս էր և դիտութիւն , վասն այն վանէր  
ըզքեղ խաւարն ,  
Վասն այն խոկ դու ատելի և դըժալընի եղեր նոցա :  
Ցիսու լոյս կոչէ զկըղերն , և աշխարհի գոլ լուսատու ,  
Զարմանամ , զի լոյսն ընդ լոյս մենամարտի և հալածէ :  
Լոյս չեն նոքա տիրապէս , որ ըզընւոյ ունին կոչումնի ,  
Որոց սիրտ հոգին և միտք , ո՞հ վարակեալ է նախանձու :  
Ա՛հ , Մովսէս , դու փայտ գալար՝ զքեղ նախանձուն  
վառեաց կըրակ .

Այլ դու անծախ ես և ողջ , հոգիդ յերկինս և դու ի միտս ,  
Դու բարձր ես անմատչելիզինչ առնենքեզ չորացեալ փայտք ,  
Մի՛ խոռվիր դու թէ գետամոյն եղեն ոսկերքդ եղծանելի ,  
Խոկ քո անուն , վաստուկ , արդիւնք , լի են այսօր  
անմահութեամբ .

Եւ քո ոսկերք յաւանդ պահին ի մայրածոցըն Եփրատայ ,  
Անդ ուռճացիր զալարացիր զբախտին ծուրն է քո գերեզման .  
Կաց անդ . գայ Ցիսու կոչէ ըզքեղ ի յԵփրատայ  
Եւ յասիւծուց բերանոյն զիդնատիոն աստուածագուեաց :

Այլ թողցուք աստ ըզքոյդ ողք , զաշխարհ Հայոց  
ողբարի ընդ քեղ .  
Ա՛ռ այժմիկ ըզէին քընարդ և ալընդեա՛ դու վարս ի հառաջ ,

Զի որպէս ի հնումն և արդ ; Հայոց աշխարհ միշտ ունի ողբ :  
ՅԱՅԻՆ այ ի հայրենիս՝ ի հարսանիս գ այիր ճեղով ,  
Զարդարեալ գ եղով լուսոյ և գ իսութեան բարձեալ ըզդանձ  
Բերել սրփուել ի Հայոց տուն և աղքատիկ մանկուցն ՝նդառաջ  
ի հարսնարան ոսկի տեղալ և մարդարիտ թափել առատ :  
Մինչ այս յուսով հըրծուելով երագէիր դու խընդամիտ ,  
ԱՇ, ո՞ք գ այժ երեր յուղին թէ վերջացաւ հարսանեաց պար  
Չեն պիտոյ այլ ևս, քի' թթով, մի' ոլորեր ըզտաղքդ ի խաղ .  
Մեռան, Սահակ և Մեռուզպ և ի գըլսոյդ բարձաւ պըսակ ,  
Եւ ոչ ևս թագն և դըրօց կան յարգունիս Վաղարշապատ .  
Թագն առաւ և թագակիրն, ո՞հ, մատնեցաւ ի բանտ և մահ ,  
Արշակունեաց ջահ շիջաւ , և Գրիգորի ' տանչն ճըրագ .  
Վըրիսեցաւ ըս յոյս ամէն, և որբացա՛ր, անբա՛խտ Մովսէս ,  
Ա. Ա. ո՞հնչ քեզ մըխիթար , միայն անձկալի

հարցդ գ երեղմա՞նք . . .

Դու զիիթառդ կախէիր յուսդ , որպէս երգիչ թափառական ,  
Մերթիլըսիշատ մերթիլըսիշական գնայիր գայիր իբր անձանօթ ,  
Առ գ երեղմանս էր քո կեանք , միշտ ողբ , կոճ , լաց  
և աշխարհանք :

Զինչ ողբայիր դու անդուլ , վհաղարամեայ թագին կորո՞ւստ .  
Թագն անկաւ , այլ երանիթէ ժողովուրդն մնայր ի կանդուն .  
Զինչ կարծէիր իմաստո՛ւն Հայր , թագըն կարէ  
մալ կաստատուն ,

Երբ իշխանք ինքնահաճ են և ապլստամբք ընդդէմ թագին ,  
Ուզ մի մի զաշխարհ կալեալ բերդս անառիկը շինէին ,  
Ուր կամէր կայր հըպատակ , և որ չկամէր ըզթեկն ածէր .  
Վարանէր թագաւորն , երբ յարտաքուստ գայր արհաւիր ,  
Եւ ի ներքուստ տագնապ և մարտ . իշխան՝ գահին

էր դաւաճան .

Թէ թագակալն մինէր հըզօր քան ըզթերդատն անպարտելին ,  
Ա. Ա. ո՞ի արտար , երբ նենդ աղուէսք վեհ առիւծուն  
դաւ նիւթեցին :

Զասիւծն ի յորս հարին նետիւ . մուշիւն լըւտ  
սարսեաց Մասիս ,  
Զանկաւ առիւծըն միրաւոր . ետուն ապախառեալ բաժակի

Զրաւեցին զայն ի կենաց , որ աշխարհին Հայոց էր կեանք :  
Զինչ ասեմ և զՄիհրդատայ որ Պոնասոէ ընդ Հոռոմ մըրցէր ,  
Որ զագահ Հոռիմայեցին զրսկին ընդ վուլ լըցեալ խեղդէր ,  
Հարուստ գ անձիւք և զօրութեամբ հանդիսանայր  
միշտ յաղթական .

Նկուն դարձաւ , յոյսըն հատաւ , ասաց , ածէքինձ մահաղեղ  
Ես ըմպեմ և մեռանիմ , զի Փառնակէս որդիս դըրժեաց :  
Այս ընդէ՞ր այսպէս մինէր , դու զայդ զիտես  
քա՛ջըդ Մովսէս ,

Որ ուսար ի Յունաստան , վերծանէիր Սողոնի գիրս .  
Երբ գիտութիւն , կարդ և օրէնք , և ճըշմարիտ սէրչայրենեաց  
Զիցեն աղդի և աշխարհի վարիչ , պաշտպան և կառավար ,  
Զի՞ք փըրկութիւն թէ եւ մեռցին կեռնիկաս և մեր Վարդան .  
Զի՞ք զօրութիւն թէ կարդ օրէնք , ոչ Ծորդին ընդ քաջութեան :  
Աղդ ոչ մընայ ի բարձրութեան եթէ չպահէ զարդարութիւն .  
Ի մեղաց խոնարհի ազգ , և բարձրանայ արդարութեամբ :

Ա. Ա. ասո՞ւ գու , Հայրանաչառ , միթէ ազգ մեր մեղա՞ւ ի մեղս  
Որպիսեօք Երուսաղէմ , զրոմէ որդայր Երեմիասն .  
Միթէ բա՞րձ Տէրն և ի մէնջ որպէս յազդէն այն Հըրէից ,  
Զայր հըզօր , զիին զօրտառ , և զիմաստուն խորհըրդական ,  
Ըզհանձարեղ փորձառու ծեր , զիշխան արդար և խնամակալ :  
Մըրդ ընդ հարի մանուկն ընդ ծեր , մըրցի անարդն

ընդ պատուականն .

Ա. Ա. ժայ ընդ ժայ ժողովուրդ , և Հայ ընդ Հայ  
Կայ ի պայքար .

Որ չունի հաց , ասէ ես եմ իշխան Հայոց և դատաւոր ,  
Որ չունի բան , ասէ ես եմ բանիւ խորհուլ և խելսոնիւտ .  
Արդ խարեցայք տիրեն մեղ , խօսին , վիճին , ճամարտակեն ,  
Անխորհուրդք ի բան և գործ , միշտ առ ի ցոյց գործեն զամէն :  
Ճամանակ դառն եկաս մեղ , արդ ոչ իշխան աստուածանէր ,  
Ոչ հովիւ հօտին սիրով , ոչ առաջնորդ ժողովուրդ եան :

Զի՞ս պիտոյ մեղ խորհըրդական որ յարդարէ ի պատերազմ .  
Թագն անկաւ , զէնք և զինուորդ և զօրութիւն Հայոց լըքաւ :  
Թէ Մովսիսին յաջորդէր Յեսու , պարտիչն Ամաղէկայ ,  
Ա. Ա. Տըրդատայ չէր յաջորդ , որ նըւաճէր զդուռըն Շապուհ

բնդ Արքունեաց և Հարսին դու զառագաստ ողբաս կոծով,  
Որ զըրկեցաւ այրիացաւ ի հարազատ յիւր փեսայէն .  
Հովիւն իւր հովուակցաւն խոռվեալ գնացին 'հարսնարանէն,  
Քոյդ Սահակայ և Մեսրովայ յաջորդ ոչ գոյ արժանաւոր  
Այլ մինչխորթք և հօրամշնք բունի կալան սուրբ զառագաստ,  
Ժուժկալէր հարսըն սըդաւոր , անախտ պահէր

զանձն յօտարէն ,

Որ անձկով սպասէր մընայր դառնալ անդրէն իւր փեսային,  
Այլ ոչ ևս դարձաւ նա , ո՛հ , այրիացաւ հարսն անբախտ .  
Ուստի հեծես , կոծիս և լսա դու բիւր ողբով անմըսիթար՝  
Զեկեղեցին , որ խըրթնացաւ ի բարեղարդ վայեչութեանց,  
Բեմըն մընաց առանց բանի չիք վարդապետ քարով կենաց .  
Լան այո՛ ըստ քում բանի որ որոտան բեմըն թընդայ ,  
Զիմանան թէ զի՞նչ խօսին , ճառաբանեն ըստ համոյից ,  
Զմարդարիտն Աւետարան հեղձնուն ծածկեն

շատիստութեամբ ,

Բա՛ւ է թէ համբաւ համեն և ժողովուրդ գովեստ կարդայ :  
Ա՛յ ժողովուրդ ժողովուրդ , հեղ Մովսիսին զքարով լըւա՞ր ,  
Թէ թողեր զայն ունկըն ետուր որոտաձայն վարդապետաց  
Որ ըզփաւս մարդկան խընդրեն , ոչ զՅիսուսին հեղաբանող ,  
Որ ոչ վիճէր , աղաղակէր կամ արտաքոյ հանէր բարբառ :  
Ողբա՛ Մովսէս , մի՛ լըւեր , դեռ ժողովուրդն անընտրող է ,  
Թէ ի հնումն զեկեղոչ ծանեաւ , չդիտեմ այժմիկ զեկեղ ձանաշէ :  
Պահ մի հրաշխէք ե՛լ ի չիրմէդ , արի՛ և կա՛ց զերդ Ղաղարոս ,  
Տեսցուք թէ Հայոց աշխարհ քեղ պատրաստէ տուն օթանոց  
կամ Հայրապետ և Պատրիարք ընտրէ՞ ըզքեղ տունըն Հայոց .  
Ո՛չ , Մո՛վսէս , հանգի՛ր ի գիւրդ , մի՛ վրրդովեր

զհանգ ըստարանդ ,

Ո՞լ լինի քեղ երաշխաւոր թէ միւսանդամ դու չհալածիս .  
Մեք փարելցոց չեմք արժանի , հա՛յր հոգետես և մարդարէ ,  
Վարձկան հովիւք թող տիրեն և կատարի խօսք քո և բան ,  
Ուք կերին զանտերունչ հօտ և ըզմնացորդ թողին ի դաշտ ,  
Վարձկան ին փոյթ չէր նոցա թէ զամենայն դիշատէր դայլ :

իսկ դու խիստ խօսիս , Մո՛վսէս , ասես՝ հովիւքն իսկ գայլ էին .  
Եւ ո՞կացոյց զոյլըս հովիւ , արծա՞թ՝ կաշա՞՞ս որպէ՞ս գիտես .

Ո՛չ ես դարձեալ ըզնոյն կրկնեմ թէ անընտրող ժողովուրդն է .  
Ժողովուրդ ընդ փայլ հոյի , զպալատական խընդրէ հովիւ ,  
Որ ըզդ ենուն պերճ և փափուկ , զերթ սիրամարդ

շըրջին ի պարծ :

Թէ խօսիս և մեղաղրես , քեզ պատասխան տան պատրուակի ,  
Թէ նոր աշխարհ զայս պահանջէ , քաղաքային եմք առաքեալ .  
Մեք ոչ եմք գալիլեացի ձըկնորսք անշուք և շինական ,  
Այլ ծընունդ եմք նոր դարու աղատարեր և լուսաւոր :

Ուրա՞ Մովսէս , դու միապէս թէ ըզկըզերն և ժողովուրդ ,  
Մին անընտրող , միւսն անձնընտիր . չիք այն զոր Տէրն  
ընծայէ մեզ .

Արդ երկոքին կան ի պայքար , և չորաչար դատեն զիրեարս ,  
Կերաքանչիւր թողու զիւր պարտոս , և զիրաւունս բերէ յառաջ .  
Այլ թէ կըզերն ժողովուրդ դատեն լընդաշս , և չեն արդար  
իսկ դու ո՞րպէս գատիս , Մո՛վսէս , որ ճանաչես  
զչայոց աշխարհ ,

Ճառն և հովիւն ի միասին մի քան ըզմի չե՞ն մեղապարտ ,  
Որ ըզմեղանս բառնամք միմեանց և անբասիր լինել ջանամք :  
Թէ կըզերն , որդի մարդոյ վայրենածին չէ և հրեշտակ ,  
Ո՞վ է կըզերն , որդի մարդոյ վայրենածին չէ և հրեշտակ ,  
ի նոյն սեռէ մարդ կութեան , ծնեալ նա մարդ զգ ածեալ կրիւք  
ի նոյն ծառոյ և յարմատոյն պըտուղ է նա բարի թէ չար :  
Եւ զի՞ ասլա , ժողովուրդ , զրարին թողուս ընտրես ըզչարն ,  
Ընծայես զայն Եկեղեցւոյն տնտես կարդես տանն Աստուծոյ .

Ո՞հ , ոչ ուզիդ բաժանես ըստ կայենի պատարագին :  
Զաղաղունն և ըզկըտիսն Պարգեոզին հանես բաժին :  
Թէ հաւատաս , ժողովուրդ , կըզերն ալ է քեղ համեմիչ ,  
կամ թէ լըսէ , բըժիշկ ոգւոց , ուզզիչ կենաց և առաջնորդ ,  
Դու զայն ընտրեա որ զայսոսիկ յանձին բերէ չնորհըս և ձիրա :  
իսկ թէ ընդ այս վարանիս , ճրագով խնդրես զարժանաւորն ,  
Յայտ է թէ ծառդ ծաղկաթափի է , այլ ոչ բերէ

զնախնի պըտուղս .

Զի՞ այլ ևս տրտունջ բառնաս , ճաշակեա՛ դու , քոյ է պըտուղն ,  
Մինչեւ անդէն ծնանի ամուլդ , բարդ աւաճի ծառըդ հրաշխէ :  
Մինչեւ ուզզին կեանքըդ թիւր , յուզզութենէն  
ծնանին ուզիդք :

Քաջի միտ առ , ժողովուրդ , կորուստ և զիւտ առ ի քէն էն  
Դու մայր ես , ծընունդ քո են գառինք և գայլք ի միասին ,  
Դու ծընար Սահակ , Մեսրովստ , և դու բերեր

ժանտն այն Սուրբակ :

Խելթէ ասես Աստուած հոգայ , Աստուած հանէ հովիւ մըշակ  
Զի՞նչ առնէ մարդ մեղաւոր , թէ յարդանդէն ոչ սըրբէ Տէրն ,  
Նա կոչեաց ի վիրապէն և բորերէն՝ զԳրիգոր , Մովսէս :  
Այլ Գիտե՞ս , քանի՞ց Աստուած համեալ ընդ մեզ

ետ քաջ հովիւ ,

Կամ իշխանք մեր անխորհուրդ , կամ օտարին ձեռք դաւադիր  
Զընտիրսն ի բաց մերժէին , ո՛հ , զանարժանս ածէին ՚դահ :  
Զըսց փոխէիր ընդ խաւարն , ընդ ադամանդ :

զանարդ թրուշանս .

Դու ի հնումն այսպէս վարեալ , այսպէս վարիս մինչև ցայսօր :  
Դարձի՞ր , դարձի՞ր , ժողովուրդ , յայդ անուղիղ ճանապարհէն ,  
Շանի՞ր զծառայսն Աստուածոյ , մի՛ հեստերդու մի՛ քարիոծեր ,  
Այլ պաղատի՞ր , մատիրյաղերս , որ տայգեկ Տէրընտիր հովիւս :

զուշակեա՛ դու , տեսո՛ղէ Մովսէս , յառնե՞ն այլ ևս

հովիւք յերկրէ ,

Եւ մըշակք ժիրք և արիք ելցե՞ն հընձել և ժողովել .  
Ո՛հ , ի չգոյէ մըշակաց , հունձք մեր ողջոյն թօթափեցան .  
Աղաշեա՛ դու , Հոգի՛ արդար , ընդ քո սուրբ Հարցն

Աստուածամերձ ,

Սիջնորդ լերուք , հաշտի Աստուած և տայ հովիւ հօտին Հայոց :  
Աղաշեցք այլսս , Մո՛վսէս , զի ընդ հովիւս ելցեն իշխանք ,  
Որ մին զնողին ուղիէ ի կեանս միւսն աշխարհին վարէ լըկիարդ ,  
Երկրումք օժանդակեալ նոր փայլւցի տուն Հայկալանց .  
Աջն ընդ Խաչին միացեալ , և ժողովուրդ լիցի ազատ :

Աստուած հըզօր , քեզ չի հընար հանել անդ րէն :

զԳրիգոր , Տըրդատ :

Թողուք արդ զհամայնից ողբ , զբոյդ բնադաւառ

ողբամբ , Մո՛վսէս ,

զՊՃարօն քո հայրենիս , զթորնոյ աւան տեղի ծնընդեանդ ,

Ուր մայրըն քո՞ քերթող ծընաւ , ուր եղար դու

ի խանձարուրս .

Արդեօք անտի՞ ըսկըսար , յօրօրանէն ողբալ ըդէայս :  
Օրհնեալ լիցին հայր քո և մայր , զի՞ ոչ պատմես ըղնոցանէ  
թէ ո՞յը էին և զի՞նչ անուանք բարի ծառոցն այն Խորնոյ գեղջ  
Որ ըղծաղիկդ և բարեպտուղդ ետուն Հայոց ձօն և պարզեւ :  
թէ հին որդիկը մերժեցին զայն ապախտ գըտան առ քո ըղնորհս  
Մեք չեմք ապախտ . հանդի՛ր , ո՛վ Հայր , տամբ քեզ հանդիսաւ  
՚սիրտ և հոգի :

Այլ դու յայդ բարձր Ծովասարէն զգլուխդ ի հողէն  
արդ բա՛րձ և տե՛ս ,

Ուր է այժմ այն Մամկունի քո աշխարհին փառաց արևն ,  
Որ ընդ լուսին և ընդ աստեղս լուսաւորէր զՏարօնոյ տուն ,  
Ուր այն երկիր բարդաւաճ , որ բաղմարիւր բնակիչ ունիր :  
Զայն տայր Մուշեղ ծեր Մշշեցին և շոյտ անդէն կազմէր բանակ ,  
Ահարեկիր թընամին , թէ ասէին Մուշեղն եհաս .  
Առիւծէր նաւերը մըռընչէր Խոսրով կողայր ի Պարսից գահն .  
Ասէր . թողէք ես կամի քուն , դուք մի՛ հանէք զառիւծն ի քնոյ ,  
Եւ մի՛ զկորիւն իմ Գայլ Վահան զարթուցանէք յորջոյն իւրոյ ,  
թէ մոնչեմ , նա յարձակի , պատառ պատառ առնէ զՊարսիկն :  
Որոյ կեանք ողջ պատերազմ էր կըրօնի և Հայրենեաց .  
Չութ սուն ուազմ , ասէր , մղեցի , ինքնին կացի ես զօրավար ,  
Սուրբ կարապետ կոչեցի յօդն և հաւատով մըտի ի մարտ ,  
Միշտ յաղթեցի , և պարտեցաւ Խաչի զրօշէն

Պարսիկն այն վաս ,  
Ամաշեաց նըկուն դարձաւ քօն որ ընդ իս եղջիւր ածէր :  
Ուր Մուշեղի թունիկ Սըմիւտ և Ամրատայ կորիւն վահան ,  
Եւ վահանայ կորիւն Տիրան , սերենալք ողջոյն ի քաջ Պարսիկն .  
Որք յառիւծոյ առիւծ ծընան , յարձակեցան առիւծօրէն ,  
Թաթիւք հարեալ վիշտեցին վեղջերաւոր քօշը Պարսիկ ,  
ԶՄիհրան վախթանդ Տիրան և վարդուհի վերջին քօշն .  
Այս ամէն դու զօրավարք չախչականդ ի Մուշեղեանց ,  
Տարօն տանէր յաղթանակ , կրօն , խաչ , հաւատ

ոլայծառանսց :

Ցիշեմ , Մո՛վսէս , ո՛չ մոռանամ զՄուշեղն այն միւս

զԳրիգորով ,

Զոր ի խանձոյս դաւաճանէր վատ քըսութեամբ Սահառունոյն

Վարազդատ սէդ թագաւոր, մանուկ տխմար և բանսերթուկ:  
Աւա՛ղ յոդւոց հանէր Մուշեղն, յայն վատ մահուան

հեծէր ողորմ,

Ընդէ՞ր, ասէր, մահնիմ չեհասի դաշտի նժոյդն իմայն ձերմակ  
Մինչ վասըն քո, Հայոց աշխարհ, սըրբէի գքիրտն իմ որլաքաւ  
Եւ զանարդան Պապիդ գլխոյն թագ դընէի ես, վա՛րազդատ,  
Ներսէսն ի Նսլատ, ես ի Զիրաւ խորտակէի զՊարսից բանակ.  
Ո՛հ, այս եղկ իմհատուցումն այնչափ ճըդ անց և քաջութեանց:  
Մըսիթարեա՛ց, անմահդ Մուշեղ, ել ի տոհմէդ.

հզօր Մանուէլ,

Որ հատոյց ըղհատուցումն վարազդատին այն անիրաւ,  
Զօրացաւ յոյժ, դժագ նըւաճեաց, կըուփեաց ըզդ լրւին  
արիւնապարտ:

Մի՛ և դու ի տապանի, յերկինս բառնար զարեանդ բողոք.  
Իմ է ասէ վոէժինդ բութիւն, Աստուած արդար հանէ զվըրէժ:  
Շատ են, Մո՛վսէս, Մամբունի տան քաջացըն ճետք,  
զո՞րն ես յիշեր.

Զվարդան թողում, ոյր զյազթանակ ես յերդ արկի  
ի յԱւարայր,

Զվահան թողում զանյազթ բաղուկն որ սասանեաց  
ըզՍասանեանս.

Հապա չյիշէ՞մ, և մառանա՞մդլասակն այն վեհ և մեծանուն,  
Հասակ կարծիկ՝ հոդին հըսկայ, հըզօր ի բան և ի բաղուկ,  
Զոր վատ Պարսիկն՝ Աղուէս կոչէր, և նա ցասնոյր

տայր պատուախան,

Թէ մինչ յերկուց լերանց վերայ զոտըն դնէի ես ի կըշիռ,  
Գահըն Յունաց և ձեր Պարսից առ պատուանդան  
իմ կայր խոնարհ,

Թէ կոխէի՝ նըկուն լինէր, թէ Պարսից տուն թէ Ցունաստան.  
Յայնժամ առիւծ էի արքայ, և այժմ աղուէ՞ս

դարձայ, Շա՛պուհ:

Այէ արդ ո՞ւր մեր քաջահաւատ իշխանք փառաց  
և զօրութեան,

Այս ամէն քաջաց որդիք այսպէս մեռան արխապանն  
Մըշեցի մարք ծնան ըզնոսին և զո՞հ ետուն վասն Հայրենեաց,

Եւ արդ չի՞ք յայնց ի միջի, ոչ հարք ոչ մարք առաքինիք,  
Որ դարձեալ ըստառառաջնոյն ծնանին մանուկ զիւցաղն և քաջ:  
Մի՞ք որդիք եւմք այն քաջաց, այլ յոյժ յետնեալ և հեղդ ացեալ,  
Որ սովորոյթ ունիմք միայն պարծիլ զնախնեօք մեր քաջագործ  
կամ իբրու զլական մանուկ նըստիլ ողբալ զաղէտըս մեր,  
Արիական հոդին ի մեզ, ա՛հ, մեռեալ է, և չէ ի կեանս.  
Ո՞վ զոդի նախնի քաջաց նոր դարձուացէ յորդիս յետին:  
Աստուած մեծ, որ ի քարանց գիտես հանել  
դու մարդ. հրաշիւք,

Հրաման տուր Մըշոյ քարանց, թող նոր յառնեն  
Մուշեղք, Վահանք,

Հրաման տուր Աշտիշատայ, թող ի չիրսէն ելցէ Սահակ,  
Հրաման տուր Հացիկ զիւղին, թող բուսանի  
Մեսրովայ հասկն,

Հրաման տուր գերեզմանիս թող նոր յառնէ Մովսէս պատմիչ  
թող ելցէ և արդ զՀայոց աշխարհին կեանս առցէ ի գիր:

Հերէ՞ք այսշափի առ խաչաքար սուրբ Թարդմանչաց  
նըստեալ ողբալք.

Բուրվառ առէք, Հայոց մանկունք, և խունկ ածէք անուշահոտ,  
Երգեցիք միաձայն դուք զԱնըսկիզրն ըզ՛արական,

Օրհնելք աստ ըզդ երեզման վարժապետաց մեր բազմերախտ.  
Օրհնեալ լիցին հոդիքն յերկինս, օրհնեալ ոսկերքն ի տապանիս,

Օրհնեալ անուանք և յիշատակք լիցին յաւէժ դարուց ի դարս:  
Եւ դուք ըզմեզ օրհնեցիք զաչս ի հոդէ վեր կարկառեալ,

Օրհնեցիք, նընջող սո՛ւրբ հարք, չնորհ մաղթեցիք  
մանկուսոյն Հայոց :

Համբուրեցիք ըզդ երեզմանս, ափափ հողիկ առէք, մանկունք,  
Առէք, տարէք և պահեցիք յոսկի սափոր ի յիշատակ,

Յիշեցիք զմեծ վարժապետս, յորոց ուսայք ըզդ ըլլութիւն:  
թողէք մանկունք ըզ՛ասարն ։ իջուք այժմիկ  
յավին Եփրատայ,

Առ դրախտին գետովն անմահ ձեզ մի խընճոյս  
տամ և խրախան ։

Հրամակին և ձեր, մանկունք, ո՞հ բաժանման  
հասեալ է ժամ,

Յանկամ, վա՛շ, լի անձկանօք ուտելընդ ձեղ ճաշ Հայրենեաց,  
Սեղան կազմել զեղջկական պարզ և ազատ ի զեղխութեանց,  
ի յիշատակ նախնի դարուց սակաւապէտ նահասկետաց,  
Ոյց կենաց աւանդապահ՝ մշակ հողագործ ժողովուրդն է :  
Գիտէ՞ք, մանկունք, մեր աշխարհի վաստակաւոր ժողովուրդն է :  
Մեր սեղանին զարդ շինութիւն՝ շինականին լի ամբարն է,  
Եւ բաշխող մաստակարար՝ շինականին առատ ձեռքն է,  
Ճաց և կաթ, իւղ և պանիր, պիխար և բուրդ նոցա բերքն է :  
Թէ՛ թագաւոր և թէ իշխան քաղաքացին առհասարակ,  
Շինականին ուտեն ըղիացն, աւա՛ղ ճնշեն ըղինականն .  
Շինականն չէ՛ աշխարհակալ . նա ո՛չ շինէ զբերդաքաջաք,  
Ոչ սուր ունի, ոչ արշաւանք, զայլոց երկիր կոխել դրաւել,  
Նորա զէնքն է խոփ և հարօր, հնձող մանդաղ և գերանդին,  
Նա բնակի յաղատ դաշտի, աղատ է կեանքն ի յաղմըկէ :  
0ն, մանկունք, հոգացէք, պատրաստեցէք

զինչ պէտք են մեղ,

Նըստիմիք խընճոյս ընդ շինականս, բարենըշան է մեղ այսօր:  
Ուսկան առէք, ձուկ որսացէք, տեսէք զի՞շատ են և կայտոխն,  
Ո՞վ ըմբըսնէ զայդոսիկ . ուռկան չունի Մըշց մանկուին :  
Հրացան ունիք, յորս եւէք, հարէք ըզբադ, սադ և կաքու,  
Առէք, բերէք և փետառեցէք, լրւացէք ի ջուր մաքուր յըստակ:  
Դի՞ք ի արուտուկ կորկոտ ածէք, պատրաստեցէք ըղչարիսան,  
Շուրջ կացէք և թընթոցով հարէ՞ք, կոճէ՞ք ուժով և ժիր,  
Մինչև հալին միսն և ոսկերք, և հարելով համեզանայ :  
Գնեցէք և ի հովուէն գառինըս դէք և տարեւոր,  
Զենեցէք և մորթեցէք, ունիք զդանակ, երկչ՛տ մանկունք,  
Աստի, և անսի փայտ կուտեցէք և փորեցէք զհողէ թոնիր,  
Բզդ առինըս կախեցէք համակ ի կրակ՝ խորովեցէք .  
Զեղ փըռոց է մարդագ ետին, կանաչավայր է մեր սեղան,  
Մեղշեն սիմոյ զարդ սեղանոյ, իրնականէն են ծաղկանոցք:  
Գնացէք ի Մուշ և բերէք զդինի զօրեղ սոտին այդեաց,  
Առէք ըզնոր հողէ սափորս, սիրուն բաժակըս բոլորի,  
Զորս ի գաղջին կարմիր հողէն շինէ, կերտէ Մըշց բըրուտն.  
Ծաղկեփունջըս կասեցէք դինեփարչից բոլոր բերան,  
Գի՞ք յաւաղան Եփրատաց, թող զովանան դրախտին ջըրով:

Անձէք զթոնրի լոլ հացն ուժեղ և սըփուեցէք առատ առատ,  
Թող լիանայ աչք մանկուտոյն, որ կարօտ են սպիտակ լոշին.  
Բերէք նաև ըզպանիր, բերէք զմածուն, սեր, մեղր, կարագ,  
Եւ շարեցէք կարդ ըստ կարդի, ամէն մանկան մին մի աման:  
Տեղի տուք գեղջուկ մանկուտոյն, թող դան նըստին  
ընդ ձեղ ի հաց.

Քաղաքացի էք, գիտեմ, վէս մի՛ ինիք և զըզուացու  
Նըր ինիք սեղանակից ընդ շինականս ուտել ըզհաց :  
Եկա՛յք ամէն դաշտի մըշակէք, պահ մի թողէք

զաշխատութիւն,  
Հիւր են մեղ պանդուխտ մանկուին, մեծարեցէ՛ք  
զնոցին սեղան :

Մաճակալք լըծվարք ամէն, փոքրիկ հօտաղք առհասարակ,  
Առէ՞ք ի մէջ զփոքըր մանկախն միաշապիկս և բացսըրունս,  
Անձէք զամէն բազմեցուցէք ձեղ հաւասար եղբայրարար .  
Տըրեխ մի՛ հանէք, նըստիք այնպէս, Մըշց դաշտն է  
մեր ճաշարան :

Հո՛վիւք՝ դուք զի՞նչ պատիւ առնէք այս պատուական  
Հիւրոց մերոց .

Կըթեցէք զկաթըն մաքեաց ի փայտէ կօտըն հովուական,  
Փըրփըրալով առէք, բերէք, մանկուին ուտէ  
զկաթն անխարդախ .

Դուք ևս եկայք նըստարուք, ձեր պարգևն է այս մեր սեղան,  
Ցըցէցէ՞ք զկօպակն յերկիր, և կախեցէք ըղկափանակն,  
Եւ հովուասէր չունք զայլախեղդ՝ յետուտ անձայն  
ընթըրկեսցին :

Մանկունք, յորժամ ուտէք ըզմիսն, զուկերս բաժին  
հանէք այդ շանց :

Միթէ և եթ արժանի են դոքա ոսկրօք միայն շատանալ,  
Որ անքուն հըսկեն պահեն զհօտն ի գայլոց յարձակմանէն:  
Քաղաքացւոյն են այդ զըրկանք, որ զշուն կապէ  
և տայ փըջրանս .

Հովիւն աբդար է յիւր բաժին, քաջ ճանաչէ զարժանին շանց,  
Ի կաթէն զոր ինքն ուտէ, բաժին հանէ նոցին առատ .  
Մեր աշխարհին այս են օրէնք, որ զըրկեսցին հաւատարիմք

Առէ՛ք, հովիւք, փող և սըրինդ, և փլչեցէք զձայն հովուական,  
Ո՛չ դիք մա՞նկունք, և զմայլեցէք քանի՞ անոյշ են եղանակը:  
Ասեն, մանկունք, թէ այս հովիւք որ չըզ իտեն զուսումն և գիր  
Ո՛րպէս կամին կառավարեն ըլչուտն անբան փողցն ձայնիւ,  
Եւմերթ ևս ըղովուական ցուալ, կափանակթողուն, դընան.  
Զարմա՞նք մեծ սոսկ ըստուերաւ գիտեն հըսկել

հօտից իւրեանց:

Ո՛հ, նախանձի՞նք ընդ ձեղ, հովիւք, մեք ևս հովիւ  
եմք մեր հօտին,  
Թո՞լ զըստուերս, և ոչ իսկ մեք կարեմք վարել ըզբանաւորս,  
Նա՞ ո՛չ հովիւքս և ո՛չ հօտ լըսեմք երթէք միմեանց ձայնին:  
Ժամ եհաս մեղ ճաշելց, ակումբն ամէն բոլորեցաւ.

0'ն ածէ՛ք ըղկերակուրս մի ըղմիոյ հետ հասուցէք,  
Մանկան նօթի է սաստիկ, «աշան չոր է» ըստ առածին:  
Նախ բերէք ըզՄըզ թան կանկըսափառն, անուշահամ.  
Հա՞ մա՞նկունք, բրդեցէ՛ք հաց, առէք դիմոցր անտաշ զըդալ,  
Փըչեցէք, ըմպեցէք ջերմ, զախորժ բանայ մեր թըթու թան.  
Թողէք զապուրն, և զհարխայն կերէք քաջ քաջ, իւզն առատէ,  
Յետոյ գառանց ըզփորովուն. վա՛շ թէ քանի՞ կարմրացեալէ:  
Լըցէ՛ք, մա՞նկունք, ըզբաժակուն, լըցէ՛ք և տո՛ւք լի լի բերան,  
Առէ՛ք ըղձիւք, չայո՞ց մանկունք. արրէք համակ

և զուարթացէք.

Ի յիշատակ Մըզ քաջաց նըւիրեցէք վկենաց բաժակս,  
Թէ մեռեալ թէ կենդանի՝ յաւէրժասցին յիշատակօք.  
Ըմպեցէք վասըն կենաց դաշտի մըշակ ժողովրդ եան,  
Ու քըրտամի վաստակեն հաց՝ չինականին հացն է մեր կեսնք.  
Արբէ՛ք Մըզ գեղապետաց՝ և տանուտէր ծերոց կենաց,  
Որոց դուռն բաց է հիւրոց, սեղան սպատրաստ հացն ի վերաց.  
Վասըն կենաց մաճակալին, սերմանողին և հընճողին,  
Սայլորդին՝ և կալվարին, զցորեան յամբար ժողովողին,  
Հացարար տանտիկով՝ և ընտանեացն աշխատաւոր:  
Ըմպեցէ՛ք վասըն կենաց դեղուկ կանանց և կուսանաց,  
Տեսէ՛ք ո՞րպէս սափորք իյուս շար երթան յոշխարակիթս.  
Ըմպեցէ՛ք վասըն կենաց տընտես կընոջ կաթնարարին,  
Ար մակարդ է զկաթն ի մածուն, կարէ զմածուն և հանի զիւղն.

Եւ հօտասէր հովուաց ողջոյն նըւիրեցէք նաև բաժակ,  
Որոց կենացըն հովուական սուրբ նահապետքն են հեղինակ.  
Ըմպեցէ՛ք վասըն բոլոր պլատարերու ժողովրդոց,  
Վարողաց, վաստակողաց, և ցանողաց, և տընկողաց,  
Ուոց կեանք լի օրհնութեամբ՝ կին աւանդ է նախնի մեր հարց.  
Արբէ՛ք այդ մեր սեղանակից գեղուկ մանկանց  
կենաց, մա՞նկունք,

Զի զարգացցին և զօրասցին, նոր նոր Մուշեղ,  
Վահան գարցին.

Քամեցէ՛ք լի մաղթանօք վասըն կենաց Մըզ աշխարհին,  
Վասն ամենայն չայոց կենաց ժողովրդոց աղաստութեան  
ի գիր, ի բան, ի շինութիւն, վասըն վասաց մեր հայրենի:

Ելէ՛ք, մա՞նկունք, և դոհացէ՛ք և օրհնեցէք ըզՊարգևին,  
Յիշեցէ՛ք մի՛ մոռանայք զայս մեր խընճոյս դաշտասեղան:  
Մըտէ՛ք, մա՞նկունք, յիշիրատին ջուր լըւացարուք և լըզացէք,  
Ո՛ գիտէ յիշէ՞ք այլ ևս մինչ առ գետով նըստիք յօտար:  
Արբէ՛ք մի մի սափոր ջուր տարեք ընծայ գաղթականաց,  
Տարբէ՛ք, ասէ՛ք, այս ջուր է աւազանին սուրբ Եփրատայ,  
Սըրսկեցէ՛ք նոյա յերեսս, ա՛հ, թըմրեալ են

թող զուարթանան:

Արդ առէ՛ք լօշ հաց մա՞նկունք, և ըզԲնացորդս խորովածին  
Փաթաթեցէք և դիք ի պարկ, ելէ՛ք յուղի եհաս ժամ:  
Ելէ՛ք, անցցուք ընդ Գըլակաւ, ելցուք ի լեաւան

քարուտ քարքեայ

Թէ ախորդէք՝ պահ մի նըստուք առ իննակնեան  
յուրատ աղբերք,

Վայրիկ մի հանդիստ առէք և ըմպեցէք զայն կենաց ջուր,  
Տո՞ւք անդուստ յետին զողոյն և համաժշտ Մըզ աշխարհին:  
Հապա գնասուք կըրկին անդէն ի նիւրակնեան

լերինս դրախտին,

Ցորմէ մըտեալ ըըրնեցայք յաշխարհ Հայոց և Հայրենեաց,  
Եւ անտի գարձեալ գնացէ՛ք անհայրենի յօտարավայր:  
Աստ ըզկերծին քնար ողջունիս, ա՛հ, ես հարից սըրտաճըմեալ  
Եղից և ձեզ յուղարկաւոր ես Հրաւիրակ Արարատեան:

կացէ՛ք , մա՞նկունք , պահ մի ևս և ճեմեցէք ի բիւրակունս ,  
Քաղեցէ՛ք , փո՞ւնջ կապեցէք յայն բիւրազան

գրախափ ծաղկանց ,  
Տարէ՛ք Հայոց ընտանեաց և սիրելեաց տո՞ւք զայն ընծայ .  
Թող հոտուեն և յիշեն ըզմուացեալ լերինս Հայոց :

Արդ բարեաւ երթա՛յք , մա՞նկունք , ո՞վ ասասցէ  
ըզծէրուղղեայն ,

Ես լրուեմ . Մայր Հայաստան խօսի ընդ ձեզ ողջունելով ,  
Եւ գըրկախառն համբուրիւ տացէ զվերջին օրհնէնք՝ աւանդ :  
Յո՞ւշ , լո՞ւռ կացէք և ո՞ւշ դիք , լուարուք ո՞րդիք ,  
զՄօր հաւաչանս :

Որդեա՛կք իմ մայրասէր , գձեզ որ առ սէր իմ հայրենւոյս ,  
Ողբերգուել հրաւերեալ՝ երեր ի յիս և ճեմեցոյց ,  
Որդ երթայք , այլ քա՛ւթէ զիս դուք մոռասջիք մինչ իսպառ :  
Յո՞ւշ իցի ձեզ Այրարատ և Մայրըն ձեր ամենածին ,  
Պւազանըն Եփրատայ ծնողին արդանդ յորդիս լուսոյ .  
Խոր Վիրապ՝ և սիրեցեալ տուն Գրիդորին լեառն Սեպուհ ,  
Եւ շիրիմք երանեվի Հարցըն տածիչ հոգեորաւն :  
Յո՞ւշ իցի ձեզ և Մասիս ալեոր ծերն , և Արագած ,  
Տենչալի տուն Թորգումայ , յորմէ ելեալ տարագրեցայք .  
Թեկն առ թեկըն շարեցեալ այն ամսագոյն թօնուտ լերինք ,  
Ճոխարոյս հովիտք և ձորք և հովային մարմանդավայրքն ,  
Քաղցրահոս աղբերապկունքն , այն խոխովիւն յորդոր առուաց ,  
Այն սիրուն բազմաբուրեան ծաղկունք , որոց առիք ըլշուտ ,  
Լայնադիր դաշտորայք , կանաչագել մարգագետինք ,  
Բերրի և կորդ արտորայքն , որ ըսպասեն արօրադրաց :  
Յո՞ւշ , նա և իմ աւերակաց տեսիլ և կերպն աշխարելի ,  
Այն հիմանց խախտեալ քարինք և այն նըշխարք մանրակոտոր ,  
Կըճեայ միւնքըն մամուապատ , որ կան թաւալ կիսով ի հող ,  
Այն փըլեալ եկեղեցիք և տաճարաց մնացեալ կամարքն ,  
Այն ամայի վանորայք և մոռացեալ ուխտատեղին :  
Դուք միթէ զայսոսիկ մոռանայցէ՞ք ի յաւիտեան ,  
Կամ խապառ ո՞չ յիշեցէ զքաղցր այն տեղիս բնակասընունդ ,  
Կամ թողուցո՞ւք զիս այրի և զիմ երկիրդ անմարդաձայն :

Ցի՞ս , ո՞վ իմ մանկունք , յիս դարձ առէք յերկրէ օտար :

Էջ Յանցանել սրբոյն թակովայ առ սոյն աղբերաւ՝  
աղջկունք գեղջն նստեալ լրւանային զնորդն , և ոչ պատկառեցան ի սրբոյն , և ծաղր ևս արարին զնա . վասն որոյ անէծ զաղբիւրն և առժամայն ցամաքեցաւ , և զեեւալ հերս աղջկանց սպիտակացոյց . զոր տեսեալ բնակչաց գիւղին՝ ընթացան աղաչանօք զկնի սրբոյն . և նորա գթացեալ՝ կրկին բղխեցոյց զաղբիւրն . իսկ զկերս աղջըկանց եթող այնպէս ի յերկիւղ անպատկառից :

Էջ Անկդ . է անուն միոյ գեղջ ի Հայոց ձոր առ գետով , որոյ յանուն կոչի ի բնակչաց Անկդց գետ . իսկ մեծ առուն Շամիրամայ . է յայնկոյս գետոյն ի հիւսիսակողմն . և այնչափ յորդացն է ջուր սորին՝ մինչեւ բաւական լինի քառասուն ջրաղացաց , որ չինեալ են կարգաւ առ իւրև :

Էջ Զարմանայ արդարեւ ամենայն ոք վասն բազմութեան ձկանցն , որ ի մայիսին խաղան յայս գետ և ի միւն , որ անկանի ի կիւսիսակողմն վանայ առ գիւղիւ Մարմետ . և այնչափ լինի որսորդութիւն ձկանց յերկունքն , և անդուսա խկի ծովին հայելով՝ ետես զկոյսն և զիսուս ի գրկին . և գեղջ գեղեց զԱլֆա՞ն ծով մեղեղին ;

Էջ Զնորեկ ձագս հանուն . ճետ ևս կոչեն ի Հայաստան .

որ ի գիրս արու զաւակ նըշանակէ :

Էջ Զարման ճարտարապետին եկեղեցույն Աղթա-

մարայ՝ յիշատակէ թովմայ  
Արծրունին այսպէս . «Եւ-  
քանդի ճարտարապետ ար-  
ուեստին էր Մանուէլ . . .  
այր լի իմաստութեամբ և զօ-  
րաւոր ի գործս իւր , հրա-  
շակերտէ զեկեղեցին զար-  
մանագործ արուեստիւ . . .» :

Յ2. Մեքբանաստեղծա-  
կան ազատութեամբ և ա-  
ռանց ճշդութեան ճոխա-  
գոյնս նկարագրեցաք զիլ-  
սակործան դրօշուածս Ա.Դ.  
Թամարայ տաճարին , զորմէ  
միայն համառօտս նկարա-  
գրէ թովմայ Արծրունին :

Յ3. Խոստովանող կենդա-  
նի վկայյն նոյն ինքն էր Ար-  
քահամաշակերտ սուրբ Ղե-  
ւոնդ եանց և ընկեր Խորե-  
նայ վախճանելց ի Խուժաս-

տան . որոյ գերեզման կայ  
այժմ ի Հայոց Զոր , և է ուխ-  
տատեղի . որովհետեւ յետ  
տասն ամաց արբանեկու-  
թեանն՝ դարձաւ կրկին նա  
ի Հայաստան ըստ պատմե-  
լց Եղիչի , որ ներբողէ ըգ-  
վարս նորին պքանչելի , պայ-  
ծառացեալ և հռչակեալ  
ընդ ամենայն Հայաստան :

Յ4. Սա ինքն էր Գէորգ  
վարդապետն և խստակրօն  
ճգնաւորն հռչակեալն առ  
հեռաւորս վարուքն անզու-  
գական , որ կրօնաւորեալ  
էր ի Լիմ անապատն և վախ-  
ճանեալ յառաջ քան զիլց  
ամ . թաղեցաւ առ հովա-  
նեաւ սուրբ տաճարին Գէ-  
որդ եայ :

### ՎՐԻՊԱԿԻ

#### ՍԽԱԼ

#### ՈՒՂԻՂ

Էջ .	70	Տող .	12	ի կտուց	ի կտուց
>	74	>	55	Մ°	Ո°
>	78	>	22	Հարեկեան	Նարեկեան
>	98	>	8	առաքելոցն	առաքելոյն

ՄՐՄՈՒՆ ԶՔ ՀԱՅՐԵՆ Ա.ՍԻՐԻ

Ա.Թ ՔԱԶՆ ՎԱՐԴԱՆ ԵԿ ՆԻԶԱԿԱԿԻՑՍ ԻԿՐ  
Ի ՅԻՇԱՏԱԿ ՏՕՆԻ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿԱՑՆ

Հոդի Աստուածավառ Քրիստոսազօր բանակին  
Քաջապահն ծըրավար ,

Նոր Մակարէ , Յուղա , Խրախուսիչ մարտադիր ,  
Յաղթող ի կեանս և ի մահ .

Բնդդէմ պարսկադենին դիմագրաւ շահատակ ,

Ու ի սէր սուրբ կրօնին և Հայրենի ազատութեան ,  
Ո՛վ մեծի սիրոյդ , չխնայեցեր զանձնդ .

Դու մեռար , յարեաւ Հայաստան .

Ո՛վ Մամիկոնեան Վարդան :

Խաչաղէն զինուոր դու , աշտանակեալ ի ծի սպիտակ ,  
Ո՛ւր երթաս այդպէս ըշտապ .

Ես քաջին Վարդանայ համհարդ նիզակակիցն եմ ,  
Երթամ հասանեմ յԱրտազու դաշտ ,

Խեթկիչ եղիները Խոչին խորտակեմ ես անդ  
Սեաւ այծից երամն .

Գնա՞ , դնա՞ , սուր քո առ թշնամիս . . .

Ո՛վ Խոռվառունիդ Խորէն :

Երկնածիր իմաստութեամբ զգ օնացեալ , հոգի՝ սիրավառ ,  
դէմ հրապաշտ Պարսկին իմաստութեամբ մըկը դու մարտ .

Ետուր զքեզ ի զոհ , թողեր այս աշխարհ  
Երկնակն է քո վարձք .

Մեծ իմաստութեամբ էր այս քո տուր և առ  
Ո՛վ իմաստունըդ Հըմայեալ :

Տիրակերտ մայր Ախոնին Այրարատայ վէմ ընտրելագոյն ,  
Հատեալ ի Մասեաց սարէն՝ գլորեցար մինչև ի յԱրտազ ,

Հարեր , կործանեցեր զատրուշանս մոգակրօն դենին .

Բարձրացաւ Խաչին փառք , կոր ի գլուխ եղեւ

Սատան թշնամին ,

Ո՛վ զարմանալի՛դ Տաճատ :

Կոկ այն ո՞վ է որ հեծեալ ի սեաւ նժոյդ իւր օդապարիկ  
Աչկունք իւր հուր ցայտեն , ոչ ձախ հայի և ոչ յաջ ,  
Գնայ ի մահ յօժարասիրու .

Դա գիտէ սուրբ է Հայրենիք , մեռանիլ վասն նորա  
Է սեպուհ պարտիք .

Գնա՛ շուտ , գնա՛ շուտ , սիրեմ զհոգիդ  
Այդ ուխտ սուրբ է .

Տո՛ւր արեդ և կեանքդ՝ զոր ետ քեզ Հայրենիք ,  
Այդպէս մեռանիլ անմահութիւն է ,  
Զոր չգիտեն աշխարհիս անզդամ մարդիկ .  
Ո՞վ Պալունիդ Արտակ :

Քաջրերունեան աշխարհի քաջասերունդ շառաւիդ  
Վեհ քաջամարտիկ ,

Մեռանիմ այդ սոսատիպ հասակիդ ,  
Որ ամբարձեր է զգլուխդ դէպ յերկինս .

Ած զքեզ ուռացոյց , տո՛ւր մի՛ ինայեր այդ հասակ և կեանք  
Վասն Եկեղեցւոյ և Ազգին ,  
Ցանի՛ր այդ պարարտ սերմ , ուռոգեա՛ կարմիր արեամբ ,  
Որ բուսանի շուշան գեղեցիկ ,  
Ո՛ հրաշակերտ Ներսեհ :

Մանուկ հրեշտակատիպ , գեղանի զուարթածաղիկ  
Ի գնունի բուրաստանին .

Աստուած զքեզ տնկեաց , կոյր Յազկերտ Խլեաց .  
Դու դեռ կանաչարե և կենդանի կաս .

Ո՛հ , ի՞նչ մատալ զոհ վասն Հայրենեաց  
Մատեար կամակար .

Սուրբ Գրիգորի հօր նոր Սահակ սիրասնունդ  
Զերթ գառնուկ զենար .  
Ո՛հ , նազելիդ Վահան :

Աիրտ ի սուրբ նախանձ զինավառեալ ի վրէժ  
Վասն հաւատոյ և Հայրենի երկրին ,

Մտեր յԱւարայրի դաշտ , աւար հարեր , սատակեցեր  
Խաւարին Որմզդայ զորդիս ,

Որ կամէր վառել զատրուշան , չիշուցանել սուրբ Գրիգորի  
Լուսափայլ ճրագ ,

Քո արիւն շիջոյց Ատրուշանս , լուսաւորեաց  
Հայաստանին ջահ .

Ո՞վ ցանկալիդ Արսէն :

Անդ յատեան Յազկերտին , աստ յԱրտաղու դաշտին ,  
Իրան , ի պատասխան , ի դէն միշտ յառաջադէմ ,

Բոցավառ սիրահար առ ամրիծ կրօն , առ Յիսուս ,  
Եւ Հայրենեաց աղատութիւն ,

Երկու սիրային հարազատօքդ , խաղաղատեալ զիրեարս  
Ննջեցիք քաղցր ի քուն .

Անոյշ է այդ քուն , թող հանգչին պահ մի  
Քո վաստակեալ բազուկը .

Շիրմիդ մահարձան են , գլխոյդ հովանի ափուն  
Շաւարշանայ ծաղկունք ,

Ո՞վ յառաջադէմ Գարեգին :

Յարքայական տանէն աղատ Ստանիկք ,  
Երկու սիրաթև Արծուկը ,

ՅՈստանայ սարէն սաւառնեալ արագապէս հասիք  
Մինչև յԱւարայր .

Յինչ արդեօք , որսիկ առնել անդ անսուրբ կենդանիս  
Խաւարածնունդ Ջրուանայ որդիս ,

Կարթածև մագլօք ձիւ ձիւ առնելով  
Մեաւ ագռաւուց զերամն .

Քաջ քաջ կոռուցայք , հարիք և հարայք ,  
Հուսկ ուրեմն անկայք .

Ո՛չ , այլ կենդանի էք , և դեռ կանգուն կայք  
Ի սէր Հայկազանց ,

Ո՛ մեծ ասպետք Արծրունիք , Վահան և Սահակ :

Պարծի՛ր , ո՞վ Գրիգորէ , բարձրացի՛ր , ահա քո դառիկք  
Քաջապէս մարտուցեալ ընդ ուրացող դայլս ,

Թաթաւեցան յարեան ճապաղիս .  
Յերկնուստ այսի տե՛ս , աւասիկ թևաբռւսեալք ,

Աղաւներամ թռուցեալ յերկրէ դան առ քեզ .  
Ընդարձակեա՛ զգոդդ , տո՛ւր հանգիստ դոցա ,

Վաստակեալ են քո որդիկք .

Թուեա' դու մի մի , հազար երեսուն և վեց վկայք են ,  
Զորս ընծայէ Երկնից՝ քոյ ծնեալ Եկեղեցին :

Դու Աստուած Գրիգորի , Աստուած Ներսիսի , Ամ Սահակայ  
Աստուած մեր սուրբ Հարց :

Ահա քեզ զոհ բոլորանուէր , քեզ պատարագ համոյական,  
Քեզ այսպիսի Նահատակաց սուրբ արիւն ընծայ .

Ընկա' Տէր , յիշեա' Տէր , գթո' Տէր և այց արա  
Տառապեալ Հայրենեաց սրբոյն Վարդանայ :

1869

### Ո Ղ Բ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԱՌ ՔՄՋՆ ՎԱՐԴԱՆ ԵԿ ՆԻՋԱԿԱԿԻՑՍ ԻԿՐ  
ՅԻՇԱՏԱԿ ՏՕՆԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՆՈՑԻՆ

Ի Տարօն Մամգունի քաջաց աշխարհին  
ՅԱշխատու մայր Եկեղեցւոյ խորանին առաջ ,  
Ո՛Վ է դիւցազն այն սպառազէն  
Որ Սահակայ պապուն խաչքարին հանդէպ  
Պաղատի հոգեհառաչ .

« Ես ասէ թոռնիկն եմ քո կարմիր Վարդան ,  
Գօտէւորեալ Երթամ յԱրտաշատ .  
Երթամ զանձն տալ վասն Եկեղեցւոյ

Վասն Հայրենեաց ազատութեան .  
Ահա ձեռն դնեմ ուխտեմ ի Խաչ և յԱւետարան .

Ո՛Վ սուրբ Հայրապետ , յերինս մօտ ես  
Հոգւով աղերս ած

Առ պետականն Աստուած .  
Եւ տուր ինձ զօրավիդ սատար

Քո օրհնապէն բարձր աջ : »

« Ես խոռվեալ եմ սրտամնաց մեռայ .

Դառնացեալ եմ յոյժ առ Հայոց աշխարհ .

Առ անընտրող և տիրադրուժ նախարարս .  
Որ զթագն Աշշակունի փառաց թողին

Ո՛Վ , ստրկացան ընդ իշխանութեամբ Պարսիկ մարգանաց :

Այլ հաշտ եմ ընդ քեզ , իմ աղատասէր ճետ .  
Զաջն իմ կարկառեալ ի տիրագին տապանէս  
Զքեզ օրհնեմ , ով Հայրենասէր զօրավար ,  
Երկնից զօրութիւն հասցէ քեզ արագ .

Սուր քո հարցէ զթշնամիս չարաչար ,  
Յաղթական բարձրասցիս թէ ի կեանս թէ ի մահ .  
Երթ ողջամբ որդեակ իմ  
Քաջապատկ' Վարդան :

Զինակիրք իմ , ածէք զգէնս , զգեցուցէք զրահ ,  
Բերէք սաղաւարտ , կոչէ զիս Վարդան .  
Ես նորա քաջ նիղակակիցն եմ  
Ո՛Կ , չմեկնիմ ի նմանէ , ոչ ի կեանս , ոչ ի մահ .  
Երթամ ընդ նմա պահել սուրբ կրօն  
Պաշտպանել սուրբ Հաւատք , կանգնել Խաչին փառք .  
Երթամ պատռել զԱւետարան  
Պատռուել Յաղկերտին մահաշունչ հրովարտակ ,  
Որ սպառնայ չիջուցանել Յիսուսի  
Սիրոյն հուր և վառել Որմզդայ կրակ :  
Գնա' գնա' , այդ ուխտ նուիրական է .  
Կրօնք , Հաւատք , Խաչ , Աւետարան  
Քեզ լիցին օդնական  
Ո՛Վ Խորխոռունի՛դ Խորէն :

Երեսքն զլյոս արտափայլն  
Գոգ թէ ի Թափօրէն իջեալ ,  
Երթայ յԱւարայրի Գողդոթայն ,  
Յիսուսին հետեւելով չդնէ միտ Պետրոսին ,  
Խոյս տալ ի Խաչէն , լոին կալ յանապատ .  
Տեսէք որչա՞փ ինքնայօժար  
Ուշա՞փ հրձուանօք հոգեվառեալ  
Վաղէ երթայ ի պատերազմ .  
Աիրելիք , ընտանիք , բարեկամիք  
Զայս ամէն մոռանայ , չնամարին ինչ յաչս .  
Չափեցէք , Երկնիք , զվարձ դորա  
Եւ տուր զարժանին պատկ .  
Պայծառացի՛ր ,

Ո՛Պալունի՛դ Արտակ :

Նոր Զարմայրն է այն, ի Տրովա՞յ երթայ

Թէ ի յԱւարայր,

Հեծեալ ի նժոյդ իւր ճերմակ,

Անպէս մրրկալից որոտայ, անցանէ

Զերթ յամզոց փայլակող կայծակ

Հուր հարեալ մաշէ զանտառ Մատեան գնդին

ի մոխիր դառնայ անմահ կարծեցեալ բանակ.

Այլ ողբամ զքեզ, քաջ շահատակ,

Վատ Պարսկին սուր զքեզ տապաստ արկ

Եւ ոչ Աքեւէսին նիզակ :

Առէք զոգի դորա, լուսաթև հրեշտակը,

Տարէք, կանդնեցէք յԵրկնից վեհ տաճար.

Մեռաւ Յազկերտ, կորեաւ Մատեան գունդ

Այլ քո յիշատակ և հոգիդ անմահ կայ,

Ո' զարմանալի՛դ Տաճատ :

Ելէ՛ք և տեսէ՛ք, սուրբ Գրիդորի որդիք,

Ո՞ւր երթայ, յառաջ մղի անժոյժ

Զիաւորն այն խաչադրօշ.

Այնպէս արբեալ է Խաչելոյն սիրով,

Ոչ երբէք զգայ զօրահաս մահուն.

Դա հանճարեղէ, գիտէ կըռել քաջ

Թէ մեռանիլ վասն հաւատոյ

Կեանք է և անմահութիւն :

Բա՛րէ, այսպէս հաւատաց, չարար երես մահուն,

Զաշխարհ և զանձն ետ, գնեաց զկեանս լաւագոյն,

Ո' իմաստունն Հմայեակ :

Հապա ո՞վ է այն գեղապատշաճ

Հրացոլակ սպայն

Որ յարձակեալ յերկուս ճեղքէ

ԶԱՐԵԱՑ գնդին կուռ ճակատ .

Միւշկան Նիւսալաւուրտ մոնչէ,

Զայն տայ յառաջ ածել փղաց զերամակս

Ուր անդիմադարձ խիզախէ դիւցազնաբար.

Հուսկ ուրեմն անկանի հասակն այն սօսարաձր,

Թէ դժուարէ տամբը և զարմօք, գոնէ միայն սըրտին սիրով՝

Զհամասեռ Հայկեան սերունդս յոր վայրի իցեն՝ թէ սիրես չիք :

Անդ եմ ես Հայրենիս, և զայն անշուշտ ինձ վարկանիմ.

Զէ՛ այն ոք հայրենասէր, որ կայ առ իս, այլ ոչ սիրէ,

Հուաւ կացեալ՝ բայց ոչ հայի յողորմ տեսիլ մերձաւորիս,

Զաշը յինէն ամփոփեալ՝ զիւրե միայն դարձուցանէ :

Հեռացելոյ սիրովին՝ լերինք բարձունք չեն խոչընդակն,

Քաջ կարէ նա և անդուստ ըլդէեռացեալըս նըշմարել,

Եւ զերդ արե՝ ի բացուստ շող արձակել մըթագնելոյս :

Գնասնիք բարեաւ արդ, մանկունք, և զիս այնպէս

գուգք սիրեցէ՛ք :

Այրդ ըզձեռս ձեր այրի մօր համբուրեցէ՛ք որդիքը որդ,

Այսացէ՛ք և դուք նըմա, մմասջի՛ր ողջամբ, ո՛վ մայր անբաղդ:

Ա՛հ, մեկնեալ այժմ ի նմանէ երթայք տըրատում ըզճանապարհ,

Ոմն ի հիւսիս՝ ոմն ի հարաւ՝ ոմն յարեւմուստ ի տար աշխարհս,

Զքաղցր արեւն հայրենեաց և զպարզութիւն թողեալ, աւա՛զ

՝ նդ այլ արեւով ջերմային և խառն օդով երթեալ մնանիք,

Եւ ի ձեր ծածկի աչաց Մասիս և լեառըն վարագայ,

Եւ ոչ ևս այլ զոդ նոցին ծըծէք, որ իմ երդով շնչէր :

Այլ որ ի քէն ելեալ դու սըրախ գնացեր ի Հայրենիդ,

Ո՞նդ ճեմեր, աւա՛զ, տատէն ՚իհւզանդիոն հարեր ըզքնարդ,

Ա՞նդ արտասուեցեր, կաթիւքն իջն յերկիր պանդուխտ,

Անդ լացեր կականալի, ձայնիկըդ ել յարեւմըտից .

Սակայն ո՞ւր ես դու, գիտե՞ս, հէք Ողբերդա՛կ Արարատեան.

Քեզ թուի թէ Հայրենւոյդ յանուշակ ծոց հանդուցանիս,

Զի այդպէս քոյդ հրաւիրեալ մանկանց լինիս յուղարկաւոր.

Զաշսըդ քո բա՛ց, ե՛կ ի միտս, ո՞հ, և դու կաս յօտար աշխարհ:

Վ Ա Խ Ճ Ա Ն

## ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

4. Պատշաճ համարիմ  
դպյաս ծանուցանել նախքա-  
նասիրացդ առ ի ուղիղ որո-  
շել զիբովոխումն դարձուա-  
ծոց բանից յընթացս գրոյս,  
զի ըստորում մեծ մասն եր-  
գոցս՝ երկրորդ գիմօք յար-  
մարեալ են , որպէս թէ իմ  
հրաւիրակիս կացեալ ի հայ-  
րենին անդ մատամբ ցու-  
ցանեմ հրաւիրեալ մանկտ-  
ոյն զտեղիսն , յորս տա-  
նիմ զնոսին :

2. Վայելուտ վինէր եթէ  
ևս ճոխագոյն նուագէի ըդ-  
դրախտավայշըն բիւրակն-  
եան լերանց . սակայն թո-  
ղումք զայդ այլբանաստեղծ-  
ծից մտաց , որ կարող են  
թռչող երևակայութեամբ  
զլայնատարած ասպարէդ  
ծովուն չափել . մեք միայն  
առ ափամբք քերելով ան-  
ցաք :

Յ. Զգեղցկութիւն Ա-  
րարատեան գաւառին, և  
զարդաւանդութիւն հողոցն  
և դրազմապիսի բարեաց լի-  
ութիւն, վայելուչ իմն ըստ  
ամենայնի նկարագրէ Ղա-  
զար Փարագեցին . զոր թէ-  
քեզ ամսորժելի է ընթեռ-  
նուլ, կարես գտանել ի լս-  
կիցըն գրող նորին :

4. Զայս Եղեկիէլ մարդարէն ևս յայտ առնէ բանիւս . « Եւ ի տանէ Թոր»

գոմայ ձիովք և հեծելովք  
և ջորտովք լցին զվաճառս  
քու ։ ։ ։

զ. Գիւղականքն վաս-  
պուրական գաւառին, ո՞ւ-  
բարել անոււանեն զտեղին՝  
ուր ի ցերեկի ի ժամ կթոյն  
առեալ բերէ հովիւն ըլխաւ-  
շինս . և թերեւս աղաւազն  
իցէ այս՝ բառիս պիարախա-  
տեղ», որ նշանակէ զգումն  
և զմակաղաղատեղն, յորում  
փիարախեն ի գիշերի զհօտն:

Ե. Քանդի եղբն անհաւ-  
լատ աղանդաւորք ոմանք  
առ ժամանակօք սրբոյն Յա-  
կորայ ի Միջագետա , որ ու-  
րանային զըրհեղեղն . զորս  
այսու յայտնի և Հշմարիտ  
վկայութեամբ յանդիմա-  
նեաց պանչելագործ Հայ-  
րապետն Ածքնայ :

7. Այս յանկարծ և սառ-  
տիկ շարժ Ակուսոյ գեղջն՝  
եղեւ ի 1840 թուականին .  
յորմէ բատ վկայելոյ ականա-  
տեսիցն չապրեցաւ ոք բաց  
ի հոյուեւ միոջէ :

8. Այս խրատ Սողոմոնին է , որ ասէ ի գիրս առակաց . «իսնամ կալ բանջարոյ ի դաշտի , և հնձեսցես զիստ . . . զի եղիցին քեզ ոչխարք ձորձարելը . զարմանես զդաշտու , զի եղիցին քեզ գառինք : » :

## 9. Վահրամ որդին էր

Գրիգորիանի Պահպատճենոյ ի  
զարմէ Առաքաւրչին ի ժա-  
մանակս Գագկայ վերջնոյ  
արքային Բագրատունեան ,  
որ քաջութեամբ արութեան  
և մանաւանդ պայծառա-  
փայլ աստուածպաշտու-

թեամբ՝ գերազանցեալ գը-  
տաւ քան զյօքունս . և եր-  
կիցս ել ընդդէմ թշնա-  
մեացն ի պաշարման Անի  
քաղաքին՝ սաստիկ հարուա-  
ծով հար զնոսա . և յութ-  
տոնամեայ ծերութեան իւ-  
րում մարտուցեալ ընդդէմ  
Ապուսվարայ Պարսկի՝ նա-  
հատակեցաւ ինքն և որդիին  
իւր . զորոյ զհամօրէն առա-  
քինութեանց վարս զոր դըր-  
ուատէ Մագիստրոս , կա-  
րես գտանել ի պատմու-  
ռեաչ . չառ էր նորուա հա-

թռաս զնոյց յարդուրք ուշ  
տոր, ի կարգի Բագրատու-  
նեան թագաւորացն :

10. Գագիկ Էր վերջին  
թագաւոր ցեղին բագրա-  
տունի հզօր երևեալ ի քա-  
ջառթիւնս . այլ աւա՞լ քան-  
դի չարութեամբն նմանեալ  
վասակայ Ալւնոյ՝ վեստ  
Սարդիս՝ նենդ աւոր դաւա-  
ճանութեամբ մատնեաց  
զայնպիսի տէր ի ձեռս կայ-  
սեր Յունաց . որով առիւծն  
այն հզօր , որ իրրե զվեհն  
Տրդատ սիդայր ի վերայ լե-  
րանց Հայոց , ի մէջ աշխար-  
հին Հռոմոց զամս երեսուն  
փակեալ ի գառապիջ՝ ցա-  
ւագին մանչէր վասն հայ-  
րենի աշխարհին և բարձման  
թագաւորութեան իւրոյ :

ապդաւ Հայ . որոյ ձեռամբ  
իսկ շնուաց Բ Սմբատ ար-  
քայն Բագրատունի գիրա-  
շակերտ կաթուղիկէ Եկե-  
ղեցին Անւոյ . և պատմեն  
ևս զամանէ Եթէ ի վտանգիլ  
շարժմամբ՝ գմբէ թին մեծ  
եկեղեցւոյն Սովիհայ , որ ի  
կոստանդնուպօլիս , սոյն  
Տրդատ անդ գտանելով՝ ե-  
ցոյց գհնարս դիւրաւ նորո-  
գելց զայն :

14. Զայս ջահ բիւրեկիցն ,  
զոր ի Հնդկաց տուեալ Էր  
բերել Սմբատայ տիեզերա-  
կալի , և զարծաթի խաչն ,  
որ մարդաչափ ունէր զմե-  
ծութիւն կանգնեալ ի գը-

44. Զայս ոճիր սոսկալի  
և գազանային վրէժմանդ-  
րութիւն՝ գործեաց Ալիաս-  
լան աշքայն Պարսկց, ըստ  
պատմելց Վարդանայ, յոր-  
ժամ էառ նա զԱնի քա-  
ղաք :

12. Ա Երջին կործանումն  
և ամայանալն Անի քաղա-  
քին՝ չէ յայտ ի պատճա-  
ռացն թէ ե՞րբ արդեօք  
եղեւ . բայց այսմ պատճառ  
Ղազար Զահկեցին զերկրա-  
շարժութիւնն ասէ , լեալ  
յանիծիցն Յովհաննու Եր-  
զընկացւոյն՝ յորմէ երկու-  
ցեալ բնակչացն ելին և ցըր-  
ուեցան ի հեռաւոր աշխար-  
հըս . և միայն ասէ , որ ի Ե-  
հաստան փախեան՝ 40 հա-  
զար տուն էին , թողով  
ուսան .

15. Տրդատ էր հոչաւ  
կեալ ոմն ճարտարապետ  
ազգաւ Հայ . որոյ ձեռամբ  
իսկ շինեաց Բ. Ամբատ ար-  
քայն Բագրատունի զհրա-  
շակերտ Կաթուղիկէ Եկե-  
ղեցին Անուոյ . և պատմեն  
ևս զամանէ Եթէ ի վտանգիւ  
շարժմամբ՝ գմբէթին մեծ  
Եկեղեցւոյն Սոփիայ , որ ի  
կոստանդնուպօլիս , սոյն  
Տրդատ անդ գտանելը՝ Ե-  
ցոց զհնարս դիւրաւ նորո-  
գերոյ զայն :

14. Հայս ջահ բիւրեղին,  
զրր ի Հնդկաց տուեալ էր  
բերել Սմբատայ տիեղերա-  
կալի, և զարծաթի խաչն,  
որ մարդաշափ ունէր զմե-  
ծութիւն կանգնեալ ի գը-

լրւև կաթուղիկէ Եկեղեցւոյն Անւոյ , ընկէց ոմն ի զինուորաց և խորտակեաց . բնդ որ ցաւեաց յյժ և նոյն

Աւագան արքայն  
Պարսից ի տեսանել դայն :

15. Ի ժամանակի յորժամ  
գերեցան Հըկայք ի բարե-  
լօն, էտո Երեմիա մարդա-  
րէն զհուրը ողջակիզաց սե-  
ղանոյն, որ վառ պահիւր  
միշտ. և թաքսոց զայն ի ջըր-  
հոր մի ցամաք. և ի դառ-  
նալ վերստին ի գերութե-  
նէն առաջնորդութեամբ  
Զօրաբարէլ և չինելց ըլ-  
տաճարն՝ ի խնդիր ելեալ  
գտին զայն, բայց ոչ զհուր,  
այլ զծուր թանձր. զոր իբ-  
րև հեղին ի վերայ ողջակի-  
զացն, և ընդ ծագելն ա-  
րեւուն ի վերայ խելոյն բոր-  
բոքեալ այրեցաւ ողջակէդն  
Տեառն զօրութեամբ :

16. Այս յուսադղական  
բանիւք, որ ի դիմաց ման-  
կըսույն՝ ոչ եթէ հրաշագէտ  
և ըղձապատռւմ մինիւ կա-  
միսք, այլ միայն իլի յուսոյն  
և ի ցաւալի բանիցն, որ ի  
դիմաց քաղաքին ստիպեցաք  
գըել զայնս. և առ այս ե-  
րաշխաւորէ մեզ այս մի տրղ  
ի բերանոյ քաղաքին, «Ա-  
րասցէ թող և որպէս Տէրըն  
կամի նախատեսող» :

17. Զայս ծանուցանէ  
Շարականի Մեծահրաշօրհ-  
նութիւնն երկրորդ Մաղմա-  
ռառը ին՝ իռանս առ :

« իսկ ի չորրորդն դասէ  
պաշտպան եղեալ կուսա-

επρέβην,

ի դասուն իւր փութացեալ ուրախութեամբ տօնակցութիւն .

Զոր հարցեալ ի նմանէ տեղեկանայր մարմնով հրեշտակն :

18. Առ այս ակնարկի ի  
շարական երգնկացին յայտ-  
տուն, որ ի լերինքն . «Խոր-  
հուրդ խաչելոյն գերահրաշ-  
տեղոյն Գողդոթայ ծած-  
կապէս ի սմին լերին տեսա-  
նի. զէնն արբայական սպան-  
մանն գործի կենաց արքա-  
յին ի կենաց գործիս նուի-  
ռեա. » և այլն :

19. Մանի կոյս էր ընկեր սրբոց Հռիփսիմեանց որ զատեալ ի նոցունց առանձնացաւ ի լեառն Սեպոհ և քարայրն՝ յորում բնակեցաւ կոյսն, կոչեցաւ Մանեալ այր :

20. Արդարեւ սերենածոյն  
և գերազանց է գովեստ և  
դրուաթիք Պլռուզ Յովհան-  
նէս վարդապետին առ Լու-  
սաւորիչն և ի յորդիս և թո-  
ռունս նորա, յորում ի մէջ  
առեալ հռչակէ զեբառն Ան-  
պուհ. և բազմապիսի հա-  
մեմատութեամբը հաւասար  
ցուցանէ զայն ընդ այլ լե-  
րանց, յորս երևեցան սքան-  
չէլիք Աստուածային այցե-  
ւո թեհան :

21: Զայս ցաւադին տըրբ  
տունջ և բողոքբառնայ Խո-  
րենացին ի պատմելն անդ  
զմահ սրբոյն Տրդատայ՝ այս  
այսի բանիւ . « Ո՞ ոք ի ձեռնչ

թոշակս յաղագս մեր, ո՞վ  
ոք վարդապետացն մաղ-  
թանս, ո՞վ ոք յերթալս մեր,  
բեռնաբարձս, ո՞վ ոք բան  
յօժարեցուցանող կամ յոր-  
դորական, ո՞վ ոք ի գալն  
մերում՝ հանդիսա, ո՞վ ոք  
տուն կամ օթանոց մեղ  
պատրաստեաց : »

22. Հաւարջան է առաջին անունը Արտազ գաւառովն, առ որ հուսէ է Աւարյարի դաշտն ուր եղենակատակութիւն սրբոց Վարդանանց :

25. Քանզի յառաջադրյան  
ցուցաւ տեսլեամբ սրբոյ հօ-  
րըն մերոյ Գրիգորի, եթէ  
ի հօտէ գառանց անտի լի-  
ցին դլարդան և ոչ ծանեան  
զգօրութիւն բանից ասացե-  
լոց, որպէս պատմէ Ղազար  
Փարպեցին :

25. Եւ գուցէ բոլոր ասիական բնակչաց հին և նահապետական լինի այս ընտանեկան սովորութիւնն. զի ցորչափ նորածին մանկիկ յօրօրոցի ննջէ, իներքոյ նորադին զմանրիկի չըրացեալ

24. Նախարարքն Հայոց հոգ, տարածեալ ի վերայ իրեւ արտաքուստ մատու- չող:

տեան Պարսից . և ոռւրբն  
Վարդանևսիքը յազդ մա-  
նէ Հոգւոյն խօսեցաւ ան-  
դանօր . և յետ ի մէջ բե-  
րելոյ զմիամիտ և տիրասէր  
ծառայութիւն իւր՝ յարէ  
զինի . « Բայց արդ յայսմէն-  
տէ այսպէս կամք են , ջա-

27. Այդ եստանք կամ ա-  
րուարձանք քաղաքիս մեծա-  
տարած են յոյժ ի դիւրա-  
վայր դաշտի . յորում ա-  
ռաւել բնակիչք գոն մերազ-  
նէից քան ի քաղաքն : Այն-  
չափ զուարձալի և գեղեցիկ  
են այս այդ եստանք , պլուզ

զատու և անպտուղ ծառովք զարդարեալ, և մանաւանդ յորդագնաց առուօք, որ յամենայն հրապարակս գընան առ ծառովք ուռենեաց. մինչև կարեմ ասել եթէ չնաշխարհիկ են ի մէջ հանուր աշխարհիս :

28. Հին և նոր, ըստ Տաճկաց (էսկի ենի), է անուն յորդառատ աղբեր միոյ, որոյ ակնէ յընդարձակ հրապարակին, որ ուղղակի եւլանէ ի քաղաքէն մինչև ի գիւղն Սղկայ: Եղերք վտակի սորին և այլեայլ աղբերաց՝ զարդարեալ են կանաչեղեղ և մանաւանդ լախուր կամ կարօս անուանեալ բուսովք, զոր տեղացիքն ջրի կարօս կոչեն. և է տարբեր իմիւսերկու տեսակացն ևս, զոր ի կերակուրս արկանեն:

29. Կվլունք կամ կվլումն ասի ձայն ջուրց, որ ի նեղարերան յամանոյ ինչ և կամ յականէ աղբեր ի դուրս հոսի սաստկապէս՝ ձնշելով յօդոյն:

30. Քաղցր և հոգեորին անուշութիւն և աղբեցութիւն ունի ձայն փայտիս այսմիկ կոչնակ անուանեալ. զոր առեալ ի չորրորդ պահու գիւերոյն ժամանարն՝ ելանէ ի հրապարակս և փողոցի փողոց հարեալ ըրջի յորոյ ձայնէն զարթուցեալ գնան յեկեղեցին: Եւ այս սովորութիւն ոչ միայն ի քաղքին է, այլև ի համօրէն

գանորայս և գիւղօրէս Վասուրական գաւառուին. իսկ յայլ տեղիս Հայսատանեայց եթէ գոյ այս սովորութիւն, ոչ գիւտեմ:

31. Ալուչայ. յայս անուն ևս կոչեն Վասպուրականքն վայլորն, որ թուիթէ պարսկական է:

32. Մեղրուկ կամ մեղրիկ տանձն, յայտ է թէ վասն մեղրահամ լինելցն առեալ է զանունս:

Դեղին տանձ. մեծագոյն է սա քան զայլ ամարային տանձն, և կարի քաղցր. զոր մասն մասն արարեալ չորացուցանեն ընդ արևով և զիիրն սահեն ի ձմերանի:

33. Թթու տանձ. յայս մանէ եթէ ուտիցէ ոք յիսուն հատ՝ շատ ոչ ասէ որովայն՝ սակի թթուահամ և ջրալից լինելց. իսկ եթէ Շարային իցէ որկորն՝ դհաղարն միանգ ամայն չասէ շատ:

Տղորդիկ տանձ. փոքր է սա և բոլորչի. և դիւրագիւտ ասացք, որովհետեւ յաճախ գտանի յամենայն այդիս:

34. Ծաղկաբերան խընծոր. քանդի ի հասունանալն ևս զծաղիկն ի բերան պահէ նման վարունիկի:

35. Մալաղի տանձ. հաւանական է թէ այս ազգ տանձից է և այն, զոր Վիրդիլոսի ի Մշակականս՝ բըռնալիր կոչէ, ըստ որում մեծութեամբն լնու զբուռն մարդոյ:

36. Մալաչի տանձ. յարգի է սա քան զայլ ձմեռնային տանձն, զոր գգուուութեամբ առեալ ի ծառոյն և կախուան արարեալ՝ իներքնատունս կամ ի ծերմին սենեակս կախեն յառաստաղաց, որով գիմանայ ի ձըմերան:

37. Նոնենին կամ նարնջամձեանձն, յաղագս նմանելց ձեղցն առեալ վայս անուն. և առաւել ևս տոկուն է սա քան զայլ մետրունային տանձն:

38. Երկարասոկ լինծոր. ի մէջ ամենայն ձմեռնային մրդացն մի միայն սպատուականագոյն համարեալ է սարդորս մի մի քաղեալ ի ծառոյն այլեայլ հնարիւք պահեն, որ դիմանայ զբաղում ժամանակս. և զանուն սորին բնակիցն կլաթ լինծոր կոչեն:

39. Գեղեցիկ յոյժ կերպ տնկագործութեան այգեաւցըս այսոցիկ. քանդի ոչ ի հարթ գետնի տնկեալ են ըստայլ գաւառուց սովորութեան, այլ ի մէջ խորագոյն առուաց. և արմատք որթոց յաջ և յահեակ թեւս բաշլեալ խաչանման՝ հանեալք են ի վերայ բարձրթուցիքն, որ լայնանիստ և ուղղաձիգ շինեալ են առեւրաքանչիւր առուօք, և ուռքըն արձակեալ գան խառնին ընդ միմերանս, և զրոյր թմրով ծածկեալ տարածանին ակօսաձև. վասն այն ողիկոյքն ոչ այնչափ յօւուոցն

40. Աղնի կամ մեղմիկ խոխոջիւն ջուրց, որ խաղան մանուածաւալ առ արմատք ծաղկանց՝ զըղղղղալ կամ զըղղղղումն կոչեն Վասպուրականքն. և թուր թէ իրաւէս սովորութեան կամ սովորուածաւալ իցէ այս, վասնդի նմանագոյն է ձայնիցն հնչման:

41. Բաղում սքանչելի եղանակաւ տաղս յօրինեալ կան ի վերայ լերին Վարդաց. յորոց, աւա՛զ, չունիմ առ իս և ոչ զմի ևս դընել աստանօր ի զուարձութիւն բանասիրաց և ի ցոյց տենչանաց սրտավառ երգչացն:

42. Փառնասոս կոչէր լեաւուն բանաստեղծութեան, յորում կային ինն Մուսայք ոյք համարէին դստերը Ա-

բամազդայ չաստուածոյն . և  
առ ստորոտով լերինն այնմիկ  
կայր աղրիւր մի նուրիրեալ  
Մուռայից , որոյ ջուրքն քեր-  
թողս առնէին զնա որը ըմբէր:

44. Գալիլեայ կոչի այն  
մասն գագաթան լերինս այս-  
միկ՝ որ փոքր ինչ ստորին է  
քան զյոյժ բարձրագոյն մա-  
սըն Աստղաբերդ կոչեցեալ  
ի բնակչացն . և անդ իսկ  
թագուցաւ ի չոխիսիմեայ  
մասն կենաց փայտին , որով  
առ զանուն բուն Գալիլեա-  
յին , որ յԵրուսաղէմ :

45. Ի խոնարհեալ եկե-  
ղեցւոյն փոքր մի հեռի է Յոս-  
դիկ ճգնաւորին այր , գետ-  
նափոր և անձուկ յոյժ , որ  
կայ մինչև ցայսօր :

46. Էր սա Ճանուշ օդլու-  
չալել աղջ՝ մի ի բանագունի-  
ցըն վանայ եղելոց յայնմժա-  
մանակի , որ յանդ գնեցաւ  
քակել զգ մրէթ ամայացեալ  
եկեղեցւոյն առ ի պէտ բա-  
զանեացի բուռմ շինութեան .  
և յորժամ վաղ առ զաւ-  
տիմ ծակոտեալ մարմնով  
զզջացաւ ակամայ շինել զայն  
միւսանդամ :

47. Թէպէտ ըստ պատ-  
մելց Յայսմաւուրաց՝ երկո-  
տասան սիւնք երևեցան աս-  
տանօր , այլ ըստ աւանդու-  
թեան բնակչաց՝ եօթն միայն  
երևեալք են . վասն այն ըստ  
թուոց լուսեղէն սեանց եօթն  
եկեղեցիք կառուցան այսր .  
իսկ մասցեալք ի վերայ վե-  
րին վարագայ և Յայնկոյս  
Զորոյ կոչեցեալ սուրբ Աս-

տուածածին եկեղեցւոյ ե-  
րևեալ են . որ է յարեւելս  
հիւսիսակողանն այգեստա-  
նեայց վանայ :

48. Ունենեքերիմ արքայն  
Արծրունի թէպէտի Սերաս-  
տիայ վախճանեցաւ , այլ ա-  
ւանդեն թէ կտակաւ պատ-  
ուիրեալ էր նա թէ զիար-  
մին իւր և թէ Խոշոշ թա-  
գուհոյն փոխադրել ի վա-  
րագ , որոյ անձկով հառա-  
չէր միշտ :

49. Շուշան կամ Շու-  
շանց , է անուն գեղջն՝ որ  
մերձ է կարմրւոր կոչեցեալ  
վանից . և կայ ի նմին փոք-  
րիկ եկեղեցի մի՞ զոր Շու-  
շանից սուրբ Գէորգ կոչեն :

Այս մենաստան յայն սակա  
կոչի կարմրւոր սուրբ Աս-  
տուածածին , քանզի անդ  
երևեալ է Աստուածածին  
ծիրանի և կարմրատեսիլ  
հանդերձիւր . որով առեալ  
է զայս անուն :

50. Զորովանք՝ ի յետին  
ժամանակս կոչեցաւ Սառ-  
նագատու վանք . և ունի վե-  
րիս տաճարս կից միմեանց  
շինեալք յանուն սրբոյ Լու-  
սաւորչին :

51. Զուաստան գիւղ է  
սակաւ ինչ հեռի յԱրտա-  
միտու , և մօտ կուրնկավանից:

52. Զգ եղեցկութիւն զը-  
րից Արամեատու և զառա-  
ջին շինութիւն , որովք վա-  
յելացաց զնա Բ . Արտաշէս ,  
քաջնկարագրէ թովիրա Արծ-  
րունին ի պատմութեան իւ-  
րում :

— 129 —  
Զաշկունս կափուցանէ , հոգին վերաթևէ ,

ԶԱստուած տեսանէ ,  
Եւ ի մահուն կանդնի յաղթական ,  
Վա՛շ իմ հրաշակերտ Կերսեհ :

Յո՛ւշ , յո՛ւշ , Հայոց մանկունք ,  
Յառեցէք զաչս ձեր յայն Գնունի մանուկն .  
Դա գինէհարեալ է , չգիտէ թէ ուր երթայ  
ի հարսանիս թէ ի կոչ մահուն .

Ասէ ես երթամ յԱւարայր ,  
Երթամ յարիւնակոխ հնձան  
Երթամ ձմիլ անդ զերթ ողկոյզ Յիսուսի որթոյն :  
Այդպէս յապատոյժ ձմեցար ,  
Մանուկ դու մանկական գեղովդ  
Սպիտակ և ամրիծ ձորձով :  
Այլ զի՞ չքնաղ , զի՞ վայելուչ կարմրացար ողջամբ  
Որպէս որդան բոսորագոյն .  
Ո՛հ , ի մէջ շուշան ծաղկանց  
ի մէջ արիւնոտ դիականց  
Թուի թէ ննջես ի քուն .  
Զայն տամ քեզ մատուուկ Գնունի ,  
Թափեա զգինիդ ի քէն , Յիսուս կոչէ զքեզ ,  
Զարթի՛ր , զարթի՛ր ,  
Զքեզ հրեշտակը տանին յերկինս ,  
Ո՞ փարեիդ Վահան :

Հաւատք , Հայրենիք , Երկինք  
Զքեզ վառեցին սուրբ նախանձով ,  
Հոգի արդար և զգօն ,  
Արդեօք Յիսուսի հուրն էր այն  
Զոր արկ նա ի քեզ , և դու ողջամբ կիզար ի զոհ  
Յորդահոս թափեցեր զարիւնդ  
Շիշուցեր զմունախանձ բոց  
Ամրարիշտ գենին մոդակրօն ,  
ԶԵԿԵՂԵՑՎՈՅ նոր դրախտ

Եւ սուրբ Գրիդորի հօր

Մշակեալ ձեռատունի .

Այլ քո արիւն շիջոյց ատրուշանին հուր ,

Քանդեաց մոխրապաշտին տուն ,

Պայծառացոյց սուրբ Հաւատոյ ըսյո ,

Եւ դու յաստեղս վերափայեցար .

Ո՞ ցանկալի՞դ Արսէն :

Միթէ մոռանամ զձեղ

Ոստանիկ պայազատք ,

Կապել զձեղ ի մի ընդ խմբին առաքինեաց .

Զձեղ սուրբն Եղիշէ թուեաց և գրեաց .

Զգիտեմ ո՞ր ոխերիմ ձեռն եղծելով ջնջեաց

Զանուան ձերոյ քաջափայլ յիշատակ .

Ցնծացէք , հոգիք , Երկինք զձեղ գիտէ

Եւ ես յերգ անմահ դրոշմեմ յայս արձան .

Որ յԱրտօսայ սարի գագաթէն դէտակն կալեալ

Յարծուաթե հասէք ի յԱրտազ ,

Խաչասուր մագլօք հարեալ խլեցիք

Կոյր Յազկերտի մի զակն .

Անդ երդուայք մահուամիք շիջանիլ

Զի վառ մնասցէ Հայոց տաճարին ջահ

Եւ Աւետարանին աշխարհալոյս ճրագ .

Ո՞ Արծրունի ասպետք

Վահան և Սահակ :

Օ՞ն , զարմացէք , ո՞վ է այն

Որ զմինն ի յաջ և զիմւսն ի ձախ թեն առեալ

Ո՞հ , բաւ չէ ինքն միայն

Զերկուս ևս այլ զոհ ի միասին տանի

Անբաժան մեռանիլ Երթայ ոդեյօժար :

Զայն տուրք վարդան յետուստ է .

Ո՞ւր այդպէս ձեալնթաց լինի անվախ դիմագրաւ .

Միթէ կարծէ՞ ինքն թէ անդրէն Երթայ

Ճառել զիաչէն ի Պարսից ատեան :

Ո՞չ , ո՞չ , մի' այնպէս կարծէք ,

Ես անգիտակ չեմ և դեռ գիշեր չէ .

Գիտեմ ստոյգ թէ ի լցո գնամ .

Ես յառաջադէմ Գարեգին եմ ,

Վաղ մեռանիլ կամիմ ,

Եւ վասն իմ Խաչելոյն կռուիմ ընդ աշխարհ .

Ես Երկնից սիրահար եմ , Երթամ առ սէրն իմ .

Ոչ կացցես , Հայրենիք ,

Ողջամիք կացջիք , սիրելիք .

Զիս և զեղբարս մի' ողբայք

Որբացեալ տուն Արուանձեան :

Բարապան հրեշտակք բացէք զգուռն Երկնից ,

Պատրաստեցէք զերիս պսակս .

Ո՞հ , Երկու հարազատօք

Անկաւ Գարեղին , մեռաւ Գարեգին

Թուա՛ւ ի վեր հոգեակն :

Ամենակալ մեծանուն Տէր Աստուած մեր սուրբ Հարց

Աստուած ներող , գթած ,

Ահա քեզ պատարագ

Վերընծայէ Հայոց աշխարհ ,

Հազար երեսուն և վեց զոհ

Նուիրական սուրբ ողջակիզաց .

Քեզ համոյ լիցի , Տէր , որպէս երբեմն առ Նոյիւ

ի գլուխ անդ Մասեաց .

Տէ՛ս թէ քանի՞ հոտ անոյշ է

Ծուխ զոհից սուրբ Գրիդորի ,

Որ բուրէ առ քեզ յԱրտազու բարձանց :

Տէր , հայր մեր , ո՞ւր է օրն այն

Յոր ներէիր մեզ որպէս Յակովայ տան :

Յո՞յց և այժմ սիրոյդ ծիածան ,

Կամար ած ի վերայ Հայոց լերանց .

Ասա , Տէր գթած , թէ այլ ևս կաշտեալ եմ ընդ քեզ

Ո՞վ տառապեալդ Հայաստան :

## ԻՄ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՑԽՇԱՑԱԿ ՏՕՆԻ ՄՐԲՈՑ ՂԵԼՈՆԴԵԱՆՅՅ

Ո՞վ ես դու, նոր Եղիազար քաջափառ,  
 Հոգի նախանձաւոր և հանդիսաղիր,  
 Զիաշն ի յուսդ առեալ, զԱւետարան ի գիրկդ,  
 Վաղես երթաս վկայել վասն Յիսուսի .  
 Քեզ ոչ ինչ փոյթ է թողուլ զպատարագն ի սեղան  
 Թողուլ զերախայն յաւաղանին մլրտարան,  
 Թողուլ զհարսն ի քօղ և փեսայն ի պսակ .  
 Ո՞հ, միթէ գոյժ եհաս քեզ ի վանանդ,  
 Թէ մոխրապաշտ Մոգք հասին մտին ի Հայաստան .  
 Յազկերտ հրամայէ, քակին Եկեղեցիք, շինին Ատրուշանք .  
 Եւցէ Յիսուս ի տաճարէն, մոցէ Որմիդդ ընդ սատան .  
 Ո՞ն, զինուոր դու զօրավարին նազովրեցւոյ,  
 Կրօն, Հաւատ և Եկեղեցի կոչէ զքեզ ի մարտ .  
 Գնա՛ վկայէ՛ և մեռիք,  
 Ո՞վ սուրբ Ղեռնդէ :

Մեծին Գրիգորի տան և գահին ժառանգ  
 Սուրբ հայրապետ Յովսէփ .  
 Լո՛ւր, ի Վայոց ձորէն հնչէ վա՛յ ի Հայաստան .  
 Ե՛լ, հա՛ր զզանդակ սուրբ տաճարին Եջմիածնի ,  
 Ա՛ռ զգրիչ քո շոյտ գրեա՛ զկոնդակ .  
 Տո՛ւր հրաւէր Հայոց հօտին և հովուաց ,  
 Աշխարհախումբ լինել յԱրտաշատ .  
 Անդ կնքել նոր ուխտ միութեան .  
 Անարատ պահել զհայրենի հաւատ ,  
 Կոռւել վասն կրօնի և վասն Եկեղեցւոյ ազատութեան .  
 Թողլ մեռցին հովիւք ընդ հօտին և հարք ընդ որդիս ,  
 Թողլ ի զոհ երթան վասն Եկեղեցւոյ  
 Յովսէփի իւր ընկերօք, վարդան իւր նիղակակցօք .  
 Թէ բառնի կրօն և Հաւատ  
 Ջի՞ այնուհետև մեղ կեանք և աշխարհ :

Ըովառունեաց աշխարհին հսկող հօտապետ Սահակ ,  
 ՅԱրտօսայ բարձրասար դիտանոցէն  
 Հայի՞ս ընդ գագաթ Մասեաց միգապատ .  
 Տես զիա՞րդ ի կասպիական ծովէն  
 Հողմավար գան սեաւ ամպոց երամք ,  
 Գան խոնին բարդին յԱյրարատ և յԱրտազ .  
 Զըրադաշտ զայրագին գոռայ թափել կարկուտ սաստկահար ,  
 Փշրել գործատունկս Գրիգորի, քանդել սուրբ՝ օրինաց ցանկ .  
 Է՛ջ այտի, հասի՛ր յԱրտաշատ ,  
 Ղեռնդ Յովսէփ և համայն ուխտ Եկեղեցւոյ  
 Քեզ սպասեն անդ, զի լիցիս դու նոցա թարգման .  
 Տեսցուք զի՞նչ խօսի մոլեկրօն Պարսիկ .  
 Թէ ասէ՝ թողէք զջիսուսի Աւետարան  
 Եւ մեր հարց սրբազան Հաւատ ,  
 Հոգի՛ անվեհեր, տուր անդէն քաջ քաջ սրատասկան .  
 Ասա՛ համարձակ թէ Հայք մեռանին  
 Եւ չժողուն հայրենի սուրբ աւանդ :

Մուշէ, Արշէն, և Սամուէլ  
 Քաջագօտի երիցունք և պաշտօնեայք Աւետարանին ,  
 Հաւատար մրցողք յասպարէզ նահատակութեան ,  
 Ընդ Յովսէփայ, Սահակայ և Ղեռնդի .  
 Ո՞վ, շնական հօտարած փոքրիկ հովիւք ,  
 Եղին զանձինս իւրեանց ի վերայ փոքրիկ հօտին .  
 Դո՞ւք էք արդեօք այն փոքրիկն  
 Որ մեծ է յարբայութեան Երկնից .  
 Ո՞ ծառայք աղնիւք ի ստկաւուն հաւատարիմ ,  
 Մտէ՛ք յուրախութիւն Տեառն :

Արքահամ և Քաջաջ սարկաւագունք ,  
 Առէք զրուրվառս մեր և լցէք զհուր ,  
 Խաչանման արկէք զուրարս զկապանս մահուն .  
 Երթամք նախ ի բացօթեայ տաճար  
 Աւարայրի մեռելոց դաշտին ,  
 Ուր կազմին սեղանք զոհից, զենանին սուրբ Գրիգորի գառինք ,  
 Ուր ընդ սուր և ընդ հուր անցեալ

Ողջակիզին Եկեղեցւոյ որդիք .

Սարկաւագունք , խունկ ծխեցէք ի հոտ անոյշ

Շաւարշանայ շիրմաց անմահ մեռելոց .

Օ՞ն թողէք արդ զրողւոց շիրման , երթամք յԱպար աշխարհ ,

Օրհնեմք անդ զհարց գերեզման ,

Եւ զյիշատակ կատարման նոցա :

Զեռսի վեր կալէք , ձեռսի վեր , Յովսէփ Սահակ և Ղեռնդ ,

Երիցունք և սարկաւագունք ,

Ո՞հ , ծերանալց ձեր ժամն եհաս .

Ահա կապեն զձեղ ի գոտի մահուն ,

Ահա վարեն տանին զձեղ ի Պարսս հեռագոյն ,

Ցերկիր նժեն ի քաղաքն նիւշալուհ :

Կամար ձեր չէ մարդարտահեռ , այլ չլթայ է ծանրակուռ .

Ո՞ տայր ինձ համբուրել զկապանս ձեր սուրբ .

Զեօք արձակեցան ազատ որդիք Եկեղեցւոյ .

Ցաղթանակ տարաւ Խաչ , փառաւորեցաւ Յիսուս .

Ո՞վ սուրբ Ղեռնդեանք :

Զարաշուքն այն Դենչապուհ

Ցանձնէք զձեղ Մոդպետին մոլեռանդ ,

Ո՞ր նովին զդթայիւք պրկեալ

Դընէք ի գէճ և խաւարչտին բանտ .

Մարմին էք ձեր զէն , և կոռուելով տոկացիք ,

Վշտակրեալ ի դառն կտտանս ,

Ոչ փշրէք անօթ հոգւոյն ձեր անվկանդ .

Դուք լցու ի խաւարի լցու ծագեցիք անդ :

Մոդպետին խաւարապատ աչաց ,

Ո՞ր ի մահ ննջէք Զրադաշտին ուսմամբ , հրաշիւք բացան աչք ,

Ետես զլոյս Յիսուս , և հաւասաց յԱստուած .

Ո՞վ սուրբ Ղեռնդեանք :

Անցանէք այս Ծաղկազարդ

Մեծ Պասեքին օր գայր հասանէք անդ .

Մերձենայր տակաւ տակաւ զողդոթային Խաչ .

Պիտոյ էք ձեղ Ախոնի վերնատուն մի զարդարեալ համակ ,

Պիտոյ էք ձեղ սուրբ ընթրեաց սեղան և Կենաց բաժակ .

Զայդ պատրաստէք ըստ Մոդպետոն այն հաւատացեալ ,  
ինքնին լինէր ձեզ անդ կոչնատէք և հրաւիրակ .

Զարէի նման հայցէք , լցու և փրկութիւն տանէր իւր տան .  
Լուանայր զոտս ձեր , զջուրն արկանէր զանձամիք .

Մկրտէք և պաշտէք զձեղ իրբև զԱստուծոյ հրեշտակ .

Սեղան կազմէք նահապետական , սեղան բարելից և առատ .  
Ո՞հ , քաղցեալ սովատանջէին հիւրք զքառասուն օր ի բանտ .  
Յանկանալով կերէք , կշտապինա կերէք ,

Ո՞ խաչապատրաստ վկայք ,  
Այդ է ձեր վերջին ընթրիք ,

Վերջին երեկուն և զատկական գառն ,

Ո՞վ սուրբ Ղեռնդեանք :

Եւէք գոհացէք և օրհնեցէք զսեղան .

Հասին ձեզ դահիճք անդութ .

Ո՞հ , հանեալ ի զուարթ սեղանոյդ ,

Կրկին կասեալ վարեն զձեղ ընդ առապար աւազուտ .

Զոյդ զոյդ լըծեալ անագորոյն սպանչաց ,

Քարշեն զձեղ անխնայ ընդ քար և ընդ թուփ .

Դուք իրբև այն մշակին հարօր զերկիք հերկելով

Ուղիղ վարէք տանիք զարբայութեան ակօն .

Իրբև ցորենահատք դուք ցանեալ ցրուիք ,

Որպէս առակէ յիւր բան՝ սերմանահան Յիսուս :

Անդ ի խուժաստան ծածկին վշրանք ոսկերաց ձերոց ի հոդ ,

Աստի Հայոց աշխարհ բուսանիք ցորեան ատոք և հասկաթուռ .

Այսպէս մեռելութիւն ձեր՝ կենդանի և բարգաւաճ

արար զորդիս Եկեղեցւոյ ,

Ո՞վ սուրբ Ղեռնդեանք :

Դենչապուհ յոտին կայ սուր ընդ մէջ թերաքամ ,

Առ նմին կանգնին դահիճք դաժանադէմ մերկասուր

պատրաստ .

Կանգնին նաև առ ձեօք երկնահրաւէք հոգէաւանդ .

հրեշտակք .


Ժամ եհաս , ո՞հ , զոյին և զենման ,

Կափուցէք , ո՞վ Սուրբք , առ աշխարհ պահ մի զաչս ձեր ;

Ցեսցուք զի՞նչ առնէ Յազկերտ և աշխարհ  
Ցետ բառնալց աստի զձեր մահկանացու կեանք :  
Ո՛հ, զքեղ նախանուէր զենուն, Սահակ զօրաւորդ ի բան,  
Որ լուէ քո ճարտար լեզուն ազատ և թարգման .  
Յառաջ մատի՛ր ի սուր, Ղւռնդ ճայնէ քեղ,  
Ո՛վ հայրապետ Յովսէփ ,  
Ասէ, պատուեմ զքեղ աստ, դու վեհ ես քան զիս .  
Յառաջ մատիք և դուք, Երիցունք և սարկաւագունք,  
Մի՛ վարանիք, տուք զձեր պարանոց, առէք զանմահութիւն .  
Զմեռանիմ ես Ղւռնդ, մնամ ձեզ յետին տրուպ,  
Մինչև մի մի յուղարկեմ զձեղ առ Յիսուս,  
Ո՛ իմ խաչակից Վիայք, այդ է իմ սուրբ ուխտ :

Իսկ դու զի՞ առնես, հոգի՛ զօրավիդ ,  
Հոդի՛ հզօր և մինչ ի մահ անյաղթ .  
Գընկերս քո ամէն ետուր ի սրոյ բերան .  
Միթէ մնա՞ց այլ ևս քեղ նոր ինչ կասկած .  
Եատիր և դու ի սուր, կան սպասեն քեղ մարտիրոս մշակք  
Խմբովին երթալ առ վարձատուն Յիսուս և կալ յանդիման,  
Ասել համարձակ . Տէ՛ր, վասն Հայոց աշխահին մեռաք,  
տուր զվարձ մեր արեան .

Առէք զձեր պսակն անեղծ անթառամ ,  
Ո՛վ իմ աղնիւ ծառայք :  
Գրիգորէ, Ներսէս և Սահակ ,  
Առէք ընդ ձեզ զթունիկն ձեր զկարմիր վարդան .  
Պսակազգեստ շքով ելէք ընդ առաջ յաղթական  
Ահա գան առ ձեզ Ղւռնդ եանց հարք, որ ընդ որդիս մեռան .  
Առէք տարէք յանդիման կացուցէք  
Տուք զաղերսագիր և յիշեցէք զտառապեալ Հայաստան :



10973

52



2073



